Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Աննա Մակարյան

## Երախտիքի խոսքեր

*Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում դրամաշնորհ N 17358 : Հոդվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:*

Այս զեկույցը պատրաստվել է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպությունից ստացված հանրային քաղաքականության ուղղված հետազոտական դրամաշնորհի շրջանակներում:

**Հետազոտության թիմ՝**
Աննա Մակարյան (հիմնական հետազոտող)
Արմինե Հակոբյան (հետազոտության օգնական)

**Փորձագետ՝**
էկոնոմետրիկ գնահատումների գծով՝
Հարություն Թերզյան

© Ա.Ռ. Մակարյան, 2013թ.
© Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, 2013թ.

Բովանդակություն

Համառոտագիր ....................................................................................................................4

Ներածություն ........ 9
ԳԼՈՒԽ 1. ՀՀ իրական հատվածի խոցելիությունը ՀՖՃ-ի փոխանցման ուղիների նկատմամբ և սկզբնական պայմանների դերը ........ 10
ԳԼՈՒԽ 2. Դեպի ՀՀ իրական հատված ՀՖՃ-ի փոխանցման ուղիները ........ 13
2.1 Ջբոսաշրջություն ........ 13
2.2 Ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ և գործոնային եկամուտ ........ 16
2.3 Ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտներ ........ 19
2.4 Օտարերկրյա ուղղակի ներդրումներ ........ 20
2.5 Ապրանքների արտահանման հիմնական խմբեր ........ 23
ԳԼՈՒԽ 3. Տնտեսության հիմնական սուբյեկտների սկզբնական պայմանները ........ 29
3.1 Տնային տնտեսությունների սկզբնական պայմաններ ........ 29
3.2 Մասնավոր ընկերությունների սկզբնական պայմաններ ........ 32
3.3 ՀՀ կառավարության սկզբնական պայմաններ ........ 34
ԳԼՈՒԽ 4. ՀՀ տնտեսության արտաքին շոկերից խոցելիության գնահատում ........ 39
4.1 Խոցելիության գնահատում ........ 39
4.2 Շոկերի փոխանցման ուղիների դերը ճգնաժամից հետո ........ 42
Եզրակացություններ և տնտեսական քաղաքականությանն ուղղված առաջարկություններ ........ 46
Գրականության ցանկ ........ 48
Հավելված 1 ........ 51
Հավելված 2 ........ 53
Հավելված 3 ........ 54
Զեկույցում օգտագործված հապավումներ ........ 57

## Համառոտագիր

*«Բյուջեի փոքր պակասուրդ կամ ավելցուկ ունեցող երկրները, սովորաբար ընթացիկ հաշվի փոքր չափի պակասուրդ կամ ավելցուկ ունեցող երկրներն են..., որոնք ունեն ուժեղ սկզբնական դիրք, մնացած այլ հավասար պայմանների դեպքում, կկարողանան համեմատաբար ավելի հեշտ հաղթահարել համաշխարհային տնտեսական անկմամբ պայմանավորված շոկերը,.. խթանող մակրոտնտեսական և աղքատության նվազեցման ավելի ընդգրկուն քաղաքականություն իրականացնել» (ՀԲ, 2008թ. էջ 3-4):*

2008թ. առաջացած Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը (ՀՖՏ) իր ազդեցությունը թողեց աշխարհի գրեթե բոլոր երկրների վրա: Տարբեր երկրներում ազդեցության աստիճանը տարբեր էր, որը պայմանավորված էր տվյալ երկրի այլ երկրների հետ «իրական», «ֆինանսական» կապերով, մինչ ճգնաժամը մակրոտնտեսական դիրքով, որոնք էլ որոշելու էին տվյալ երկրի կառավարության կողմից որդեգրած հակաճգնաժամային և աղքատության հաղթահարմանն ուղղված միջոցառումները:

Առաջարկել է «ՀՖՃ-ի մակրոտնտեսական ազդեցություն՝ խոցելիություն սկզբնական պայմանների առկայությամբ» հայեցակարգային մոդելի, որի շրջանակում զեկույցն անդրադառնում է դեպի ՀՀ իրական հատված ՀՖՃ-ի փոխանցման հինգ մեխանիզմներին (արտահանման 4 ապրանքների խումբ, զբոսաշրջություն, ուղղակի օտարերկրյա ներդրումներ (ՕՈՒՆ), ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտներ և գործոնային եկամուտներ և ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ), տնտեսության հիմնական մասնակիցների կամ սուբյեկտների (տնային տնտեսություններ, մասնավոր ընկերություններ և կառավարություն) սկզբնական պայմաններին: Առաջարկված մոդելի հիման վրա կառուցվել էկոնոմետրիկ մոդել՝ ՀՖՃ-ի փոխանցման ուղիների կամ շոկերի աղբյուրների իրական ՀՆԱ-ի վրա ազդեցություն գնահատելու համար:

### ՀՖՃ-ի փոխանցման մեխանիզմներ կամ ուղիներ

***Զբոսաշրջություն***

ՀՀ առանձնահատկությամբ պայմանավորված ճգնաժամի տարում զբոսաշրջիկների թիվը աճեց, ինչը շարունակվեց նաև 2010-2011թթ.: Այցելուների թվի աճը ուղեկցվել է ՀՀ-ում ծառայությունների և ապրանքների վրա կատարվող ծախսերի գումարային աճով, մինչդեռ մեկ այցելուի հաշվով միջին դոլարային ծախսերը էապես չեն փոխվել 2009-2011թթ, իսկ 2011թ. դրամով արտահայտված իրական ծախսերը գրեթե նույնն էին ինչ-որ 2008թ: 2012-2013թթ. ընդհանուր առմամբ ակնկալվում է այցելուների աճ, սակայն հնարավոր է ՀՀ-ում հանգրվանելու ավելի կարճ ժամկետներ կամ դրանց պահպանում արձանագրվի, որի հետևանքով մեկ զբոսաշրջիկի հաշվով ՀՀ-ում ծառայությունների և ապրանքների վրա կատարվող դոլարային արտահայտությամբ ծախսերը կնվազեն:

***Ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ և գործոնային եկամուտ***

Գործոնային եկամուտները ճգնաժամի տարում կտրուկ անկում արձանագրելուց հետո 2011թ.-ին գերազանցեցին նախաճգնաժամային մակարդակը, մինչդեռ այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտները և աշխատողների դրամական փոխանցումները նույնիսկ չեն հասել 2007թ. մակարդակին: Այլ ընթացիկ մասնավոր տրանսֆերտների ներհոսքը արտացոլել է այլ երկրներում զարգացումները (տրանսֆերտներ ուղարկող), և դրական միտում է արձանագրվել 2009թ. անկումից հետո միայն երկու տարի անց: ՀՀ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների և գործոնային եկամուտների աճ կակնկալվի 2012-2013թթ., սակայն աճը չի լինի կտրուկ, քանի որ կանխատեսվող տնտեսական աճի տեմպերը այլ երկրներում այդքան էլ բարձր չեն, եթե չարձանագրվի արտագնա աշխատանքի մեկնողների թվի զգալի աճ կամ էլ այլ երկրներում բնակվող ազգականների կամ ընկերների կողմից ուղարկվող գումարների աճ և այլն:

*Ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտներ*
Ճգնաժամի տարում ՀՀ կառավարությանը տրամադրվող մարդասիրական օգնության նվազեցմանը զուգընթաց արձանագրվել է տեխնիկական և ֆինանսական աջակցության աճ, իսկ ընդհանուր ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտների ծավալը 2011թ.-ին կրկնակի անգամ գերազանցում էր 2008թ. գրանցված մակարդակը: Քանի որ աճը 2011թ. հիմնականում պայմանավորված է եղել կտրուկ ֆինանսական օգնության աճով, ապա 2012-2013թթ. դժվար է կանխատեսել ինչպիսին կլինի աճը և ինչպես կփոխվեն ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտների չափը:

*Օտարերկրյա ուղղակի ներդրումներ*
Իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալը կրճատվեց ճգնաժամի տարում և 2010 թվականին, իսկ 2011թ. այն գերազանցեց 2007թ. մակարդակը, բայց ոչ 2008թ. մակարդակը: 2009-2011թթ. Իրական հատվածում կատարված ՕՈՒՆ-ի հոսքերի ծավալները ՀՀ իրական հատված հիմնականում եղել են «ռեսուրսների աղբյուր փնտրող» և «սպառման շուկա փնտրող» օտարերկրյա ընկերությունների կողմից, իսկ ՕՈՒՆ-ի հոսքերի կառուցվածքը որոշակիորեն արտացոլել է ՀՀ-ի արտահանման դինամիկան: 2012թ. ՕՈՒՆ-ի ծավալների անկում հնարավոր է գրանցվի: 2013-2015թթ. ՕՈՒՆ-ի ծավալները կախված կլինեն նրանից, թե որքան հաջողված կլինի ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը, և հիմնականում որ ոլորտներում կլինեն ներդրումները:

*Ապրանքների արտահանման հիմնական խմբեր*
Ճգնաժամի տարում բոլոր արտահանման 4 հիմնական խմբերը անկում գրանցելուց հետո 2010-2011թթ. աճ արձանագրեցին, սակայն աճեց նաև տնտեսության որոշ ոլորտների խոցելիության աստիճանը այս ապրանքների ծավալներից: 2011թ. ՀՀ ապրանքների արտահանման մեջ 7 ապրանքին[1] բաժին էր ընկնում արտանահանման 68.6%: Հիմնական ապրանքատեսակին՝ պղնձի հանքաքարի խտանյութին բաժին էր ընկնում 19.5%-ը, իսկ 4 ապրանքատեսակներին միասին, որոնք ներկայացնում են հանքագործական և մետաղագործական արտադրությունները՝ 43.7%: Այս երկու արդյունաբերությունների արտադրանքի արտահանումը Հայաստանը բավականին խոցելի է դարձնում Համաշխարհային զարգացումների նկատմամբ (համաշխարհային գների փոփոխություն)՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության տատանումներով: 2010-2011թթ. պատրաստի արտադրանքի արտահանվող այլ ապրանքների աճ արձանագրվեց, ինչը արտահանվող ապրանքների դիվերսիֆիկացիա կարող է ապահովել: 2012թ. պատրաստի արտադրանքի արտահանումը աճ կարձանագրի, որը ևս կշարունակվի 2013թ.:

### Տնտեսության հիմնական մասնակիցների կամ սուբյեկտների սկզբնական պայմաններ

*Տնային տնտեսություններ*
2006-2008թթ. տ/տ-ների մոտ ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալների աճը կարող էր փաստել այն մասին, որ տ/տ-ները դժվարություններ կունենան հաղթահարելու ճգնաճամի բացասական հետևանքները, տարբեր եկամուտների աղբյուրներից ստացվող գումարների կրճատման պարագայում: Որպես ՀՀ առևտրային բանկերի կողմից հիմնականում զգուշավոր ռազմավորություն որդեգրելու հետևանք տ/տ-ներին տրված վարկերի ծավալը 2009թ. կրճատվեց, հիմնական վարկատեսակը՝ սպառողական վարկերի ծավալը գրանցեց մոտ 22% անկում, իսկ 2010թ. տ/տ-ների կախումն այս աղբյուրից աճեց՝ որպես ճգնաժամի բացասական ազդեցության հաղթահարման ռազմավարություն: 2011թ. ՀՀ առևտրային բանկերի կողմից տ/տ-ներին սպառողական վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված էր վարկերի չափերի փոփոխությամբ, ինչպես նաև հիփոթեքային վարկերի ծավալների աճով, ինչը փաստում է այն մասին որ հիմնականում այս աղբյուրից օգտվել են վարկունակ տ/տ-

[1] Պղինձի հանքաքար, խտանյութ, երկաթամիահալվածք, պղինձ չզտված, պղնձե անոդ էլ. զտման համար, ալյումինե փայլաթիթեղներ<0,2մմ, էլեկտրաէներգիա, կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր, ադամանդե քար:

ները: 2012-2013թթ. իրական աշխատավարձերի կամ այլ եկամտի աղբյուրներից իրական աճ չարձանագրելու պարագայում տ/տ-ները դժվարություններ կունենան պահպանելու սպառման մակարդակը և 2014-2015թթ. այլ տիպի շոկերին դիմակայել:

*Մասնավոր ընկերություններ*
2006թ. նկատմամբ 2008թ. մասնավոր ընկերությունների կողմից ՀՀ առևտրային բանկերից վերցված վարկերի ծավալների ավելի քան կրկնապատկումը, ընդհանուր առմամբ, դժվարություններ կստեղծեր մասնավոր ընկերությունների մոտ հաղթահարելու ճգնաժամի բացասական ազդեցությունը տ/տ-ների վերջնական սպառման ուղղված ծախսերի կրճատման պարագայում, եթե կառավարությունը չորդեգրեր համապատասխան ընդլայնողական քաղաքականություն: Ճգնաժամի տարում մասնավոր ընկերությունների վարկերի ծավալը ՀՀ առևտրային բանկերից աճեց 37%-ով 2008թ. նկատմամբ, հիմնականում պայմանավորված խոշոր և միջին կազմակերպությունների բանկերին վարկերի և փոխառությունների գծով պարտքերով, թեպետ դրանց միայն մոտ 22%-ն է 2009թ. վնասով աշխատել: 2011թ. և արդեն 2012թ. կեսին ՀՀ առևտրային բանկերի կողմից մասնավոր ընկերություններին տրված վարկերի ծավալների կտրուկ աճը 2013-2015թթ. կսահմանափակի ընկերությունների ապագա տնտեսական շոկերին դիմակայելու կարողությունը, որն էլ իր հերթին կախված է լինելու մասնավոր ձեռնարկությունների իրական արտադրողականության աճով:

*Կառավարություն*
Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի սկիզբ առնելու պահին Հայաստանը կխուսափեր «կրկնակի» կամ «եռակի» համարվող ճգնաժամերից, սակայն ազդեցությունը տնտեսության վրա կախված կլիներ երկրի վիճակից, և կառավարության կողմից «իրական» կապերով փոխանցված արժութային ճգնաժամի բացասական ազդեցությունը մեղմելու արդյունավետ միջոցառումների իրականացումից: Որպես ՀՖՃ-ի հետևանք արտաքին պետական պարտքի չափի աճը անխուսափելի էր 2008թ. նոյեմբերի դրությամբ՝ հաշվի առնելով ՀՀ ընթացիկ հաշվի և բյուջեի պակասորդի մակարդակը: Արժութային ճգնաժամը բնակչության իրական եկամուտների նվազման պարագայում հանգեցրեց ներմուծման ծավալների կրճատմանը, ինչն էլ իր հերթին բերեց ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կրճատմանը: Կառավարությունն այս իրավիճակը հաղթահարեց պետական պարտքի աճի միջոցով 2009թ.: Պակասորդի այլ աղբյուրներից ֆինանսավորմամբ շարունակվող սոցիալական ուղղվածության ծախսերի աճը (ընդհանուր առմամբ) 2010-2011թթ. հանգեցրեց արտաքին պետական պարտքի ավելի քան կրկնապատկմանը (31.12.2011թ. դրությամբ) ճգնաժամի սկզբի համեմատ, ինչն էլ կարող է սահմանափակել կառավարության կարողությունը՝ հաղթահարել հետագա տնտեսական շոկերը, եթե դրանք տեղի ունենան 2013-2015թթ.:

### ՀՀ տնտեսության խոցելիությունը արտաքին շոկերից

Դեպի ՀՀ իրական հատված ՀՖՃ-ի փոխանցման ուղիները, տարբեր կերպ են ազդել ՀՀ տնտեսության վրա, իսկ ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա ճգնաժամից հետո փոխվել է, ինչպես նաև փոխվել է դրանց կարևորությունը տնտեսության համար: Սույն հիպոթեզը ստուգելու համար կատարվել է փորձ.

***Հիպոթեզ՝*** *Արդյո՞ք փոխվել են, թե ո՞չ դեպի ՀՀ իրական հատված ՀՖՃ-ի փոխանցման ուղիները և դրանց ազդեցությունը նախքան ճգնաժամը և դրանից հետո:*

Գնահատման ժամանակ եռամսյակային տվյալներ են օգտագործվել: Նույն հավասարումն գնահատվել է երկու անգամ 2000:1-2008:2 և 2000:1-2012:2 ժամանակահատվածի համար նվազագույն քառակուսիների մեթոդով (OLS):

Մոդելը սահմանվում է որպես՝

*Իրական ՀՆԱ = f (զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների փոխանցումներ, ներառյալ սահմանային աշխատողների, այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտներ, պատրաստի սննդի արտադրանքի արտահանում, հանքահումքային արտադրանքի արտահանում, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի արտահանում, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանում, օտարերկրյա զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ից գնված ապրանքների կամ իրենց մատուցած ծառայությունների վրա կատարված ծախսեր, ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալը)*

<u>Խոցելիության գնահատում</u>

Նախքան Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի անկումը պայմանավորված էր լինելու մի շարք շոկերով (այլ մասնավոր տրանսֆերտներ, ՕՈՒՆ, արտահանման հիմնական խմբեր (հանքահումքային և մետաղական արդյունաբերություն), իսկ ՀՀ տնտեսությանը խոցելիության աստիճանը արտաքին շոկերի հանդեպ բավականին բարձր էր: Ճգնաժամից հետո իրական ՀՆԱ-ի անկումը կարող է բացատրվել այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի և պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների կրճատմամբ 2013-2014թթ., սակայն ընթացիկ հաշվի բաղադրիչներից բացի աճել է նաև այլ գործոնների դերը, որոնք անկման կհանգեցնեն: ՀՀ տնտեսության խոցելիությունը օտարերկրյա աշխատանքի շուկաների զարգացումներից ճգնաժամից հետո աճել է: Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի և պատրաստի սննդի խմբերի արտահանման տեսանկյունից խոցելիությունը համաշխարհային տնտեսության, ինչպես նաև ՌԴ տնտեսական աճի տեմպերից մնում է որոշակիորեն բարձր:

<u>Շոկերի փոխանցման ուղիների դերը ճգնաժամից հետո</u>

2013-2014թթ. զբոսաշրջիկների ծախսերի աճը կշարունակեն վիճակագրորեն ոչ նշանակալի ազդեցություն ունենալ իրական ՀՆԱ-ի վրա, մինչդեռ 2015թ.-ից դա կախված կլինի թե ՀՀ այցելուների աճը որքանով կխթանի հիմնականում տեղական ապրանքների և  ծառայությունների սպառման ավելացմանը: 2013թ. ՕՈՒՆ-ները հիմնականում կլինեն վերաներդրված շահույթի տեսքով եթե նոր և խոշոր ներդրումներ անող ընկերություններ ՀՀ մուտք չգործեն, իսկ եթե 2014թ.-ից ի վեր ՀՀ-ին հաջողվի հիմնականում ներգրավել «արդյունավետություն փնտրող» ընկերություններ, ապա դա դրական ազդեցություն կունենա իրական ՀՆԱ-ի աճի վրա: 2013-2014թթ. զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների փոխանցումների ավելացումը հիմնականում կշարունակի նվազեցնել իրական ՀՆԱ-ի վրա բացասական ազդեցությունը (վիճակագրորեն նշանակալի) ներկա միտումների պահպանման դեպքում, իսկ 2015թ.-ից սկսած ազդեցության փոփոխությունը հիմնականում կախված կլինի փոխանցված գումարների դասակարգումից: 2013թ. այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների աճը վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն կունենա իրական ՀՆԱ-ի վրա այլ երկներում տեղական աշխատանքի շուկաների համեմատաբար կայուն լինելու պարագայում, իսկ արդեն միջնաժամկետ ժամանակահատվածում ազդեցության փոփոխությունը պայմանավորված կլինի միգրացիայի աճի տեմպերից: 2013թ. պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը կշարունակի վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն ունենալ իրական ՀՆԱ-ի վրա, սակայն արդեն միջնաժամկետ ժամանակահատվածում ազդեցության չափի փոփոխությունը կախված կլինի հիմնականում ՌԴ աճի տեմպերից, եթե տեղի չունենա արտահանվող շուկաների և տեսականու ավելի լայն դիվերսիֆիկացիա: Միջնաժամկետ ժամանակահատվածում, եթե համաշխարհային տնտեսության խորը անկում չգրանցվի, ապա ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման աճը կշարունակի վիճակագրորեն նշանակալի դրական ազդե-

ցություն ունենալ, իսկ ազդեցության չափը կախված կլինի ծավալների փոփոխությունից:

**Տնտեսական քաղաքականությանն ուղղված հիմնական առաջարկություններ**

ՀՀ տնային տնտեսությունների և մասնավոր ընկերությունների կողմից ՀՀ բանկերից վերցված վարկերի աճի պարագայում էապես կարևորվում են ՀՀ կառավարության սկզբնական պայմանները տնտեսության խոցելիությունը արտաքին շոկերից մեղմելու և ընդլայնողական քաղաքականություն իրականացնելու տեսանկյունից աղքատության մակարդակի կտրուկ աճը կանխելու նպատակով: Տնտեսական հիմքի բազմազանության ապահովումը՝ դիվերսիֆիկացված արտահանում (ապրանքների և աշխարհագրական շուկաների առումով), որի հիմքում ցածր տեխնոլոգիական արդյունաբերական զարգացումն է, ինչպես նաև տեղական ապրանքների և ծառայությունների սպառման ծավալների աճը, կարող են նվազեցնել ՀՀ տնտեսության խոցելիությունը արտաքին շոկերի հանդեպ:

Հետևաբար միջնաժամկետ ժամանակահատվածում առաջնայնությունները պետք է լինեն՝

1. Մետաղագործական հանքարդյունաբերությունից և արտադրությունից կախման նվազեցումը՝ առաջնայինը աջակցելով այլ ոլորտներին՝ տնտեսական հիմքի բազմազանության ապահովման միջոցով տնտեսության ճկունությունը (resilience) բարձրացնելու նպատակով:
2. Հաշվի առնել Իսրայելի, Հարավային Կորեայի և Թայվանի փորձը, ինչպես նաև այլ քաղաքների աղքատության (2011թ.՝ 43.6%), և Երևանում գործազրկության (2011թ.՝ 30.2%) բավականին բարձր մակարդակը և առաջնայնությունը տալ թեթև արդյունաբերությանը և այլ աշխատատար, ցածր-տեխնոլոգիական ոլորտների զարգացմանը մի շարք սոցիալական խնդիրներ լուծելու նպատակով:
3. Խրախուսել և իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կհանգեցնեն տեղական արտադրանքի սպառման ծավալների աճին ՀՀ տ/տ-ների, ընկերությունների, պետական հաստատությունների, ինչպես նաև ՀՀ-ում զբոսաշրջիկների կողմից՝
   - պետական գնումների քաղաքականություն, որտեղ առաջնայնությունը հիմնականում տրվում է տեղական արտադրանքին և ծառայությունների մատուցմանը՝ տեղական/ներքին շուկայում մրցակցությունն ուժեղացնելու նպատակով,
   - Հայաստանի բրենդինգ, օտարերկրյա զբոսաշրջության համար կարևոր երկրներում ՀՀ ավելի շատ այնպիսի զբոսաշրջիկների ներգրավումը, որոնք հիմնականում կլինեն Երևանից դուրս և կսպառեն տեղական արտադրանք,
   - հարկային արտոնությունների տրամադրում իմպորտի փոխարինմամբ զբաղվող տեղական արտադրողների համար,
   - գովազդային արշավներ տ/տ-ների կողմից տեղական արտադրանքի սպառման ծավալները մեծացնելու, որը չի խաթարի մրցակցությունը տեղական շուկայում:
4. Հիմնականում նպաստել ցածր տեխնոլոգիական ոլորտներում «արդյունավետություն փնտրող» օտարերկրյա ընկերությունների ներգրավմանը:

# Ներածություն

*«Տնտեսական աճը պահպանելու և աղքատության կրճատմանը ուղղված զարգացող երկրների քաղաքականություններ նախաձեռնելու կարողությունը մասամբ կախված է լինելու իրենց սկզբնական մակրոտնտեսական վիճակից և իրենց հավանական շոկերից խոցելիության աստիճանից, ինչպես նաև իրենց պետական ֆինանսավորման հնարավորությունից»*

*ՀԲ (2008թ., էջ 3)*

Նախքան 2009թ. տարբեր փոխանցված (contagion)[2] արժութային ճգնաժամեր էին տեղի ունեցել զարգացած և զարգացող երկրներում, ինչպես նաև մի քանի համաշխարհային տնտեսության անկումներ էին արձանագրվել 1960թ. ի վեր[3]: Սակայն 2008թ. սեպտեմբերի 15-ին սկսած Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը (ՀՖՏ) տարբերվելու էր նրանով, որ համաշխարհային տնտեսությունը ավելի ինտեգրացված էր դարձել և «իրական», «ֆինանսական» փոխանցման ուղիները (արտաքին շոկերի աղբյուրներ) ազդեցություն կունենային գրեթե բոլոր երկրների վրա՝ սկզբում ազդեցությունը փոխանցվելու էր մի քանի երկրի վրա, այնուհետ այլ երկրների: Տարբեր երկրներում ազդեցությունը տարբեր էր լինելու, կախված նրանից թե ինչպիսի կապեր (իրական, ֆինանսական) ուներ տվյալ երկիրը այլ երկրների հետ, և ինչպիսին էր մակրոտնտեսական վիճակը (բյուջեի դեֆիցիտ, ընթացիկ հաշվի պակասուրդ) նախքան ճգնաժամը, ինչն էլ որոշիչ էր լինելու թե ինչպիսի միջոցառումներ և քաղաքականություն կորդեգրեր տվյալ երկրի կառավարությունը տնտեսական անկումը և աղքատության մակարդակի աճը կանխելու ուղղությամբ: Մյուս կողմից երկրի ներսում ճգնաժամի սոցիալական ազդեցությունը տնային տնտեսությունների վրա կախված էր լինելու նրանից թե իրենք որքան խոցելի էին երկրի ներսում սոցիալական ազդեցությունը տարածող ճգնաժամի փոխանցման ուղիների նկատմամբ (աշխատանքի շուկա, գներ և այլն) և ինչպիսի վիճակում էին նախքան ճգնաժամը (պարտքերի և վարկերի առկայություն և այլն), ինչն էլ որոշիչ կլիներ տնային տնտեսությունների կողմից որդեգրված ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունների ընտրության գործում:

Առաջին գլուխը դիտարկում է հեղինակի կողմից առաջարկված «ՀՖՃ մակրոտնտեսական ազդեցություն՝ խոցելիություն սկզբնական պայմանների առկայությամբ» հայեցակարգային մոդելը, որտեղ կարևորվում է ՀՀ տնտեսության և նրա հիմնական մասնակիցների կամ սուբյեկտների խոցելիությունը արտաքին շոկերի հանդեպ, ինչպես նաև նրանց սկզբնական պայմանները՝ ճգնաժամի տնտեսական ազդեցության գնահատման գործում: Երկրորդ գլուխը նկարագրում է ՀՖՃ-ի ազդեցության փոխանցման մեխանիզմները (արտահանման 4 ապրանքների խումբ, զբոսաշրջություն, դեպի ՀՀ իրական հատված ՕՈՒՆ-ի ներհոսքը, ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտներ, և գործոնային եկամուտներ և ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ) և դրանց ազդեցությունը, իսկ երրորդ գլուխը անդրադառնում է տնտեսության հիմնական մասնակիցների (կառավարություն, տնային տնտեսություններ և մասնավոր ձեռնարկություններ) ճգնաժամի տեսանկյունից սկզբնական պայմաններին (բյուջեի դեֆիցիտ, ընթացիկ հաշվի հաշվեկշիռ, պարտքեր և վարկեր): Չորրորդ գլխում փորձ է կատարվել գնահատել ՀՀ տնտեսության խոցելիության չափը՝ իրական ՀՆԱ-ի վրա ճգնաժամի փոխանցման ուղիների ազդեցությունը նախքան ճգնաժամը և ճգնաժամից հետո:

[2] Ֆրեցշերը (Fratzscher, 2002թ., էջ1) որպես փոխանցված ճգնաժամ սահմանում է «ճգնաժամ, որը փոխանցվել է տվյալ երկիր, որի պատճառը ճգնաժամի մեջ հայտնված երկրի մակրոտնտեսական հիմքերի խարխլումն էր (չնայած նրան, որ իհարկե, ի վերջո, ազդեցությունն է թողնելու երկրի մակրոտնտեսական հիմքի վրա) այլ երկրի «մոտիկությանը», որտեղ ճգնաժամը տեղի է ունեցել»: Հեղինակը առաջարկում է նոր մեթոդաբանություն 3 տիպի «մոտիկությունը», կամ փոխանցման ուղիները գնահատելու համար:

[3] Ֆրոյնդ-ը (Freund, 2005թ.) որպես համաշխարհային տնտեսության անկամ տարիներ նշում է 1975թ., 1982թ., 1991թ., և 2001թ. իր կողմից առաջարկվող մեթոդաբանությամբ բացահայտված:

## ԳԼՈՒԽ 1. ՀՀ իրական հատվածի խոցելիությունը ՀՖՃ-ի փոխանցման ուղիների նկատմամբ և սկզբնական պայմանների դերը

2008թ. տարածվող Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը (ՀՖՃ) կարևորելու էր դրամավարկային քաղաքականության դերը զարգացող երկրներում, իսկ այդ քաղաքականության իրականացումը ճգնաժամի պարագայում կախված էր լինելու նախքան ճգնաժամը արձանագրված սկզբնական վիճակով (բյուջեի դեֆիցիտ և ընթացիկ հաշվի պակասուրդ): Հետևաբար պետական բյուջեի չափի ինչպես նաև պետական ծախսերի ուղղվածության փոփոխության վրա ազդելու էին հենց այդ պայմանները (ՀԲ, 2008թ.):

Իսլեմը (2009թ.) հիմք ընդունելով ՀԲ (2008թ. և 2009թ.) և ԱՄՀ (2009թ.a) զեկույցները ինչպես նաև այլ հրապարակումներ, առաջարկել է դիտարկել զարգացող երկրների խոցելիությունը Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի նկատմամբ երկրի սկզբնական պայմանների և այդ ճգնաժամի ազդեցությունը փոխանցող ուղիների կապի ներքո՝ որպես գործիք առաջարկելով «Խոցելիությունից դեպի ճգնաժամ» բնութագրիչների համատեքստը (տես Աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. «Խոցելիությունից դեպի ճգնաժամ» բնութագրիչների համատեքստ (VTCA)**

| Բնութագրիչներ՝ նախնական պայմաններ | Բնութագրիչներ՝ արտաքին կապեր |
|---|---|
| Տնտեսական աճի էությունը և կառուցվածքը, աշխատանքի շուկայի վիճակ | Կախվածությունը որոշ արտաքին շուկաներից (օրինակ՝ «G3» երկրներ, նավթով հարուստ Պարսից ծոցի երկրներ) |
| Աշխատաշուկայի տեղեկատվական համակարգի ճգնաժամի ազդեցությունը մոնիտորինգ անելու կարողությունը | Կախվածությունը հիմնական արտահանվող ապրանքախմբերից (օրինակ՝ էլեկտրոնիկա, մետաղներ, նավթ, գյուղմթերք, զբոսաշրջություն) և զգայունություն առևտրի պայմանների փոփոխությունից |
| Սոցիալական պաշտպանության համակարգի կարողությունը մեղմելու արտաքին շոկերի ազդեցությունը աղքատ և խոցելի տնային տնտեսությունների վրա: | Կախվածությունը այլ երկրներ միգրացիայից և դրամական փոխանցումներից |
| Ներքին ֆինանսական համակարգի վիճակը (օրինակ՝ արտարժույթով պարտավորությունները) | Կախվածությունը մասնավոր ֆինանսական հոսքերից |
| Պետական բյուջեի դեֆիցիտը և առևտրային հաշվեկշռին վերաբերող հաշիվների անհավասարակշռությունները | Կախվածությունը պետական օժանդակությունից |

Աղբյուր՝ Իսլեմ (2009թ.,էջ 8)

Առաջարկված համատեքստը ներառում է ինչպես «իրական», «ֆինանսական», այնպես էլ երկրի ներսում սոցիալական ազդեցության տարածման փոխանցման ուղիները, սկզբնական պայմանները, որոնցով էլ պայմանավորված է երկրի վրա ընդհանուր ազդեցությունը՝ սոցիալական, իրական և ֆինանսական հատվածների վրա: Այս համատեքստը կարելի է նաև օգտագործել նաև երկրի արտաքին շոկերի նկատմամբ՝ ճգնաժամերի ազդեցությունը կլանելու տեսանկյունից երկրի ճկունության (resilience) աստիճանը գնահատելու համար: Սակայն ՀԲ-ի (2008թ.) ինչպես նաև Իսլեմի (2009թ.) մոտեցման մեջ շեշտադրված է պետական բյուջեի չափի ինչպես նաև պետական ծախսերի ուղղվածության փոփոխության կարողությունը, ինչը իր հերթին կախված է լինելու նաև տնային տնտեսությունների և ընկերությունների սկզբնական պայմաններից: Տնային տնտեսությունների մոտ վարկերի և պարտքերի առկայությունը կսահմանափակի նրանց կարողությունը հաղթահարելու ճգնաժամի բացասական ռազմավարություններ որդեգրելուց: Իսկ ընկերությունների մոտ նախքան ճգնաժամը վերցված վարկերը

և/կամ պարտքերը ընկերությունների փակման, լուծարման, աշխատակիցների կրճատման պատճառ դառնալ: Հետևաբար տնային տնտեսությունների և ընկերությունների սկզբնական պայմանները ևս որոշիչ են լինելու տնտեսական աճի մակարդակի պահպանման և պետական բյուջեի չափի և ծախսերի ուղղվածության փոփոխության կարողության համար աղքատության մակարդակի ավելացումը կանխելու տեսանկյունից:

**Աղյուսակ 2. Համաշխարհային ֆինանսատնտեսական անկման կամ ճգնաժամի փոխանցման ուղիները դեպի զարգացող երկրներ և Հայաստան**

| Դեպի զարգացող երկրներ Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի իրական հատված փոխանցման ուղիները | Դեպի ՀՀ իրական հատված Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխանցման ուղիները |
|---|---|
| • Առևտուր (մետաղների, հանածոների և գյուղմթերքի գներ, ծառայություններ (զբոսաշրջություն))<br>• Առևտրի պայմաններ<br>• Միգրացիա և տրանսֆերտներ կամ դրամական փոխանցումներ<br>• Պետական զարգացման օգնություն (ODA)<br>• Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ) | • Տրանսֆերտներ<br>• Արտահանման պահանջարկի կրճատում<br>• Օգտակար հանածոների, մետաղների գների անկում<br>• Զբոսաշրջություն<br>• Օտարերկրյա օգնություն /պետական աջակցության/օժանդակության հոսքեր<br>• ՕՈՒՆ/մասնավոր կապիտալ |
| Աղբյուր՝ ԱՄՀ (2009թ.b), UN-OHRLLS (2009թ.), Իսլեմ (2009թ.), ODI (2009թ.) | Աղբյուր՝ UNWFP VAM Food Security Analysis (2009թ.), Public Forum Armenia (2008թ.), UNDP (2010թ.), Քանազարաջահ (2010թ.) |

Իրական հատվածը, իր հերթին խոցելի է «իրական» փոխանցման ուղիների կամ էլ «ֆինանսական» համարվող օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) հոսքերի նկատմամբ: Հաշվի առնելով տարբեր հեղինակների կամ կազմակերպությունների կողմից դեպի ցածր եկամուտներ ունեցող[4] կամ զարգացող երկրների ինչպես նաև դեպի Հայաստան նշված փոխանցման ուղիները (տես աղյուսակ 2), և «խոցելիությունից դեպի ճգնաժամ» բնութագրիչների համատեքստը, այս զեկույցում դիտարկվում են դեպի ՀՀ իրական հատված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխանցման հինգ ուղի (արտահանման 4 ապրանքների խումբ[5], զբոսաշրջություն[6], դեպի ՀՀ իրական հատված ՕՈՒՆ-ի ներհոսքը, ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտներ[7], և գործոնային եկամուտներ և ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ[8])[9]: Հավելված 1-ում ներկայացված են ուղիների, և այլ ցուցանիշների աղբյուրները և նկարագիրը:

Նշված ուղիները ազդում են տնտեսության հիմնական մասնակիցների վրա՝ տնային տնտեսությունների, կառավարության և մասնավոր ընկերությունների վրա (տարբեր ուղիները տարբեր կերպ՝ օրինակ տրանսֆերտները առաջին հերթին տնային տնտեսությունների վրա, իսկ պատրաստի սննդի արտահանումը՝ մշակող ընկերությունների վրա), որոնք կախված իրենց սկզբնական պայմաններից ելնելով որդեգրում են տարբեր ճգնաժամերի հաղթահարման ռազմավարություններ (ծախսերի կրճատում, եկամուտների ավելացում (ՀԲ, 2010թ.)): Տնային տնտեսությունների կողմից ծախսերի

[4] ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով
[5] պատրաստի սննդի արտադրանք, հանքահումքային արտադրանք, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր (տես Հավելված 1)
[6] զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ից գնված ապրանքների կամ իրենց մատուցած ծառայությունների վրա կատարվող ծախսերը (տես Հավելված 1):
[7] տեխնիկական օգնություն, ֆինանսական օգնությունը և հումանիտար օգնությունը (դեղորայք, սնունդ, հագուստ, ալյուր, ցորեն, բրինձ, և այլն): (տես Հավելված 1)
[8] զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների, փոխանցումներ, ներառյալ սահմանային աշխատողների; աշխատողների դրամական փոխանցումներ; այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտներ (տես Հավելված 1)
[9] Ընթացիկ տրասֆերտների ընտրությունը հիմնականում պայմանվորված է նրանով, որ այն ուղղակիորեն ազդում է տնօրինվող եկամտի վրա:

կրճատումը, ընկերությունների կողմից կատարվող ներդրումների կրճատումը, նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունը, կառավարության կողմից ենթակառուցվածքների բարելավման ուղղված միջոցների, սոցիալական ծախսերի փոփոխությունը ի պատասխան ճգնաժամի ազդեցությանը (ճգնաժամի հաղթահարման ուղղված որդեգրած ռազմավարություններ) ազդում են ներքին պահանջարկի և զուտ արտահանման փոփոխության վրա[10,11], որի հետևանքով արձանագրվում է իրական ՀՆԱ-ի կրճատում (տե՛ս գծապատկեր 1)։

**Գծապատկեր 1. «ՀՖՃ մակրոտնտեսական ազդեցություն՝ խոցելիություն սկզբնական պայմանների առկայությամբ» հայեցակարգային մոդել**




Աղբյուր՝ Ա. Մակարյան (2012թ.)

Նշված հայեցակարգային մոդելը հիմք է հանդիսացել, գլուխ 2-3-ում ներկայացված վերլուծության համար։ Սակայն, քանի որ տվյալ զեկույցի նպատակներից է գնահատել ՀՀ տնտեսության վրա արտաքին շոկերի փոխանցման ուղիների ազդեցությունը, նախքան ճգնաժամը և ճգնաժամից հետո, գլուխ 4-ում փորձ է կատարված էկոնոմետրիկ մոդելի միջոցով գնահատել ճգնաժամի փոխանցման ուղիների ազդեցությունը

[10] Գարդոն և Մարթինը (2010թ.) կենտրոնական, արևելյան, և հարավարևելյան Եվրոպայի երկրների համար որպես «իրական փոխանցման» ուղիներ դիտարկում են ներքին պահանջարկի փոփոխությունը, որն իր հերթին որոշ ժամանակ անց տարածում է իր ազդեցությունը, և զուտ արտահանման փոփոխությունը։ Սակայն զեկույցի նպատակներից ելնելով այստեղ չի դիտարկվում «երկրորդ ալիքը». ինչպես է ներքին պահանջարկի փոփոխությունը ազդում արտադրողների վստահության, աշխատանքի շուկայի ինչպես նաև վարկավորման պայմանների վրա և այլն։

[11] Փոխանցման ուղիները (արտաքին շոկեր) առաջացնելու էին էլ ավելի մեծ ընթացիկ հաշվի անհավասարակշռություն, ինչ էլ հանգեցնելու էր «տեղական արժույթի փլուզման» (Միլիեթթի-Ֆերրեթթի և Ռազին, 1996թ.) կամ արժութային ճգնաժամի, իսկ ՀՀ դրամի արժեզրկումը 2009թ. գների մակարդի փոփոխության տեսքով կազդեր տնային տնտեսությունների կողմից սպառողական ծախսերի կրճատմանը, իսկ ընկերությունների մոտ կարձանագրվեր նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխում, և այլն։

իրական ՀՆԱ-ի վրա: Ստացված արդյունքները հնարավորություն կտան պարզել երկրի խոցելիության չափը, իսկ քաղաքականություն մշակողներին դրանք հաշվի առնել երկարաժամկետ տնտեսական աճի ռազմավարության, արտահանման դիվերսիֆիկացիայի քաղաքականության մշակման ժամանակ և այլն:

## ԳԼՈՒԽ 2. Դեպի ՀՀ իրական հատված ՀՖՃ-ի փոխանցման ուղիները

### 2.1 Զբոսաշրջություն

**Հայաստանին հաջողվեց ճգնաժամի տարում արձանագրել ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի աճ ճգնաժամի տարում, ինչը շարունակվեց 2010-2011թթ., պայմանվորված մեր երկրի յուրահատկությամբ (այցելուներ սփյուռքից, Իրանից):** ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվը 2007թ. ի վեր աճ էր արձանագրում (տե՛ս գծապատկեր 3)[12]: Ճգնաժամի տարում այն կազմեց 3% նախորդ տարվա նկատմամբ, իսկ 2011թ.՝ 10.8%: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (2011թ.) 2010թ. եվրոպական երկրներից այցելուների 20.8% աճ էր արձանագրվել: Աճ էր արձանագրվել Ֆրանսիայից, Գերմանիայից, Իտալիայից, Միացյալ Թագավորությունից, Ավստրիայից և այլ երկրներից (մասնավորապես Սկանդինավյան երկրներից) Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակի մեջ: Նախարարության կարծիքով դրանք *«ամենամեծ պոտենցիալ ներկայացնող երկրներն են»* (2011թ., էջ 7), հաշվի առնելով ՀՀ ժամանող *«հայկական արմատներ չունեցող զբոսաշրջիկներին»*, (2011թ., էջ 8): Իսկ ինչ վերաբերում է սփյուռքահայ այցելուներին, ապա իրենց թիվը ամենամեծ սեգմենտն է եղել 2010թ., որոնք հիմնականում ժամանել են ԱՊՀ երկրներից և ԱՄՆ-ից: Միայն ՌԴ-ից ժամանումների քանակը ընդհանուր ժամանումների մեջ կազմել է մոտ 15.9% (ԱՊՀ-ի մասնաբաժինը՝ 17.3%): Իրանից այցելուների թիվը ընդհանուր այցելուների թվի 17.7%-ն էր կազմել 2010թ.:

**Գծապատկեր 2. ՀՀ-ում զբոսաշրջիկների կողմից կատարված ծախսերը ապրանքների և ծառայությունների վրա 2007-2011թթ. (մլն ԱՄՆ դոլար)**




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա (2012թ.)

**Գծապատկեր 3. ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվը 2007-2011թթ.**




Աղբյուր՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (2012թ.)

**Ճգնաժամի տարում և 2010-2011թթ. ՀՀ այցելուների թվի աճը ուղեկցվել է ՀՀ-ում ծառայությունների և ապրանքների վրա կատարվող ծախսերի գումարային աճով, մինչդեռ մեկ այցելուի հաշվով միջին դոլարային ծախսերը էապես չեն փոխվել 2009-2011թթ, իսկ 2011թ. դրամով արտահայտված իրական ծախսերը գրեթե նույնն էին ինչ-որ 2008թ:** Ճգնաժամի տարում ՀՀ-ում այցելուների ծառայությունների և ապրանքների վրա կատարված ծախսերը կազմել էին 334.1 մլն. ԱՄՆ դոլար (տե՛ս գծապատկեր 2), ինչը նախորդ տարվա ցուցանիշին գերազանցեց 3.6 մլն ԱՄՆ դոլարով, 2010թ. այն կազմեց՝

[12] Ազդեցության դիտարկման համար «t±2» պատուհանն է վերցված, որն ընդգրկում է 2007-2011թթ., ինչպես նաև բերում են 2012թ. երկրորդ եռամսյակային տվյալները:

74.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2011թ.՝ 37.4 մլն ԱՄՆ դոլար[13]: Հետաքրքրական է նկատել որ դոլարով արտահայտված մեկ զբոսաշրջիկի հաշվով ՀՀ-ում ծախսված գումարները ծառայությունների և ապրանքների վրա կտրուկ չեն տատանվել 2007-2011թթ. (տե՛ս գծապատկեր 4): Իսկ եթե համեմատենք դրամային արտահայտությամբ մեկ զբոսաշրջիկի ՀՀ-ում ծախսված գումարները ապա այս դեպքում, 2008թ. նվազել էին 11.4% նախորդ տարվա նկատմամբ (տե՛ս գծապատկեր 5), մինչդեռ ծախսվող գումարների իրական արժեքը (ՍԳԻ ճշգրտված[14]) նվազել էր 22% (տե՛ս գծապատկեր 6):

**Գծապատկեր 4. ՀՀ-ում մեկ զբոսաշրջիկի հաշվով կատարած միջին ծախսը ապրանքների և ծառայությունների վրա 2007-2011թթ. (ԱՄՆ դոլար)**




Աղբյուր՝ հեղինակի սեփական հաշվարկ

**Գծապատկեր 5. ՀՀ-ում մեկ զբոսաշրջիկի հաշվով կատարած միջին ծախսը ապրանքների և ծառայությունների վրա 2007-2011թթ. (ՀՀ դրամ)**




Աղբյուր՝ հեղինակի սեփական հաշվարկ

2011թ. թեպետ ՀՀ այցելուների թիվը աճել էր 10.8%, ՀՀ-ում ծախսած գումարներն՝ 9.2%-ով (կազմելով 445.6 մլն ԱՄՆ դոլար), սակայն մեկ զբոսաշրջիկի հաշվով դոլարային, դրամային (անվանական և իրական) արտահայտությամբ ծախսերը նվազել էին: 2011թ. մեկ զբոսաշրջիկի հաշվով իրական ծախսերը ՀՀ դրամով արտահայտված գրեթե նույն մակարդակին էին, ինչ-որ 2008թ. (8.8% անկում 2009թ. նկատմամբ):

**Գծապատկեր 6. ՀՀ-ում մեկ զբոսաշրջիկի հաշվով կատարած միջին իրական ծախսը ապրանքների և ծառայությունների վրա 2007-2011թթ. (ՀՀ դրամ)**




Աղբյուր՝ հեղինակի սեփական հաշվարկ

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալների (2011թ., էջ 10) 2010թ. 50 հյուրանոց ընդունել է 70,209 միջազգային այցելու նախորդ տարվա 65,638 այցելուի համեմատ (43 հյուրանոց)[15]: Թեպետ 2010թ. ավելի շատ զբոսաշրջիկ էր հանգրվանում հյուրանոցներում սակայն դա կազմում էր այցելուների ընդամենը 10.3% (2009թ.՝ 11.4%): Հետևաբար 2010թ. ավելի շատ այցելու հանգրվանել է կամ բարեկամների/ընկերների կամ էլ վարձակալած բնակարաններում, իսկ նրանք թեպետ ավելի շատ օր մնային ՀՀ-ում ավելի քիչ գումար ընդհանուր առմամբ կծախսեին: Մյուս կողմից հնարավոր է, որ հյուրանոցներում օթևանած զբոսաշրջիկների քանակի աճը պայմանավորված լինի, ավելի քիչ օր այստեղ գիշերելով (եթե հաշվի առնենք, որ հյուրանոցների թվի աճը չէր կարող հնարավորություն տալ, ընդնաիուր առմամբ հյուրընկալել նույն քանակի զբոսաշրջիկներ եթե չարձանագրվեր օրերի քանակի կրճատում): Չնայած նրան, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դեռ իր կայքում չի տեղադրել 2011թ. ՀՀ ժամանած զբոսաշրջիկների վերաբերյալ տվյալները ըստ երկրների, միտումներից կարելի է ենթադրել, որ թեպետ օտարազգի այցելուների թիվը հավանաբար աճել է, սակայն աճել է նաև

---

[13] Եթե այլ աղբյուր չի նշվում, ապա տվյալների հիմք են հանդիսանում ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակվող տարբեր տարիների տարբեր հրապարակումները

[14] 2005=100 (2007թ.՝ 107.4, 2008թ.՝ 117, 2009թ.՝ 121, 2010թ.՝ 130.9, 2011թ.՝ 141)

[15] Եթե 2009թ. մեկ հյուրանոցին բաժին էր ընկնում միջինում 1,526.5 զբոսաշրջիկ, ապա 2010թ.՝ 1,404.2:

*«հայկական արմատներ ունեցողների»* քանակը, ինչը ընդհանուր առմամբ ուղեկցվել է ՀՀ-ում հատկապես հյուրանոցներում օթևանելու օրերի քանակի կրճատմամբ՝ մասամբ արտացոլելով այլ երկրների տնտեսությունների ճգնաժամից վերականգնվելու ոչ բարձր տեմպերը: Մյուս կողմից *«հայկական արմատներ ունեցող»* այցելուների թվի աճը հավանաբար կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ եթե նախկինում նրանք այցելում էին հայրենիք որպես ՀՀ քաղաքացիներ, ապա վերջին տարիներին արդեն այլ երկրների քաղաքացիներ, կամ էլ շատացել է երկար ժամանակ հայրենիք չայցելածների, կամ առաջին անգամ այցելուների, կամ էլ մշտապես այցելուների քանակը:

**2012-2013թթ. ընդհանուր առմամբ ակնկալվում է այցելուների աճ, սակայն հնարավոր է ՀՀ-ում հանգրվանելու ավելի կարճ ժամկետներ կամ դրանց պահպանում արձանագրվի, որի հետևանքով մեկ զբոսաշրջիկի հաշվով դոլարային ծախսերը ծառայությունների և ապրանքների վրա ՀՀ-ում կնվազեն:** 2012թ. հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 5.1% աճել էր ՀՀ այցելածների թիվը, իսկ նրաց կողմից ձեռքբերված ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսերը դոլարային արտահայտությամբ աճել էին ընդամենը 2.8%: 2012թ. հուլիսի 23-ին ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Արա Պետրոսյանի կատարած հայտարարության համաձայն, 2012թ. ակնկալվում է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի 8-10% աճ[16]: Ըստ փոխնախարարի 2012թ. առաջին եռամսյակում Իրանից այցելուների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվել էր 10,000 այցելուով՝ պայմանավորված դոլարի փոխանակման ծավալների սահմանափակմամբ Իրանում: Նա նաև նշել է, որ տարվա ընթացքում նույնքան այցելու էլ կժամանի ՀՀ Իրանից: Իսկ ըստ WTTC-ի[17] (2012թ.) 2012թ. զբոսաշրջության նկատմամբ պահանջարկը միջազգային զբոսաշրջության նկատմամբ Եվրոգոտու երկրներում 2012թ. այդքան էլ բարձր չի լինելու, եթե հաշվի առնենք ԱՄՀ-ի (2012թ.) կողմից կանխատեսվող տնտեսական աճի տեմպերը 2012-2013թ. (տե՛ս հավելված 2)[18]: Մյուս կողմից, եթե հաշվի առնենք, որ Հայաստանը «մասսայական զբոսաշրջության»[19] երկիր չէ, և Հայաստանը նախընտրած օտարերկրյա այցելուները ձգտում են տեսնել ինչ-որ նոր բան, ծանոթանալ այլ մշակույթին, և փորձում են ամեն տարի այլ երկիր այցելել, ապա նրանք կձգտնեն խնայել հանգստի համար, սակայն վատթարացող ֆինանսական վիճակը իրենց երկրներում (հատկապես Եվրոպական երկրներում), մի գուցե հանգեցնի նրան, որ նրանք նախընտրեն ավելի կարճ ժամանակով այցելել, կամ էլ հյուրանոցում ավելի քիչ հանգրավանել, իսկ մնացած ժամանակահատվածը այլ վայրերում (Երևանից դուրս), և այլն: Իսկ ինչ վերաբերում է «հայկական արմատներ ունեցողներին», որոնք Հայաստանի այցելուների մեծ մասն են կազմում, ապա այս սեգմենտը դեռ կշարունակի աճել, սակայն այցելության տևողությունը կարող է ավելի կարճ լինել ևս, կախված ժամանած երկրերի տնտեսական վիճակից: Այդ իսկ պատճառով ՀՀ-ում կարևորվում է հյուրանոցային համարների առկայությունը, հատկապես ոչ թանկ: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2012թ. հուլիսի դրությամբ ՀՀ-ում կամ արդեն հանձնվել էր կամ հանձնվելու էր 8 հյուրանոց և ևս 2-ը 2012-2013թթ.[20]: Սակայն արդյո՞ք դա բավարար կլինի օտարերկրյացի այցելուների աճող թվաքանակի պարագայում, հաշվի առնելով նրանց զգայունությունը գնի նկատմամբ իրենց երկրներում տնտեսական աճի ոչ բարձր կամ բացասական աճի տեմպերը: Իսկ սա նշանակում է, որ ՀՀ-ում կարևորվելու է ոչ թանկարժեք 2-3 աստղանոց հյուրանոցների առկայությունը, կամ էլ օտարերկրյա այցելուների այնպիսի տուր-փաթեթների առաջարկումը (արկածային, գյուղական զբոսա-

[16] http://news.am/arm/news/114476.html (վերջին այցելություն՝ Օգոստոսի 25, 2012թ.)
[17] http://www.wttc.org/site_media/uploads/downloads/MonthlyUpdate_January_2012final.pdf (վերջին այցելություն՝ Օգոստոսի 25, 2012թ.)
[18] Երկրներին վերաբերող կանխատեսումների համար աղբյուր են հանդիսանում ԱՄՀ-ի (2012թ.) զեկույցը (տես Հավելված 2):
[19] Կամ էլ անվանում են «արև կամ ծով» զբոսաշրջություն (Sun and Sea Tourism)
[20] www.mineconomy.am/uploades/Tourism_PR_2012.pdf (վերջին այցելություն՝ Օգոստոսի 25, 2012թ.)

շրջություն և այլն) և առաջխաղացումը, որը կնախատեսի այցելուների ավել երկար հանգրվանում Երևանից դուրս հիմնականում «B&B» տիպի կացարաններում[21], քանի որ «հայկական արմատներ ունեցողների» որոշ մասը կարող է հանգրվանել բարեկամների/ընկերների մոտ, կամ վարձով բնակարաններում: Հետևաբար ՀՀ-ի համար այս եկամտի աղբյուրը կարող է կարևոր դեր սկսել խաղալ, եթե ՀՀ-ն կարողանա համապատասխան ոչ թանկ կացարանային ենթակառուցվածք ստեղծել ՀՀ տարածքում և թեպետ կարճ այցելությունների պարագայում ավելացնել միջազգային զբոսաշրջիկների թիվը:

## 2.2 Ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ և գործոնային եկամուտ

**Գործոնային եկամուտները ճգնաժամի տարում կտրուկ անկում արձանագրելուց հետո գերազանցեցին նախաճգնաժամային մակարդակը 2011թ., մինչդեռ մասնավոր ընթացիկ տրանսֆերտները և աշխատողների դրամական փոխանցումները նույնիսկ չեն հասել 2007թ. մակարդակին:** Մինչ ճգնաժամը և ճգնաժամի տարում ընթացիկ մասնավոր տրանսֆերտները [22] ազգականներից, ընկերներից ՀԿ-ներից, այլ կառավարական կառույցներից (տե՛ս Հավելված 1) գերազանցում էին միգրանտ (մեկ տարուց քիչ), միջազգային կառույցների կողմից վարձատրվող ՀՀ քաղաքացիություն ունեցող աշխատողների գումարներին (գործոնային եկամտի աղբյուր)[23]: Ճգնաժամի տարում բոլոր երեք աղբյուրներից ստացվող եկամուտները/տրանսֆերտները կրճատվեցին (տե՛ս գծապատկեր 7): 2010թ. մեկ տարուց ավել ՀՀ-ից բացակայող միգրանտների և մասնավոր ընթացիկ տրանսֆերտները նախորդ տարվա նկատմամբ ևս կրճատվեցին համապատասխանաբար՝ -16.2% և -14.2%, մինչդեռ գործոնային եկամուտները աճեցին 35.7%: Այստեղից կարելի է եզրակացնել, որ 2009թ. ՀՀ վերադարձած մեկ տարուց ավել բացակայածները[24], մեկնել են արտագնա աշխատանքի 2010թ.: Հետևաբար 2010թ. ՀՀ-ից արտագնա աշխատանքի մեկնած ՀՀ քաղաքացիների դրամական եկամուտները/փոխանցումները կդասակարգվեին որպես գործոնային եկամուտ, անկախ նրանից, թե այդ միգրանտները այդ տարի կվերադառնային՝ թե ոչ: Աշխատողների դրամական փոխանցումների աճը 2011թ., կարող է փաստել հետևյալի մասին՝ 2010թ. մեկնած միգրանտների որոշ մասը չի վերադարձել ՀՀ նույն տարում, կամ էլ մեկ տարուց ավել արտագնա աշխատողները սկսել են ավելի շատ գումարներ ուղարկել ՀՀ: Ինչ վերաբերում է գործոնային եկամտի աղբյուրին, ապա այս աղբյուրից ստացվող եկամուտները 2011թ. նախորդ տարվա համեմատ աճել են 31.1%.: Սա կարող է փաստել հետևյալի մասին՝ կամ արտագնա աշխատանքի մեկնածների քանակը ավելացել է, կամ սկսել են ավելի շատ գումարներ ուղարկել Հայաստան, կամ էլ երկուսը միասին, եթե ենթադրենք, որ օտարերկրյա կառույցների կողմից ստացվող ՀՀ քաղաքացիների եկամուտների կամ

**Գծապատկեր 7. Տրանսֆերտները և գործոնային եկամուտը 2007-2011թթ. (մլն. ԱՄՆ դոլար)**




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա (2012թ.)

---

[21] «Անկողին և նախաճաշ» (Bed & breakfast) տիպի կացարան

[22] Դրամական փոխանցումներ, հագուստ դեղորայք և այլն

[23] Զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների, փոխանցումներ, ներառյալ սահմանային աշխատողների

[24] Ըստ Էրսադոյի (2010թ.) 2009թ. նախորդ տարվա նկատմամբ դրսում գտնվող միգրանտների քանակը կրճատվել էր մոտ 28.8%-ով: Իսկ միգրանտների թիվը 2008թ. կազմել մոտ 127,000 մարդ:

աշխատողների քանակի կտրուկ աճ չի արձանագրվել, և որ գործնային եկամտի մեծ մասնաբաժինը ապահովում են արտագնա աշխատողները[25]: Ըստ Էրսադոյի (2010թ.) 2008թ. ՀՀ ատրբեր բնակավայրերից[26] արտագնա աշխատողների 80%-ից ավելին մեկնում էր ՌԴ, 2009թ.՝ մոտ 75%-ից ավելին, իսկ ըստ ԱՄԿ-ի և «ԱUS» ՀԿ-ի (2008թ.) 2002-2007թթ. միգրանտների մոտ 96%-ը մեկնել էր ՌԴ: Մյուս կողմից, ըստ Էրսադոյի (2010թ.), 2009թ. արտագնա աշխատողների 79%-ը աշխատել է շինարարությունում, 8%՝ առևտրի բնագավառում, հետևաբար ՌԴ մեկնողների մեծամասնության համար շինարարությունը եղել է եկամուտների ապահովման առաջնային ոլորտը, որին հետևել է առևտուրը: ՌԴ-ում ընդհանուր տնտեսական աճը ինչպես նաև այս երկու ոլորտներում արձանագրված իրական աճով է բացատրվել գործնային եկամուտների աճը, ինչի մասին նաև փաստում են նաև ՀՀ ԿԲ-ի կողմից ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից մուտք եղած ոչ առևտրային բնույթի տարեկան փոխանցումների հրապարակվող տվյալները (տե՛ս գծապատկերներ 8 և 9):

**Գծապատկեր 8. ՌԴ ՀՆԱ-ի, շինարարության և առևտրի ոլորտի իրական աճի տեմպերը 2008-2011թթ. (%)**




Աղբյուր՝ ՌԴ պետական վիճակագրության դաշնային ծառայություն, 2012թ.

**Գծապատկեր 9. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից մուտք եղած ոչ առևտրային բնույթի տարեկան փոխանցումները 2007-2011թթ. (մլն ԱՄՆ դոլար)**




Աղբյուր՝ ՀՀ ԿԲ առցանց տվյալների բազա, 2012թ.

ՌԴ շինարարությունը 2009թ. 14.7% անկում արձանագրելուց հետո, 2010-2011թթ. թեպետ արձանագրել է իրական աճ, սակայն դեռ չի հասել նախաճգնաժամային մակարդակին: Իսկ ինչ վերաբերում է առևտրին, ապա այս ոլորտը ՌԴ-ում 2011թ. գերազանցել է 2008թ. մակարդակը: Այստեղից կարելի է ենթադրել, որ կամ ՀՀ արտագնա աշխատողները ավելի մրցունակ են ՌԴ-ում՝ մասնավորապես շինարարության ոլորտում, ինչը նշանակում է ավելի բարձր վարձատրություն, կամ այլ ոլորտներում են աշխատանք գտել ավելի բարձր վարձատրությամբ կամ էլ ավելի շատ են սկսել մեկնել ինչպես նաև այլ երկներ (հատկապես այլ ԱՊՀ երկրներ՝ մասնավորապես Ղազախստան և Ուկրաինա,[27] հաշվի առնելով մուտքի վիզայի բացակայությունը): Այստեղից

[25] ՀՀ-ում ոչ մի հետազոտական կառույցի կամ ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության արդյունքները հնարավորություն չեն տալիս, հստակ տարանջատել, թե տրանսֆերտները որ ստանում են տնային տնտեսությունները, դրանք սփյուռքում բնակվող բարեկամներից են, թե տնային տնտեսության արտագնա աշխատողների, ըստ որի էլ հնարավոր կլինի գնահատել արտագնա աշխատողների քանակը 2010-2011թթ.: ՀՀ ԱՎԾ հետազոտության արդյունքները համապարփակ ձևով ներկայացնում է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» տարեկան զեկույցներում: «ՀՌԿԿ-Հայաստան» Կովկասյան Բարոմետրի հետազոտության արդյունքները տեղադրում է իր կայք էջում (http://www.crrc.am/index.php/lo/14/164), իսկ «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ն իր վերջին զեկույցը հրապարակել է 2008թ., որտեղ հստակ տրվում է արտագնա աշխատողների տոկոսային հարաբերությունները ըստ երկրների (http://www.ast.am/en/international-migration):

[26] Երևան, այլ քաղաքներ և գյուղական բնակավայրեր:

[27] Ըստ Ա. Մինասյանի և այլոց (2007թ.) 2005-2006թթ. արտագնա աշխատանքի մեկնածները որպես մեկնման երկիր նշել են ԱՊՀ տարածքից Ղազախստանը և Ուկրաինան: Ղազախստանում 2010-2011թթ. իրական ՀՆԱ-ի աճը համապատասխանաբար՝ 7.3 և 7.5% է կազմել, իսկ Ուկրաինայում համապատասխանաբար՝ 4.1 և 5.2% (Աղբյուր՝ ՀԲ առցանց «WDI» տվյալների բազա, 2012թ.):

կարելի է եզրակացնել հետևյալը՝ ՀՀ արտագնա աշխատողներին հաջողվել է աշխատանք գտնել ճգնաժամից հետո, ընդհանուր առմամբ ավելացել են սեզոնային բնույթ կրող աշխատողների ուղարկած գումարները, որն որոշ չափով ուղեկցվել է արտագնա աշխատողների քանակի աճով նաև այլ ԱՊՀ երկրներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ, եվրոպական և այլ երկրներ միգրացիան ավելի շուտ մշտական բնույթ է կրել (ԱՄԿ և «ԱUS» ՀԿ, 2008թ.), թեպետ մշտական միգրանտների գերակշիռ մասը ևս 2002-2007թթ. ՌԴ է մեկնել:

**Ընթացիկ մասնավոր տրանսֆերտների ներհոսքը արտացոլել են այլ երկրներում զարգացումները (տրանսֆերտներ ուղարկող), և դրական միտում է արձանագրվել միայն երկու տարի անց:** Ճգնաժամի տարում ընթացիկ մասնավոր տրանսֆերտները կրճատվեցին սակայն գերազանցում էին գործոնային եկամուտներին և աշխատողների փոխանցումներին, ինչը իր դերը կխաղար այս աղբյուրն ունեցող տնային տնտեսությունների ճգնաժամի հաղթահարման գործում: Մյուս կողմից, քանի որ այս խումբը ներառում է ինչպես ՀԿ-ներին, անհատներին ուղարկված տրանսֆերտները, այնպես էլ ստացված հագուստը, դեղորայքը, սնունդը, որն ստացվում է օտարերկրյա ռեզիդենտ համարվող անհատներից, ՀԿ-ներից պետական կառույցներից, ապա բավականին դժվար է հստակ տարանջատել, ամենամեծ անկումը որ խմբի գծով է գրանցվել: Ինչ վերաբերում է 2009թ., ապա օտարերկրյա անհատ ռեզիդենտներից (ազգական/ընկեր) ՀՀ տնային տնտեսությունների կողմից ստացվող տրանսֆերտների գծով մի գուցե իներցիա է նկատվել, երբ ազգականները/ընկերները փորձել են օգնել ՀՀ տնային տընտեսություններին ինչպես արել են նախկինում[28]: Մյուս կողմից էլ 2010թ. տնտեսական աճի ազդեցությունը այլ երկրներում (հատկապես ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ ուղարկող) սկսել է զգացվել 2011թ., ինչ էլ հանգեցրել է, ընդհանուր առմամբ, երբ երկու տարի անընդմեջ կրճատումից հետո ընթացիկ մասնավոր տրանսֆերտները աճի, սակայն 2011թ. մակարդակը զիջում է 2009թ. մակարդակին:

**ՀՀ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների և գործոնային եկամուտների աճ կանխկալվի 2012-2013թթ., սակայն աճը չի լինի կտրուկ, քանի որ կանխատեսվող տնտեսական աճի տեմպերը այլ երկրներում կտրուկ չէ:** ՌԴ-ում ինչպես նաև ԱՊՀ-երկրների համար մոտ 4% և ավել տնտեսական աճ կանխատեսելու պարագայում, և հաշվի առնելով, որ արտագնա ախատողների ինչպես նաև մշտական բնակության մեկնածների մեծամասնությունը մեկնել է ՌԴ, ապա ՌԴ-ից ստացվող գործոնային եկամուտները, ինչպես նաև մասնավոր ընթացիկ տրանսֆերտները կաճեն, սակայն 2011թ, աճի տեմպերը հնարավոր է, որ զիջեն, եթե չարձանագրվի սեզոնային արտագնա աշխատողների կտրուկ աճ: Ինչ վերաբերում է ԵՄ-ից ստացվող փոխանցումներն, ապա այստեղ կանխատեսվող տնտեսական աճի տեմպերը բավականին ցածր են, իսկ Իսպանիայի, Իտալիայի և Նիդերլանդների պարագայում 2012թ. սպասվում է անկում: Հետևաբար եթե այս երկրներից տրանսֆերտները կրճատվեն, ապա ՌԴ-ի հաշվին ընդհանուր խմբի աճ կարձանագրվի, սակայն այդ դեպքում կտուժեն այն տնային տնտեսությունները, որոնք այդ երկրներից տրանսֆերտներ ստացողներն են: Ընդհանուր առմամբ, ՀՀ տրանսֆերտների և գործոնային եկամուտների ներհոսքը կաճի 2012-2013թթ.: Իսկ 2012թ. հունվար-հունիս ամիսներին 3 խմբերն էլ աճ են արձանագրել նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 8.1-9.7% սահմաններում:

[28] Ըստ Էրսադոյի (2010թ.) դրամային արտահայտությամբ ամսեկան մեկ տնային տնտեսության հաշվով (այս եկամտի աղբյուրն ունեցող) ոչ միգրանտներից ստացվող գումարները աճել էին (2009թ. գումարը կազմել է 40,679 ՀՀ դրամ 2008թ. 35,297 դրամի համեմատ): Իսկ եթե այդ գումարները վերածենք դոլարի, ապա 2008թ. այն կազմել է միջինում 115.4 ԱՄՆ դոլար, իսկ 2009թ. այդ գումարը միջինում 112 ԱՄՆ դոլար է կազմել:

## 2.3 Ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտներ

**Ճգնաժամի տարում ՀՀ կառավարությանը տրամադրվող մարդասիրական օգնության կրճատմանը զուգընթաց արձանագրվել է տեխնիկական և ֆինանսական օգնության աճ, իսկ ընդհանուր ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտների ծավալը 2011թ. կրկնակի անգամ գերազանցում էր 2008թ. գրանցած մակարդակին:** ՀՀ կառավարությանը տրամադրված մարդասիրական օգնության ծավալները 2008թ. զիջում էին 2007թ. ծավալներին, իսկ ճգնաժամի տարում մոտ 24% կրճատվել էին 2008թ. համեմատ (տե՛ս գծապատկեր 10), իսկ այնուհետ 2010-2011թթ. որոշակի աճ է արձանագրվել: Տեխնիկական օգնությունը 2009-2011թթ. անընդհատ աճ է արձանագրել, իսկ ֆինանսական օգնությունը ճգնաժամի տարում աճելուց հետո կրճատվել էր 2010թ., որից հետո 2011թ, այն մոտ հինգ անգամ գերազանցել է նախորդ տարում գրանցված մակարդակին: Իսկ ընդանուր օգնությունը (բոլոր երեք օգնությունների գումարը) ճըգնաժամից հետո սկսել է աճել և 2011թ. կրկնակի անգամ գերազանցում էր ճգնաժամի տարում գրանցված մակարդակին: Օգնության գումարների աճը հնարավորություն կտար ՀՀ կառավարությանը մի շարք հատկապես սոցիալական ուղղվածության խնդիրներ լուծել: 2012թ. հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ անկում էր արձանագրվել տեխնիկական և մարդասիրական օգնության գծով (համապատասխանաբար՝ -26.7 և -12.4%), մինչդեռ ֆինանսական օգնությունը կրճատվել էր 31.1%: Քանի որ օգնությունների ընդհանուր գումարի աճը 2011թ. հիմնականում պայմանավորված է եղել կտրուկ ֆինանսական օգնության աճով, ապա 2012-2013թթ. դժվար է կանխատեսել ինչպիսին կլինի աճը և ինչպես կփոխվեն ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտների չափը:

Գծապատկեր 10. ՀՀ պետական կառավարմանը տրանսֆերտները 2007-2011թթ. (մլն ԱՄՆ դոլար)




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.

Գծապատկեր 11. ՀՀ կառավարությանը տրամադրվող մարդասիրկան օգնությունը 2007-2011թթ. (մլն ԱՄՆ դոլար)




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.

**Մարդասիրական օգնության խմբերը տարբեր կերպ են արձագանքել միջազգային շուկայում և ՀՀ-ում տեղի ունեցող զարգացումներին:** 2007-2008թթ. Համաշխարհային պարենային ճգնաժամի (ՀՊՃ) պարագայում, Հայաստանի կառավարությունը ավելի շատ է որպես օգնությունը «ցորեն, բրինձ ալյուր» խմբի ապրանքներ ստացել 2008թ. (տե՛ս գծապատկեր 11), քան 2007թ., հաշվի առնելով նաև ցորենի բերքի կրճատումը ՀՀ-ում[29]: Իսկ 2008թ., ընդհանուր առմամբ, ՀՀ տնային տնտեսությունները զգացին ՀՊՃ-ի ազդեցությունը, քանի որ պարենային ապրանքների գների ինդեքսը կազմել էր 111.1[30] 2008թ. նախորդ տարվա նկատմամբ: Իսկ այս խմբից ստացվող ապրանքների աճ է արձանագրվել 2010թ., երբ

[29] 2007թ.՝ ցորենի 254.2 հազար տոննա բերք, իսկ 2008թ.՝ 225.7 հազար տոննա
[30] նախորդ տարվա նկատմամբ, %, աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2011թ.

ցորենի բերքը ՀՀ-ում կըրճատվել էր[31]: Վարչական ծախսերի միտումը 2007-2011թթ. մոտավորապես արտացոլել է «ցորեն, բրինձ այլուր» և «Այլ» ապրանքների խմբի դինամիկան: Ինչ վերաբերում է «Այլ» ապրանքների խմբին, ապա այստեղ 2008թ. արձանագրած անկմանը, հետևել է ավելի մեծ անկում, իսկ 2010-2011թթ. ավելի շատ գումարի ապրանք է ստացել ՀՀ-ն, սակայն այստեղ դժվար է հստակ տարանջատել թե տարբեր խմբի ապրանքների մոտ ինչ միտում է արձանագրվել[32]: 2012թ. Հունվար-հունիս ամիսներին հումանիտար օգնության կրճատումը 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, ինչպես նաև ցորենի և այլ ապրանքների գների թանկացումը, ընդհանուր առմամբ կարող են հանգեցնել հումանիտար օգնության կրճատմանը 2012-2013թթ:

## 2.4 Օտարերկրյա ուղղակի ներդրումներ[33]

**Իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալը ճգնաժամի տարում և 2010թ. կրճատվեցին, իսկ 2011թ. ծավալը գերազանցեց 2007թ. ծավալին:** 2008թ. ՌԴ-ից ՀՀ իրական հատվածում ՕՈՒՆ-ի կտրուկ աճով է պայմանավորված եղել ՕՈՒՆ-ի ընդհանուր հոսքի ծավալի աճը 2007թ. համեմատ (տե՛ս գծապատկեր 12), ինչը հիմնականում առնչվում էր էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման և հեռահաղորդակցության ոլորտների հետ: ՕՈՒՆ-ի ծավալների միտումը 2009-2011թթ., ընդհանուր առմամբ, նման է ընթացիկ մասնավոր տրանսֆերտների դինամիկային: 2010թ. ՕՈՒՆ-ի ծավալները զիջում էին ճգնաժամի տարվա ծավալներին՝ պայմանավորված նրանով, որ ՀՀ ՕՈՒՆ-ի համար աղբյուր հանդիսացող երկրներում (հատկապես ՌԴ) ընկերությունները զգացին 2010թ. տնտեսական աճի ազդեցությունը 2011թ.: 2011թ. ՌԴ-ից ՕՈՒՆ-ի ծավալները զիջում էին 2008թ. ծավալներին: Ֆրանսիայից ՕՈՒՆ-ի ծավալների աճը 2009-2011թթ. հեռահաղորդակցության ոլորտում կատարված ներդրումներով էր պայմանավորված («Օրանժ Արմենիա»): Իսկ Լիբանանից ՕՈՒՆ-ի հոսքի կրճատումը՝ 2009-2011թթ. բացատրվում է հեռահաղորդակցության ոլորտում ներդրումների կրճատմամբ («ՎիվաՍելլ-ՄՏՍ»):

**2009-2011թթ. ՕՈՒՆ-ի հոսքերի ծավալները ՀՀ իրական հատված հիմնականում եղել են «ռեսուրսների աղբյուր փնտրող» և «սպառման շուկա փնտրող» օտարերկրյա ընկերությունների կողմից, իսկ ՕՈՒՆ-ի հոսքերիի կառուցվածքը որոշակիորեն արտացոլել է ՀՀ-ի արտահանման դինամիկան:** 2009-2011թթ. իրական հատվածում ՕՈՒՆ-ի ծավալների տեսանկյունից առաջատար ոլորտներից են եղել ծառայությունների ոլորտում[34] ներքին սպառման համար նախատեսված տեսակները «սպառման շուկա փնտրող» օտարերկրյա ընկերությունների կողմից (տե՛ս գծապատկեր 13): Վերջին տարիներին աճ է արձանագրվել նաև կացության կազմակերպման ոլորտում, որն արտացոլում է ՀՀ այցելածների թվաքանակի աճը և դոլարով արտահայտված ծախսած ընդհանուր գումարների աճը (տե՛ս բաժին 2.1): Թեպետ այս ոլորտում ներդրումները դասակարգվել են որպես «սպառման շուկա փնտրող» տիպի ներդրումներ, այն հիմնականում նախատեսված է զբոսաշրջիկների համար: 2011թ. հիմնական մետաղների արտադրության

---

[31] 2009թ.՝ ցորենի 198.1 հազար տոննա բերք, իսկ 2010թ.՝ 183.5 հազար տոննա:

[32] Ըստ ՀՀ ԱՎԾ-ի (2012թ.) մարդասիրական օգնության տարբեր ապրանքախմբեր տարբեր կերպ են փոխվել: Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպերի պարագայում 2009թ. եղել է 3.7 տոննա, 2010թ.՝ 1003.7 տոննա, 2011թ.՝ 50.4 տոննա: Սակայն ՀՀ ԱՎԾ-ն հրապարակում է ընդհանուր մարդասիրական օգնության վերաբերյալ տվյալները, ինչպես կառավարության այնպես էլ այլ կառույցների ստացած օգնությունը, այդ իսկ պատճառով հնարավոր չէ տարանջատել ըստ ապրանքների խմբերի, ինչպիսի փոփոխություն է տեղի ունեցել կառավարության կողմից ստացված ապրանքների կտրվածքով, իսկ խմբի տակ ներկայացվում են մի քանի ապրանք:

[33] Զեկույցում որպես ՕՈՒՆ դիտարկվում են իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալը

[34] Ըստ ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի դասակարգման (UNCTAD) ՕՈՒՆ-ը հեռահաղորդակցության, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, ցամաքային տրանսպորտի գործունեությանը և խողովակաշարերով փոխադրման, ինչպես նաև օդային տրանսպորտի գործունեության ոլորտներում դասակարգվում են որպես ծառայությունների ոլորտում ՕՈՒՆ:

մեջ ՌԴ-ից ՕՈՒՆ-ը («ռեսուրսների աղբյուր փնտրող» տիպի ներդրումներ) հիմնականում արատացոլում է 2009թ. սկսած մետաղների գների բարձրացումը, որի շնորհիվ նաև վերականգնվեցին ՀՀ հիմնական մետաղների ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրերի արտահանումը (տե՛ս բաժին 2.5): Խմիչքների արտադրությունում ՕՈՒՆ-ի[35] տեսակարար կշիռը ընդհանուր ՕՈՒՆ-ի մեջ թեպետ 2011թ. կրճատվեց 2009թ. համեմատ, սակայն ծավալները աճել էին, իսկ հիմնական աղբյուր հանդիսացող երկիրը Ֆրանսիան է եղել:

**Գծապատկեր 12. Իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալը ըստ երկրների 2007-2011թթ. (հազար ԱՄՆ դոլար)**




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ
Նշում՝ տոկոսները մատնանշում են տվյալ երկրի ՕՈՒՆ-ի տեսակարար կշիռը ընդհանուր ՕՈՒՆ-ի մեջ

**2012թ. ՕՈՒՆ-ի ծավալների անկում հնարավոր է գրանցվի 2011թ. նկատմամբ, իսկ 2013թ. ՕՈՒՆ-ի ծավալների մի շարք հանգամանքներով պայմանավորված կլինեն:** 2012թ. հունվար-հունիս ամիսներին ՕՈՒՆ-ի ծավալները նվազել էին 59.7%-ով նախորդ տարվա համեմատ, իսկ ՌԴ-ից ՕՈՒՆ-ը՝ ընդամենը կազմել է 19.8%-ը: ՕՈՒՆ-ի ծավալների 39.5%-ը բաժին է ընկել հիմնական ծառայությունների ոլորտներին՝ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (7.7%), հեռահաղորդակցություն՝ (31.8%), իսկ հանքագործական արդյունաբերության և բացհանքերի շահագործման այլ ճյուղերին՝ 26.8%: Միակ ոլորտը, որտեղ 2012թ. հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցվել է ՕՈՒՆ-ի աճ եղել է հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործման այլ ճյուղերը, որտեղ աճել են Գերմանիայից ՕՈՒՆ-ի աճով և Շվեցիարիայից ՕՈՒՆ-ով: Այս պարագայում հնարավոր է 2012թ. ՕՈՒՆ-ի նախորդ տարվա նկատմամբ ծավալների կրճատում, եթե 2012թ. երկրորդ կեսին չգրանցվի ՕՈՒՆ-ի ծավալների կտրուկ աճ: Իսկ 2013թ. ՕՈՒՆ-ի ծավալների փոփոխության վրա կազդեն նաև այն հանգամանքը, թե ՀՀ-ն քանի օտարերկրյա ընկերություն կներգրավի, և տրադիցիոն ոլորտներում ինչպես կփոխվեն ՕՈՒՆ-ի ծավալները:

[35] «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի և «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության կողմից (2012թ.) անդրազգային կորպորացիաների (ԱԱԿ) ոգելից խմիչքների (գինի և կոնյակ) ոլորտում հավանական ՕՈՒՆ-ը դասակարգվում է որպես ռազմավարական ակտիվներ փնտրող ՕՈՒՆ:

**Գծապատկեր 13. Իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալը ըստ ոլորտների 2009-2011թ. (տեսակարար կշիռ, %)**




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ
Նշում՝ տոկոսները մատնանշում են տվյալ ոլորտի ՕՈՒՆ-ի տեսակարար կշիռը ընդհանուր ՕՈՒՆ-ի մեջ

**2013-2015թթ. ՕՈՒՆ-ի ծավալները կախված կլինեն նրանից, թե որքան հաջողված կլինի ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը, և հիմնականում որ ոլորտներում կլինեն ներդրումները:** ՀՀ-ն քայլեր է ձեռնարկում գործարար միջավայրը բարելավելու համար ՕՈՒՆ ներգրավելու նպատակով: 2011թ. մայիսի 25-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքում նախատեսված հարկային և մաքսային արտոնությունների տրամադրումը ապահովելու համար նախատեսվել էր մի շարք օրենքներում լրացումներ և/կամ փոփոխություններ մտցնել[36]: Այժմ ՀՀ-ում առկա են ազատ տնտեսական գոտիներ:[37] ՀԲ-ի կողմից հրապարակվող (2012թ.) «Գործարարությամբ զբաղվելը 2013» համաթվով ՀՀ-ն 32-րդ տեղում է 185 երկրների շարքում,[38] բարելավելով դիրքը 18 տեղով՝ բավականին մեծ առաջընթաց արձանագրելով «Ներդրողների պաշտպանություն» և «Հարկերի վճարման» գծով համապատասխանաբար 73 և 44 տեղերով: 2011թ. հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության մեջ ընդհանրական միջոցառումների իրականացման (բարենպաստ միջավայրի ստեղծելու և արտադրողականությունը բարձրացնելու նպատակով) համար «առանցքային բաղկացուցիչ» է օտարերկրյա ներդրումների ներգրավումը:[39] Ռազմավարությամբ ընտրված ոլորտները հիմնականում (ութ ոլորտից հինգը) ՀՀ ապրանքերի արտահանման հիմնական 4 խումբն են ներկայացնում, որին 2011թ. բաժին է ընկել արտահանման 75.6% (տե՛ս բաժին 2.5): Հետևաբար, ներգրավված ՕՈՒՆ-ի տեսակից,[40] տիպաբանությունից, ինչպես նաև ոլորտի ռեսուրսահինտենսիվությունից կախված կլինի ՕՈՒՆ-ի փոփոխությունը: Եթե ՀՀ-ն ներգրավի թեթև արդյունաբերության ըն-

---

[36] http://www.mineconomy.am/arm/505/free.html (վերջին այցելությունը՝ 2012թ. սեպտեմբերի 11)

[37] «Ջվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտի «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքներում ազատ տնտեսական գոտի (կազմակերպիչ՝ «ՍԻՏՐՈՆԻԿՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ) (Աղբյուր՝ http://www.mineconomy.am/arm/23/text.html, վերջին այցելությունը՝ 2012թ. սեպտեմբերի 12)

[38] http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia

[39] Ինչպես նաև նշվել է Գործարարությունը կարգավորող միջավայրի բարելավումներ, բարենպաստ արտաքին ռեժիմների ապահովում և առևտրի խոչընդոտների վերացում, ենթակառուցվածքների արդիականացում (Աղբյուր՝ http://www.mineconomy.am/up/files/Razmavarutyun_ardyunaberutyun-65.pdf, վերջին այցելությունը՝ 2012թ. սեպտեմբերի 12)

[40] Նոր ձեռնակրության հիմքում (greenfield investments), միավորում և կլանում (Mergers & Aqusitions), ոլորտը ըստ կապիտալի ինտենսիվության

կերություն, ապա այդ ընկերության ՕՈՒՆ-ի ծավալները կզիջեն նոր հանքի շահագործման նպատակով ՕՈՒՆ-ի ծավալներին: Մյուս կողմից եթե հիմնական ծառայությունների ոլորտը (գազի, էլեկտրականության մատակարարում, հեռահաղորդակցություն, օդային և վերգետնյա տրանսպորտի գործունեություն) ներգրավել է «սպառման շուկա փնտրող» ՕՈՒՆ, ապա այստեղ ներդրումները կլինեն վերաներդրված շահույթի տեսքով, կլանման ձևով և այլն: Իսկ որոշ ոլորտներում նոր ներդրումների ծավալները այդքան էլ մեծ չեն լինի առանձին վերցված ընկերությունների դեպքում, սակայն տարբեր ոլորտներում հայտնի ընկերությունների մուտքը կարող է նախադեպ լինել մյուսներին ներգրավվելու համար, մանավանդ ՀՀ-ն ունի չորս տիպի ԱԱԿ-ների ՀՀ մուտք գործելու նախադեպեր[41]: Հետևաբար ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության հաջողությամբ է պայմանավորված լինելու միջնաժամկետ ժամանակահատվածում ՕՈՒՆ-ի ներգրավումը ՀՀ և որ ոլորտներում կլինեն ներդրումները:

## 2.5 Ապրանքների արտահանման հիմնական խմբեր

Գծապատկեր 14. Ապրանքների արտահանումը ըստ հիմանական խմբերի 2007-2011թ. (մլն ԱՄՆ դոլար)




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.
Նշում՝ տոկոսները մատնանշում են տվյալ արտահանման խմբի տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման մեջ

**Ճգնաժամի տարում բոլոր արտահանման 4 հիմնական խմբերը անկում գրանցելուց հետո, աճ արձանագրեցին 2010-2011թթ, սակայն աճեց նաև տնտեսության որոշ ոլորտների խոցելիության աստիճանը այս ապրանքների ծավալներից:** ՀՀ ապրանքների արտահանումը 2008թ. կրճատվել էր -8.3%-ով նախորդ տարվա համեմատ, իսկ արդեն 2009թ. անկումը կազմել էր -32.8% 2008թ. նկատմամբ[42]: 2010թ. արտահանման ծավալները[43] գերազանցում էին 2008թ. ծավալներին, իսկ աճը կազմում էր 46.6% 2009թ. նկատմամբ: 2011թ. ևս զգալի աճ արձանագրվեց նախորդ տարվա համեմատ (27.7%): ՀՀ արտահանման ծավալների փոփոխությունը հիմնականում արտացոլում էր 4 ապրանքների խմբերի ծավալների փոփոխությունը (տե՛ս գծապատկեր 14): 2010-2011թթ. աճել էր 4 հիմնական ապրանքների արտահանումը, ինչպես նաև աճել էր արտահանման ծավալների, ինչպես նաև տնտեսության մի շարք ոլորտների խոցելիության աստիճանը այս

---

[41] «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն և «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ (2012թ.)

[42] Ապրանքների արտահանումն ըստ առևտրի վիճակագրության տարբերվում է հավաքագրված տվյալների ճշգրտման միջոցով ՖՕԲ գներով ՀՀ արտահանումից: Այստեղ համադրելիության պահպանման նպատակով առևտրի վիճակագրության տվյալներն են ներկայացված:

[43] ԱՄՆ դոլարով արտահայտված (արտահանման արժեք)

խմբերի նկատմամբ: 2010-2011թթ. արտահանման այս խմբերին բաժին էր ընկնում ապրանքների արտահանման մոտ 86%-ը:

**Գծապատկեր 15. Հանքահումքային արտադրանքի հիմնական արտահանվող ապրանքները 2007-2011թթ. (մլն. ԱՄՆ դոլար)**







Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.

<u>Հանքահումքային արտադրանքի հիմնական արտահանվող ապրանքեր</u>

**Հանքահումքային արտադրանքը ճգնաժամի տարում անկում արձանագրելուց հետո 2010-2011թթ. աճ արձանագրեց, սակայն 2012թ. հնարավոր է անկում կապված համաշխարհային շուկայում պղնձի գների անկմամբ:** Այս խմբի ապրանքները հիմնականում ներկայացնում են արդյունաբերության երկու ճյուղ՝ հանքագործական արդյունաբերություն և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում: Ապրանքախմբի հիմնական արտահանվող ապրանքատեսակի՝ պղնձի հանքնաքարի խտանյութի արտահանումը 2008-2009թթ. մեծ տատանում չէր արձանագրել, իսկ 2010-2011թթ. կտրուկ աճ (2010թ.՝ 113% 2009թ. նկատմամբ, իսկ 2011թ՝ 23.7% 2010թ. համեմատ) գրանցվեց (տե՛ս գծապատկեր 15)՝ արտացոլելով պղնձի համաշխարհային գների սրընթաց աճը (տե՛ս հավելված 2): Էլեկտրաէներգիա արտահանումը ևս 2010-2011թթ. կտրուկ աճ արձանագրեց (2010թ.՝ 302.2% 2009թ. նկատմամբ, իսկ 2011թ՝ 50.1% 2010թ. համեմատ): 2009թ. ցեմենտի արտահանումը կտրուկ անկում գրանցեց՝ 2008թ. 38.4մլն ԱՄՆ դոլարի համեմատ ճգնաժամի տարում այն կազմեց 7.9մլն ԱՄՆ դոլար, որը շարունակվեց 2010թ.՝ կազմելով 2.4մլն ԱՄՆ դոլար: 2012թ. հունվար-հունիս ամիսներին այս խմբից արտահանումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվեց 15.2 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով188.3 մլն դոլար: Հիմնական ապրանքատեսակների գծով՝ աճ էր գրանցվել ցինկի հանքաքարի խտանյութի (30.2%) և բնական և հեղուկ գազի արտահանման մեջ (7.7%): Իսկ պղնձի հանքնաքարի խտանյութի արտահանումը կրճատվել էր 17.1մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 112.9մլն ԱՄՆ դոլար: Այս անկումը արտացոլում է համաշխարհային շուկայում պղնձի գների անկումը (եթե 2012թ. փետրվարին մեկ տոննայի գինը կազմում էր 8,441.49 ԱՄՆ դոլար, ապա հունիսին՝ 7,423 ԱՄՆ դոլար[44]), իսկ 2012թ. համար կանխատեսվող գինը 7,900 ԱՄՆ դոլար էր 2011թ. 8,828 ԱՄՆ դոլարի համեմատ (ՀԲ, 2012թ.)[45], 2013թ. համար՝ 8,500 ԱՄՆ դոլար, իսկ 2015թ. համար՝ 7,000 ԱՄՆ դոլար: Ինչ վերաբերում է էլեկտրաէներգիայի արտահանմանը, ապա այն էապես կախված չի լինելու համաշխարհային գների տատանումներից: Հետևաբար այս ապրանքախմբի արտահանումը հիմնականում կախված է լինելու համաշխարհային շուկայում պղնձի հանքնաքարի խտանյութի գների տատանումնե-

[44] Աղբյուր՝ ՀԲ «Global Economic Monitor (GEM) Commodities» առցանց տվյալների բազա (վերջին այցելություն՝ 2012թ. սեպտեմբերի 21)
[45] http://siteresources.worldbank.org/INTPROSPECTS/Resources/334934-1304428586133/Price_Forecast.pdf (վերջին այցելություն՝ 2012թ. սեպտեմբերի 21)

րից: Այդ իսկ պատճառով 2012թ. հնարավոր է այս ապրանքատեսակի արտահանման կրճատում՝ եթե ֆիզիկական ծավալների ավելացման միջոցով չկոմպեսացվեն գների անկումը: Հետևաբար, այս խումբը 2012թ. կարող է անկում գրանցել, իսկ 2013թ. արժեքը կզիջի 2011թ արժեքին:

## Թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի հիմնական արտահանվող ապրանքներ

**Ոսկու արտահանումը, ընդհանուր առմամբ, դրական միտում է արձանագրել ճգնաժամի տարուց ի վեր, որն կշարունակվի 2012-2013թթ. ևս պայմանավորված համաշխարհային շուկայում ոսկու գներով:** Ոսկին (անմշակ, կիսամշակ, փոշի), ճգնաժամի տարում կտրուկ աճ արձանագրեց (511.9%) 2008թ. համեմատ (տե՛ս գծապատկեր 16), այնուհետ՝ որոշակի անկում (2010թ.՝ -12.9%) և 2011թ. նախորդ տարվա նկատմամբ կտրուկ աճ (135.6%): Ընդհանուր առմամբ համաշխարհային շուկայում ոսկու մեկ տրոյան ունցիայի արժեքը 2011թ. 28.1% աճել էր նախորդ տարվա նկատմամբ (1,569 ԱՄՆ դոլար 1,225 դոլարի համեմատ)[46], ինչը կարող էր խթան հանդիսանալ ոսկու արտահանման ծավալների աճի տեսանկյունից: 2012թ. հունվար-հունիս ամիսներին ոսկու արտահանումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 59.7% (82.4մլն ԱՄՆ դոլար 75.1մլն ԱՄՆ դոլարի համեմատ): ՀԲ-ն (2012թ.) 2012թ. համար ոսկու գինը կանխատեսում 1,650 ԱՄՆ դոլար, իսկ 2013թ. 1,600 ԱՄՆ դոլար, հետևաբար այս ապրանքատեսակի գծով անկում չի սպասվի:

Գծապատկեր 16. Թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի հիմնական արտահանվող ապրանքերը 2007-2011թթ. (մլն ԱՄՆ դոլար)




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.

**Աղամանդե քարի արտահանումը ճգնաժամի տարում անկում արձանագրելուց հետո դրական միտում արձանագրեց 2010-2011թթ., սակայն ծավալները զիջում էին նախաճգնաժամային մակարդակին, իսկ 2012թ. հավանաբար անկում կգրանցվի:** Այս խմբի հիմնական արտահանվող ապրանքը՝ աղամանդե քարը ճգնաժամի տարում, կտրուկ անկում (58.5% 2008թ. համեմատ) գրանցելուց հետո, աճ արձանագրեց 2010թ. (51.1%), ինչպես նաև 2011թ. (26.0%), սակայն 2011թ. արձանագրած արտահանման արժեքը զիջում էր 2008թ. մակարդակին (տե՛ս գծապատկեր 16): Ինչ վերաբերում է աղամանդին, ապա տաշած (polished) աղամանդի «INDEX Online» գների ինդեքսը 2011թ. հուլիսից որոշակի անկում էր գրանցում (գնային փուչիկից հետո),[47] իսկ 2012թ. օգոստոսին գների անկումը 8.5% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ և 2% 2012թ. հուլիսի համեմատ)[48] : Կանխատեսվում էր նաև որ գները կարող են սկսել վերականգնվել այս սեպտեմբերից[49], առաջարկը կկրճատվի, իսկ ըստ «BMO Capital Markets»-ի[50] 2013թ. աղամանդի գները կաճեն 3%: Քանի որ հիմնական ներմուծվում են աղամանդի քարերը դրանք տաշելու և հետագայում այլ երկրներում վաճառքի նպատակով, ապա այստեղ որոշիչ կլինեն մի քանի գործոն (գին, հմտություններ, օտարերկրյա սպառողների նախապատվությունները և այլն), ինչով էլ պայմանավորված

[46] Տե՛ս նախորդ տողատակի հղումը
[47] http://www.idexonline.com/portal_FullNews.asp?id=37085 (վերջին այցելություն՝ 2012թ. սեպտեմբերի 21)
[48] http://www.idexonline.com/portal_FullNews.asp?id=37187 (վերջին այցելություն՝ 2012թ. սեպտեմբերի 21)
[49] http://www.idexonline.com/portal_FullNews.asp?id=37085 (վերջին այցելություն՝ 2012թ. սեպտեմբերի 21)
[50] http://www.bloomberg.com/news/2012-06-08/diamond-prices-to-stagnate-in-2012-on-euro-crisis-bmo-forecasts.html (վերջին այցելություն՝ 2012թ. սեպտեմբերի 21)

կլինի ՀՀ ադամանդի քարերի արտահանումը: 2012թ. հունվար-հունիս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ադամանդի քարի արտահանումը կրճատվել էր -11.6%՝ կազմելով 40.5մլն ԱՄՆ դոլար:

**Թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի ապրանքների խմբի աճը 2012թ. պայմանավորված կլինի ոսկու արտահանման աճով:** Այս խմբում 2012թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանման 9.7% աճ է գրանցել (82.4մլն ԱՄՆ դոլար), հիմնականում պայմանավորված ոսկու արտահանմամբ: Այս խմբում 2012թ. աճ կարող է արձանագրվել, միայն եթե ոսկու և այս խմբի ապրանքների աճը կոմպենսացնի ադամանդի քարի արտահանման կրճատումը (եթե ադամանդի քարի արտահանումը կտրուկ չավելանա 2012թ. հուլիս դեկտեմբեր ամիսներին):

<u>Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի հիմնական արտահանվող ապրանքներ</u>

**Նախքան ճգնաժամը հիմնական արտահանվող ապրանքների խումբը, 2009թ. կտրուկ անկում գրանցելուց հետո, գերազանցեց 2008թ. մակարդակը 2011թ., սակայն աճը ուղեկցվեց ալյումինե փայլաթիթեղների և չզտված, պղնձե անոդ էլ. զտման համար նախատեսված պղնձի արտահանման աճով, մինչդեռ հիմնական ապրանքատեսակը՝ երկաթամիահալվածքը 2010-2011թթ. մասնակի էր վերականգնվել:** Երկաթամիահալվածքի[51] արտահանումը կտրուկ անկում գրանցեց ճգնաժամի տարում (-58.6%) 2008թ. նկատմամբ (տե՛ս գծապատկեր 17): 2010թ. արտահանումը որոշակիորեն վերականգնվեց (38%) 2009թ. համեմատ, իսկ 2011թ.՝ գրեթե նույն մակարդակին մնաց (1.4% աճ): Ալյումինե փայլաթիթեղների (<0.2մմ) արտահանումը կտրուկ աճ արձանագրեց 2009թ. նախորդ տարվա համեմատ (59.6%), երբ համաշխարհային շուկայում ալյումինի գները ընկել էին 35.3% (2008թ.՝ 2,572.8 ԱՄՆ դոլար, 2009թ.՝ 1,664.8 ԱՄՆ դոլար)[52]: Իսկ հետագա գների բարձրացումը նպաստեցին ալյումինե փայլաթիթեղների 2010-2011թթ. արտահանման աճին (համապատասխանաբար՝ 35.1% և 10.8%): Չզտված, պղնձե անոդ էլ. զտման համար նախատեսված պղնձի արտահանումը կտրուկ աճ արձանագրեց 2010-2011թթ. (համապատասխանաբար՝ 53.2% և 23.7%):

**Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանումը 2012թ. կնվազի 2011թ. նկատմամբ**: 2012թ. հունվար-հունիսին 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ այս խմբի ապրանքների անկումը կազմեց 13.5% (165.3մլն ԱՄՆ դոլար 2011թ. 191.3մլն ԱՄՆ դոլարի համեմատ): Հիմնական ապրանքների մոտ (գծապատկեր 17-ում ներկայացված) միայն մոլիբդենի (արտադրանք, թափոն և ջարդոն) արտահանման մեջ էր աճ արձանագրվել (15.1%), իսկ մնացածի մոտ անկում (ալյումինե փայլաթիթեղների (<0.2մմ) մոտ՝ -20.2%, երկաթամիահալվածքի մոտ՝ 17.3%, իսկ չզտված, պղնձե անոդ էլ. զտման համար նախատեսված պղնձի պարագայում՝ 9.8%): Համաշխարհային շուկայում ՀԲ-ի (2012թ.) կողմից կանխատեսվող 2012թ. պղնձի գինը մեկ տոննայի համար 2,000 ԱՄՆ դոլար է 2011թ. 2,401 ԱՄՆ դոլարի համեմատ (2013թ.՝ 2,350 ԱՄՆ դոլար)[53]: Իսկ ըստ 2012թ. հուլիսին ամերիկյան «Dahlman Rose & Co» ներդրումային բանկի կողմից կատարված կանխատեսումների իր իսկ կանխատեսված գներից էլ ցածր է լինելու մոլիբդենի գինը 2012-2013թթ. (համապատասխանաբար՝ 13.35 և 13.50 ԱՄՆ դոլար կանխատեսվող 15.00 համեմատ մեկ ֆունտի դիմաց)[54]: Իսկ

---

[51] Երկաթի և մոլիբդենի խարնուրդ (ֆերրոմոլիբդենիում)

[52] Աղբյուր՝ ՀԲ «Global Economic Monitor (GEM) Commodities» առցանց տվյալների բազա (վերջին այցելություն՝ 2012թ. սեպտեմբերի 22)

[53] http://siteresources.worldbank.org/INTPROSPECTS/Resources/334934-1304428586133/Price_Forecast.pdf (վերջին այցելություն՝ 2012թ. սեպտեմբերի 22)

[54] http://www.minormetals.com/scoop/?id=41023&v=0&lang=en&cid=161902&type=1 (վերջին այցելություն՝ 2012թ. սեպտեմբերի 22)

միջնաժամկետ ժամանակահատվածում աշխարհով մեկ էներգիայի կիրառման նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև պողպատի սպառման աճով պայմանավորված մոլիբդենի սպառումը կաճի, իսկ պահանջարկը 2015թ. կաճի 17%-ով: Հետևաբար, հնարավոր է այս խմբի արտահանման որոշակի անկում 2012թ.:

**Գծապատկեր 17. Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի հիմնական արտահանվող ապրանքները 2007-2011թթ. (մլն ԱՄՆ դոլար)**




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.

<u>**Պատրաստի սննդի արտադրանքի հիմնական արտահանվող ապրանքները**</u>

**Պատրաստի արտադրանքի արտահանումը ճգնաժամի տարում անկում գրանցելուց հետո, գերազանցեց 2008թ. մակարդակը 2011թ., պայմանավորված նաև կոնյակի արտահանմանն զուգահեռ այլ ապրանքների արտահանման աճով:** Ճգնաժամի տարում պատրաստի ապրանքի արտահանման անկումը 2008թ. կազմեց 40.7%, իսկ արդեն 2011թ. այն 15.2մլն ԱՄՆ դոլարով գերազանցեց նախաճգնաժամային տարում գրանցված մակարդակին՝ կազմելով՝ 183.8մլն ԱՄՆ դոլար: Հիմնական ապրանքատեսակի՝ կոնյակի, ռոմի, ջինի, օղու լիկյորի ապրանքների խմբի արտահանումը ճգնաժամի տարում 46.4% կրճատվելուց հետո (ՌԴ ծավալների կրճատմամբ պայմանավորված) 2008թ. համեմատ 2011թ. գրեթե նույն մակարդակին էր ինչ-որ 2008թ. (տե՛ս գծապատկեր 18): Եթե 2008թ. այս խմբի արտահանումը պատրաստի արտադրանքի արտահանման 79.5% է կազմել, ապա 2011թ. այն կազմել է 71.4%: Դեպի ՌԴ արտահանումը 2008թ. 120.8մլն ԱՄՆ դոլար էր կազմել (խմբի արտահանման 90.5%), ապա 2011թ. այն 96.2մլն ԱՄՆ դոլար կազմեց (խմբի արտահանման 73.3%): Երկրորդ տեղը բաժին էր ընկնում (արտահանման ծավալներով) Չինաստանին (ոչ ավանդական սփյուռքի կամ ԱՊՀ երկրի որտեղ արտահանվել է այս ապրանքատեսակը): Չինաստան արտահանվել է 13.4մլն ԱՄՆ դոլարի ապրանք 2010թ. 109.9 հազար ԱՄՆ դոլարի համեմատ, ինչը նշանակում է, որ շուկաների դիվերսիֆիկացիայի հիմքն է դրվում: Պատրաստի արտադրանքի արտահանման մեջ երկրորդ տեղում է սիգարետ և սիգար ապրանքների խումբը: Այստեղ արտահանումը 2007թ.-ից ի վեր աճ էր արձանագրում, իսկ 2011թ. նախորդ տարվա համեմատ կտրուկ աճը պայմանավորված էր ՀՀ-ից դեպի Իրաք արտահանման ծավալների աճով: Եթե 2010թ. արտահանումը կազմում էր 151.2 հազար ԱՄՆ դոլար ապա, 2011թ. այն կազմեց 4.1մլն ԱՄՆ դոլար: 2011թ. աճել էր նաև արտահանումը դեպի Վրաստան (2.6մլն ԱՄՆ դոլար 2010թ. 1.5մլն ԱՄՆ դոլարի համեմատ), ՌԴ (2.9մլն ԱՄՆ դոլար 2010թ. 1.9մլն ԱՄՆ դոլարի համեմատ), և այլն: 2007թ.-ից ի վեր աճել է նաև այլ կերպ պահածոյացված պտուղ, ընկույզ, հատապտուղ, ինչպես նաև ջրեր, բնական կամ արհեստական հանքային ջուր և ըմպելիք (առանց շաքարի) ապրանքախմբերի արտահանումը:

Գծապատկեր 18. Պատրաստի սննդի արտադրանքի հիմնական արտահանվող ապրանքերը 2007-2011թթ. (մլն ԱՄՆ դոլար)







Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.

Գծապատկեր 19. Պատրաստի սննդի արտադրանքի այլ արտահանվող ապրանքները 2007-2011թթ. (հազար ԱՄՆ դոլար)







Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.

**2010-2011թթ. պատրաստի արտադրանքի արտահանվող այլ ապրանքների աճ արձանագրվեց, ինչը ապրանքների դիվերսիֆիկացիա կարող է ապահովել:** Թեպետ մնացած ապրանքների արտահանումը 5մլն. ԱՄՆ դոլարից պակաս է եղել 2011թ., սակայն պատրաստի արտադրանքի խմբում մի շարք ապրանքների գծով կտրուկ աճ է արձանագրվել, ինչը կարող է նշանակել, որ ապրանքների արտահանման գծով դիվերսիֆիկացիայի հիմք է դրվում: Այդպիսի ապրանքատեսակներից են՝ այլ բանջարեղենի պահածոները (չսառեցրած՝ առանց քացախի), մրգահյութերը և բանջարեղենի հյութերը, շաքարը, հանքային ջրերը և ըմպելիքները (շաքարով) և այլն (տե՛ս գծապատկեր 19): Որոշ ապրանքների գծով 2011թ. արտահանման կրճատում է գրանցվել:

**2012թ. պատրաստի արտադրանքի արտահանումը աճ կարձանագրի, որը նաև կշարունակվի 2013թ.:** 2012թ. հունվար-հունիս ամիսներին 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ պատրաստի արտադրանքի արտահանումը աճել էր 59.8%-ով՝ կազմելով 108մլն ԱՄՆ դոլար: Բոլոր հիմնական ապրանքատեսակները ևս աճ արձանագրեցին, իսկ ամենակտրուկ աճը գրանցվել է սիգարետ և սիգարի գծով՝ 117%: Հետևաբար

պատրաստի արտադրանքի արտահանումը 2012 աճ կարծանագրի, որը նաև կշարունակվի 2013թ., քանի որ ինչպես և 2012թ. համար հիմնական արտահանման շուկա հանդիսացող երկրներում դրական աճի միտում է կանխատեսվում:

*Եզրակացություն*
2011թ. ՀՀ ապրանքների արտահանման մեջ 7 ապրանքին[55] բաժին էր ընկնում արտահանման 68.6%: Հիմնական ապրանքատեսակին՝ պղնձի հանքաքարի խտանյութին բաժին էր ընկնում 19.5%-ը, իսկ 4 ապրանքատեսակներին միասին, որոնք ներկայացնում են հանքագործական և մետաղագործական արտադրությունները՝ 43.7%: Այս երկու արդյունաբերությունների արտադարանքի արտահանումը Հայաստանը բավականին խոցելի է դարձնում Համաշխարհային զարգացումների նկատմամբ (համաշխարհային գների փոփոխություն)՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության տատանումներով: Ըստ ԱԶԲ-ի (2010թ.) տնտեսության ճկունության (resilience) գործոններից է տնտեսական հիմքի բազմազանությունը՝ արտահանման տեսանկյունից չունենալ մեծ կախում որոշակի ապրանքներից կամ աշխարհագրական շուկաներից: Հետևաբար այս 4 ապրանքատեսակների կամ այս խմբերը ներկայացնող արդյունաբերությունների այլ ապրանքերի արտահանման աճը ՀՀ տնտեսությունը ավելի խոցելի է դարձնում: Մյուս կողմից սպասվող ՀՀ ադամանդե քարերի արդյունահանման ծավալների վերականգնմանը 2017թ.-ից («Bain & Company» և «AWDC», 2011թ.)[56], Հայաստանին բավականին դժվար կլինի մրցակցել գնային առավելությունների հաշվին եթե ՀՀ-ն չառաջարկի այնպիսի հմտությունների առկայություն որոշակի գնային սահմաններում՝ Հայաստանը օտարերկրյա գնորդների համար գրավիչ դարձնելու տեսանկյունից: Թեպետ պատրաստի արտադրանքի արտահանման մեջ 2011թ. գերակշռել է կոնյակի, ռոմի, ջինի, օղու լիկյորի ապրանքատեսակին, սակայն, արտահանվող երկրների տեսանկյունից տեղի է ունենում դվերսիֆիկացիա, իսկ խմբի ապրանքերի գծով տեղի է ունենում արտահանվող ապրանքների որոշակի խմբի ձևավորում, որոնք համապատասխան ռազմավարության որդեգրման պարագայում կարող են դառնալ ավելի մրցունակ:

## ԳԼՈՒԽ 3. Տնտեսության հիմնական սուբյեկտների սկզբնական պայմանները

Այս գլխում դիտարկվում են տնտեսության հիմնական մասնակիցների կամ սուբյեկտների սկզբնական պայմանները, քանի որ դրանց առկայությամբ է պայմանավորված, որքան հեշտ կհաղթահարեն ճգնաժամը այդ սուբյեկտները և ինչպիսի հաղթահարման ռազամվարություններ կորդեգրվեն, ինչով էլ պայմանավորված կլինի, թե ինչպիսին կլինի ճգնաժամի բացասական ազդեցությունը տնային տնտեսությունների, կառավարության և մասնավոր ընկերությունների և երկրի տնտեսության վրա:

### 3.1 Տնային տնտեսությունների սկզբնական պայմաններ

**2006-2008թթ. տ/տ-ների մոտ ՀՀ առևտրային բանկերի կողմից վերցված վարկերի ծավալների աճը կարող էր փաստել այն մասին, որ տ/տ-ները դժվարություններ կունենան հաղթահարելու ճգնաժամի բացասական հետևանքները, տարբեր եկամուտների աղբյուրներից ստացվող գումարների կրճատման պարագայում:** Որպես տնային տնտեսությունների սկզբնական պայմաններ (մնացած հավասար այլ պայմանների դեպքում բացասական շոկերի հաղթահարման տեսանկյունից) զեկույցում դիտարկվում են տ/տ-

[55] Պղինձի հանքաքար, խտանյութ, երկաթամիահալվածք, պղինձ չզտված, պղնձե անոդ էլ. զտման համար, ալյումինե փայլաթիթեղներ<0,2մմ, էլեկտրաէներգիա, կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր, ադամանդե քար
[56] Ըստ «Bain & Company»-ի (2011թ., էջ 64) միայն 2017թ. անմշակ ադամանդի առաջարկը կհասնի նախաճգնաժամային մակարդակին:

ներին տրված ՀՀ առևտրային բանկերի վարկերը[57]: 2006-2008թթ., ՀՀ տ/տ-ների վարկերի ծավալների աճ էր արձանգրվել (տե՛ս գծապատկեր 21): ՀՀ առևտրային բանկերի կողմից տ/տ-ներին տրամադրված վարկերի ծավալները 31.12.2008թ. դրությամբ 31.12.2006թ. նկատմամբ գերազանցեց 2.82 անգամ (կազմելով 332,837 մլն. դրամ), ինչը նշանակում էր, որ եթե տ/տ-ների տարբեր եկամտի աղբյուրներից ստացվող գումարների անկում արձանագրվեր, նրանք դժվարություն կունենային հաղթահարելու ճգնաժամի հետևանքները (այլ բացասական ռազմավարությունների որդեգրում կամ վարկերի/պարտքերի ծավալների աճ՝ ներառյալ բարեկամներից):

**Գծապատկեր 20. Տ/տ-ների մոտ վարկերի կամ պարտքերի առկայություն 2009-2011թթ. (% ընդհանուրի մեջ)**




Աղբյուր՝ ՀՌԿԿ «Կովկասյան Բարոմետր» առցանց տվյալների բազաներ 2009թ., 2010թ., 2011թ.

**Գծապատկեր 21. ՀՀ առևտրային բանկերի կողմից տ/տ-ներին տրված վարկերը 2006-2011թթ. և 2012թ. հունիս (ժամանակահատվածի վերջ, մլն. ՀՀ դրամ)**




Աղբյուր՝ ՀՀ ԿԲ առցանց տվյալների բազա, 2012թ.

**Որպես ՀՀ առևտրային բանկերի կողմից հիմնականում զգուշավոր ռազմավորություն որդեգրելու հետևանք տ/տ-ներին տրված վարկերի ծավալը 2009թ. կրճատվեց, հիմնական վարկատեսակը՝ սպառողական վարկերի ծավալը գրանցեց մոտ 22% անկում, իսկ 2010թ. տ/տ-ների կախումն այս աղբյուրից աճեց՝ որպես ճգնաժամի բացասական ազդեցության հաղթահարման ռազմավարություն:** Սակայն ճգնաժամի տարում տրամադրվող վարկերի ծավալների կրճատում նկատվեց (24,726 մլն դրամի չափով), ինչը փաստում է բանկերի կողմից հիմնականում զգուշավոր քաղաքականություն որդեգրելու մասին: Եթե 2008թ. ՀՀ տ/տ-ներին տրված սպառողական վարկերի ծավալը կազմել էր 174,512 մլն. դրամ (տե՛ս գծապատկեր 22), ապա այդ ծավալը 2009թ. արձանագրել էր 21.8% անկում (136,435 մլն. դրամ), ինչը նշանակում է, որ ՀՀ տ/տ-ները պետք է հույսը դնեին այլ ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունների վրա ճգնաժամի բացասական ազդեցությանը դիմակայելու համար՝ տարբեր եկամուտների աղբյուրներից ստացվող գումարների կրճատման պարագայում: Բացառությամբ վարձու աշխատանքից ստացվող իրական միջին ամսական եկամուտների (տ/տ մեկ շնչի հաշվով) աննշան փոփոխության, ինքնազբաղվածությունից, գյուղմթերքի և անասունի վաճառքից, սեփականությունից, թոշակներից և նպաստներից, տրանսֆերտներից իրական եկամուտները անկում էին արձանագրել 2009թ. նախորդ տարվա համեմատ, մինչ դեռ այլ աղբյուրների իրական եկամուտները աճ էին արձանագել (տե՛ս Հավելված 3, աղյուսակ 1):

[57] Թեպետ տնային տնտեսությունները նաև վարկեր էին վերցնում ՈՒՎԿ-ներից ևս, սակայն ՀՀ ԿԲ-ի կողմից ցուցանիշների վերաբերյալ տվյալները միայն առկա են 2011թ.–ից վեր, որի պատճառով այստեղ վերլուծվել են բանկերի կոմից տրված վարկերը տնային տնտեսություններին: Տ/տ-ների կողմից բարեկամներից կամ հարազատներից վերցված պարտքերի վերաբերյալ տվյալների բացակայության պատճառով այս ցուցանիշները չեն դիտարկվում այստեղ:

Իսկ սա նշանակում է, որ 2009թ. տ/տ-ները դիմում էին ճգնաժամի հաղթահարման բացասական ռազմավարությունների որդեգրմանը (պարտքեր, խնայողությունների օգտագործում և այլն): 2010թ. տ/տ-ների մոտ ՀՀ առևտրային բանկերից վերցրած վարկերի ծավալների աճը պայմանավորված է եղել նրանով, որ ավելի շատ տ/տ-ներ սկսեցին դիմել այս աղբյուրի օգնությանը, որպես ճգնաժամի հաղթահարման ռազմավարություն (բանկերի կողմից զգուշավոր ռազմավորությունից հրաժարվելու հետևանքով), որի մասին նաև փաստում են 2009թ. նկատմամբ ավելի շատ տ/տ-ների մոտ վարկերի կամ պարտքերի առկայությունը (տե՛ս գծապատկեր 20), ինչպես նաև վարկերի ծավալների աճը (տե՛ս գծապատկեր 21): 2010թ. ՀՀ տ/տ-ների 59.8%-ը արձանագրել է վարկերի կամ պարտքերի առկայություն, մինչդեռ 2009թ. տ/տ-ների մոտ 50.6%-ն էր փաստել, որ ունեն պարտքեր կամ վարկեր: ՀՀ առևտրային բանկերի կողմից տ/տ-ներին սպառողական վարկերի ծավալները 2010թ. նախորդ տարվա նկատմամբ արձանագրեցին 20% աճ, իսկ տ/տ-ներին ընդհանուր վարկերի ծավալի աճը կազմեց մոտ 20% ևս:

**Գծապատկեր 22. ՀՀ առևտրային բանկերի կողմից տ/տ-ներին տրված հիմնական վարկատեսակները 2006-2011թթ. և 2012թ. հունիս (ժամանակահատվածի վերջ, մլն. ՀՀ դրամ)**




Աղբյուր՝ ՀՀ ԿԲ առցանց տվյալների բազա, 2012թ.

**2011թ. ՀՀ առևտրային բանկերի կողմից տ/տ-ներին սպառողական վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված էր վարկերի չափերի փոփոխությամբ, ինչպես նաև հիփոթեքային վարկերի ծավալների աճով, ինչը փաստում է այն մասին, որ հիմնականում այս աղբյուրից օգտվել են վարկունակ տ/տ-ները:** Հետաքրքրական է նկատել, որ 2011թ. նախորդ տարվա նկատմամբ ՀՀ տ/տ-ների 48.7%-ը փաստել էր վարկերի կամ պարտքերի առկայության վերաբերյալ 2010թ. 59.8%-ի համեմատ (տե՛ս գծապատկեր 20), մինչդեռ 2011թ. 2010թ. համեմատ ՀՀ առևտրային բանկերի կողմից տ/տ-ներին տրված վարկերի ծավալները աճել էին մոտ 29.7%՝ կազմելով 478,702 մլն. դրամ (տե՛ս գծապատկեր 21): Այդ նույն ժամանակահատվածում տ/տ-ների տրված սպառողական վարկերի ծավալը նախորդ տարվա համեմատ աճել էին մոտ 33%-ով կազմելով 271,377 մլն. ՀՀ դրամ, իսկ հիփոթեքային վարկերի ծավալի աճը կազմեց մոտ 20% (տե՛ս գծապատկեր 22): Այս հանգամանքը հնարավոր է բացատրել նրանով, որ տրամադրված վարկերի ծավալը հավանաբար ուղեկցվել է վարկառուների քանակի առնվազն պահպանմամբ, սակայն վարկերը տրվել են հիմնականում վարկունակ տ/տ-ներին, որոնց վարկի գումարը կարող էր մեծ լինել, հատկապես հիփոթեքային վարկերի գծով: Իսկ սա նշանակում է, որ այն տ/տ-ները, որոնք կարող է վարկունակ չհամարվեին, պետք է հույսը դնեին այլ հաղթահարման ռազմավարությունների վրա, իսկ վատագույն դեպքում այլևս չէին դիմում որևէ ռազմավարության օգնությանը, կամ էլ, հավանաբար աճել էր ճգնաժամի ազդեցությունն հաղթահարած տ/տ-ների քանակը: Անեն

դեպքում վարկունակ տ/տ-ներն էլ վարկերի մարման տեսանկյունից պետք է հույսը դնեն իրական եկամուտների առնվազն պահպանման վրա, ներկա սպառման մակարդակը պահպանելու և վարկերը վերադարձնելու համար:

Գծապատկեր 23. Միջին ամսական իրական աշխատավարձ ը ՀՀ-ում, 2007-2011թթ.




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ հեղինակի սեփական հաշվարկ, 2005=100

**2012-2013թթ. իրական աշխատավարձերի կամ այլ եկամտի աղբյուրներից իրական աճ չարձանագրելու պարագայում տ/տ-ները դժվարություններ կունենան պահպանելու սպառման մակարդակը և 2014-2015թթ այլ տիպի շոկերին դիմակայել:** 31.12.2009թ. նկատմամբ 30.06.2012թ. դրությամբ տրամադրված վարկերի ծավալները գերազանցեցին 1.7 անգամ (կազմելով 521,355 մլն. ՀՀ դրամ): Այս պարագայում միայն տարբեր եկամուտների աղբյուրներից ստացվող իրական եկամուտների աճը կարող է հնարավորություն տալ տ/տ-ներին հետագայում խուսափել բացասական հաղթահարման ռազմավարություններ որդեգրելու և պահպանել տնօրինվող եկամտի չափը: 2007-2009թթ. իրական միջին ամսեկան աշխատավարձերը աճում էին, սակայն 2010թ. նախորդ տարվա համեմատ - 1.2% անկումը (տե՛ս գծապատկեր 23) գրանցվեց (78,420 դրամ), իսկ 2011թ. 2010թ. համեմատ անկումը -2.2% (76,661 դրամ) էր: Հետևաբար, եթե իրական եկամուտների հատկապես վարձու աշխատանքից ստացվող եկամուտների իրական աշխատավարձերի աճ չգրանցվի 2012-2013թթ., ապա դա կարող է դժվարեցնել վարկերի մարումը, ընդհանուր առմամբ, և սոցիալական խնդիրներ առաջացնել տ/տ-ների մոտ, որի հետևանքով առկա իրական սպառման մակարդակը կնվազի: Իսկ տ/տ-ները մեծ դժվարություններ կունենան հետագայում նոր տնտեսական շոկերին դիմակայելու տեսանկյունից, և իրական ՀՆԱ-ի անկումը կարող է ավելի խորն լինել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տ/տ-ների վերջնական սպառմանն ուղղված ծախսերը ՀՆԱ-ի ամենամեծ ծախսային բաղադրիչն է (տե՛ս Հավելված 3, աղյուսակ 2) և այն 2011թ. կազմել էր 83.2%:

## 3.2 Մասնավոր ընկերությունների սկզբնական պայմաններ

**2006թ. նկատմամբ 2008թ. մասնավոր ընկերությունների կողմից ՀՀ առևտրային բանկերից վերցված վարկերի ծավալների ավելի քան կրկնապատկումը, ընդհանուր առմամբ, դժվարություններ կստեղծեր մասնավոր ընկերությունների մոտ հաղթահարելու ճգնաժամի բացասական ազդեցությունը տ/տ-ների վերջնական սպառման ուղղված ծախսերի կրճատման պարագայում, եթե կառավարությունը չորդեգրեր համապատասխան ընդլայնողական քաղաքականություն:** Որպես մասնավոր ընկերությունների սկզբնական պայմաններ զեկույցը դիտարկում է մասնավոր ծեռնարկություններին տրված ՀՀ առևտրային բանկերի վարկերը[58]: 31.12.2006թ. նկատմամբ 31.12.2008թ. դրությամբ մասնավոր ընկերությունների կողմից ՀՀ առևտրային բանկերից վերցված վարկերի ծավալները աճեցին մոտ 2.53 անգամ (272,489 մլն. ՀՀ դրամ 2006թ. վերջի դրության 107,746 մլն. ՀՀ դրամ-ի համեմատ): Ընդհանուր առմամբ, երկու տարվա ընթացքում վարկերի ծավալների այսպիսի աճը կսահմանափակեր մասնավոր ընկերությունների կարողությունը՝ վարկերը մարելու և ճգնաժամին դիմակայելու տեսանկյունից, եթե տ/տ-ները կրճատեին վերջնական սպառմանն ուղղված ծախսերը ճգնաժամի ժամանակ՝

[58] ՀՀ առևտրային բանկերից վերցված վարկերի ընտրությունը և այլ ցուցանիշների չդիտարկումը, ինչպես նաև դրանց էկոնոմետրիկ մոդելում ներառելը, հիմնականում պայմանավորված է եռամսյակային տվյալների առկայությամբ:

պայմանավորված տարբեր եկամտի աղբյուրներից ստացվող իրական գումարների կրճատմամբ: Այս պարագայում կարևորվելու էր կառավարության դերը՝ հակաճգնաժամային միջոցառումների իրականացման միջոցով համախառն պահանջարկի վրա ազդելու տեսանկյունից, ինչով էլ պայմանավորված կլինեին մասնավոր ձեռնարկությունների ֆինանսական ցուցանիշները:

**Գծապատկեր 24. ՀՀ առևտրային բանկերի կողմից մասնավոր ընկերություններին տրված վարկերը 2006-2011թթ. և 2012թ. հունիս (ժամանակահատվածի վերջ, մլն. ՀՀ դրամ)**




Աղբյուր՝ ՀՀ ԿԲ առցանց տվյալների բազա, 2012թ.

**Գծապատկեր 25. ՀՀ ձեռնարկությունների պարտքերը բանկերին վարկերի և փոխառությունների գծով, 2008-2011թթ. (մլրդ. դրամ)**




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ, հեղինակի սեփական հաշվարկ

**Ճգնաժամի տարում մասնավոր ընկերությունների վարկերի ծավալը ՀՀ առևտրային բանկերից աճեց 37%-ով 2008թ. նկատմամբ, հիմնականում պայմանավորված խոշոր և միջին կազմակերպությունների բանկերին վարկերի և փոխառությունների գծով պարտքերով, թեպետ դրանց միայն մոտ 22%-ն է 2009թ. վնասով աշխատել**: Ճգնաժամի տարում նախորդ տարվա համեմատ տնային տնտեսությունների, ինչպես նաև պետական հիմնարկների կողմից վերջնական սպառմանն ուղղված իրական ծախսերի կրճատումը (տե՛ս Հավելված 3, աղյուսակ 2) հանգեցրեց նրան, որ մասնավոր ձեռնարկությունները պետք է դիմեին արտաքին ֆինանսավորման աղբյուրների՝ վարկերի ներգրավմանը ճգնաժամի բացասական ազդեցությունը հաղթահարելու համար: 31.12.2009թ. դրությամբ մասնավոր ընկերություններին տրված վարկերի ծավալները 31.12.2008թ. համեմատ աճել էին մոտ 37%-ով՝ կազմելով 373,653 մլն. ՀՀ դրամ (տե՛ս գծապատկեր 24): 31.12.2010թ. դրությամբ նախորդ ժամանակահատվածի համեմատ մասնավոր ձեռնարկություններին տրված վարկերի ծավալը ևս աճ արձանագրեց 31%-ով: Հետաքրքրական է նկատել, որ 2008թ. ՀՀ ձեռնարկությունների վարկերի և փոխառությունների գծով բանկերին պարտքերի մեջ փոքր ձեռնարկությունների պարտքերը կազմում էին 41%-ը, իսկ ընդհանուր ծավալը 411.3 մլրդ. ՀՀ դրամ (տե՛ս գծապատկեր 25), մինչդեռ ճգնաժամի տարում նախորդ տարվա նկատմամբ պարտքերի չափը կրճատվեց 2.4 անգամ՝ կազմելով173.4 մլրդ. ՀՀ դրամ: Այդ նույն ժամանակահատվածում խոշոր և միջին կազմակերպությունների բանկերին վարկերի և փոխառությունների գծով պարտքերի ծավալը աճեց մոտ 61%-ով՝ կազմելով  մոտ 941 մլրդ. ՀՀ դրամ: 2009թ. նախորդ տարվա համեմատ, ընդհանուր առմամբ, խոշոր և միջին կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթի և համախառն շահույթի (վնաս(-)) փոփոխությունը համապատասխանաբար կազմեց՝ 11.4 և 7.1%, մինչդեռ փոքր կազմակերպությունների մոտ այդ ցուցանիշների փոփոխությունը կազմեց համապատասխանաբար՝ -52.3% և -55.1%: Իսկ ինչ վերաբերում է կազմակերպությունների զուտ շահույթին, ապա այստեղ, ընդհանուր առմամբ երկու տիպի կազմկարպությունների մոտ զուտ շահույթը նախորդ տարվա նկատմամբ բացասական էր (-29.9% խոշոր և միջին ձեռնարկությունների պարագայում), սակայն փոքր կազմակերպությունները շատ ավելի վատ վիճակում էին հայտնվել (-58.0%),

թեպետ խոշոր և միջին կազմակերպությունների միայն 22%-ն էր վնասով աշխատում[59]: Խոշոր և միջին կազմկերպությունները, հիմնականում, պարտքերի ավելացման շնորհիվ կարողացան որոշակիորեն դիմակայել ճգնաժամի ազդեցությանը, մինչդեռ ճգնաժամը խիստ բացասաբար անդրադարձավ փոքր ձեռնարկությունների գործունեության վրա ճգնաժամի տարում:

**2011թ. և արդեն 2012թ. կեսին ՀՀ առևտրային բանկերի կողմից մասնավոր ընկերություններին տրված վարկերի ծավալների կտրուկ աճը 2013-2015թթ. կսահմանափակի ձեռնարկությունների ապագա տնտեսական շոկերին դիմակայելու կարողությունը, որն էլ իր հերթին կախված կլինի մասնավոր ընկերությունների իրական արտադրողականության աճով:** 30.06.2012թ. դրությամբ 31.12.2010թ. նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի կողմից մասնավոր ընկերությունների տրամադրված վարկերի ծավալները գերազանցում էին 1.76 անգամ (863,342 մլն. դրամ 2010թ. 491,241 մլն. ՀՀ դրամի համեմատ): 2011թ. ինչպես խոշոր և միջին, այնպես էլ փոքր ձեռնարկությունների մոտ բանկերին պարտքերի ծավալները վարկերի և փոխառությունների գծով 2010թ. համեմատ համապատասխանաբար 30.8% և 56.2% աճ էին արձանագրել: Այս պարագայում 2013-2015թթ. ՀՀ-ում որևէ շոկ գրանցելու դեպքում, ընկերությունները դժվարություններ կունենան հաղթահարելու ապագա բացասական ազդեցությունները, եթե իրենք չդառնան ավելի մրցունակ, որի շնորհիվ կավելանան իրական աշխատավարձերը՝ հանգեցնելով տ/տ-ների կողմից վերջնական սպառմանն ուղղված ծախսերի ավելացմանը: Ըստ Պորտերի և Քեթելսի (2003թ., էջ 7) մրցունակության հիմնական ցուցանիշը՝ արտադրողականությունը, այն արժեքն է կամ գինը, որով ստեղծված ապրանքները և ծառայությունները «պահանջված են բաց շուկաներում», ինչպես նաև դրանց ստեղծման արդյունավետությունն է: Հետևաբար, արտադրողականությունն է վճռորոշ լինելու ընկերությունների կողմից վարկերի մարման և ավելի մրցունակ դառնալու տեսանկյունից: Եթե մեկ զբաղվածի հաշվով արտադրողականությունը (իրական ՀՆԱ/զբաղվածների թիվ[60]) 2008թ. 2.61 մլն. դրամ էր, ապա 2009-2010թթ. անկում արձանագրելուց հետո, 2011թ. 5.6% աճ արձանագրեց 2010թ. համեմատ՝ կազմելով 2.41 մլն դրամ: Ավելի մրցունակ ընկերությունները, ընդհանուր առմամբ, կարողանում են ավելի մեծ եկամուտներ ապահովել, մարել վարկերը և աշխատակիցներին ավելի բարձր աշխատավարձեր վճարել:

**Գծապատկեր 26. Մեկ զբաղվածի հաշվով իրական արտադրողականություն, 2008-2011թթ., մլն. ՀՀ դրամ (2005=100)**




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ, հեղինակի սեփական հաշվարկ

## 3.3 ՀՀ կառավարության սկզբնական պայմաններ

*«Բյուջեի փոքր պակասուրդ կամ ավելցուկ ունեցող երկրները, սովորաբար ընթացիկ հաշվի փոքր չափի պակասուրդ կամ ավելցուկ ունեցող երկրներն են..., որոնք ունեն ուժեղ սկզբնական դիրք, մնացած այլ հավասար պայմանների դեպքում, կկարողանան համեմատաբար ավելի հեշտ հաղթահարել համաշխարհային տնտեսական անկմամբ*

[59] Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2010թ.

[60] Առանձին տնտեսության ոլորտների գծով արտադրողականությունը (ոլորտի ավելացված արժեք/ոլորտում զբաղվածների թիվ) մեծ տատանում կարող է արձանագրել:

*պայմանավորված շոկերը,.. խթանող մակրոտնտեսական և աղքատության նվազեցման ավելի ընդգրկուն քաղաքականություն իրականացնել» (ՀԲ, 2008թ. էջ 3-4):*

**Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի սկիզբ առնելու պահին Հայաստանը կխուսափեր «կրկնակի» կամ «եռակի» համարվող ճգնաժամերից, սակայն ազդեցությունը տնտեսության վրա կախված կլիներ երկրի վիճակից, և կառավարության կողմից «իրական» կապերով փոխանցված արժութային ճգնաժամի բացասական ազդեցությունը մեղմելու արդյունավետ միջոցառումների իրականացումից:** Հաշվի առնելով, այն հանգամանքը որ արտաքին շոկերի փոխանցման հիմնականում «իրական» և ոչ թե «ֆիանսական» ուղիներն էին բացասաբար ազդելու ՀՀ տնտեսության վրա, ապա էլ ավելի մեծ ընթացիկ հաշվի անհավասարակշռությունը, որն հանգեցնելու էր «տեղական արժույթի փլուզման» կամ արժութային ճգնաժամի (Միլիեթթի-Ֆերրեթթի և Ռազին, 1996թ.) չէր ուղեկցվի այլ «ֆինանսական» համարվող ճգնաժամերով («կրկնակի» կամ «եռակի» ճգնաժամեր[61]), ինչպիսիք բանկային կամ պարտքային ճգնաժամերն են: «Իրական» կապերը, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերին տնային տնտեսություններին և մասնավոր ընկերություններին տրված վարկերի ծավալը, պետական պարտքի մակարդակը, հնարավորություն կտային ՀՀ-ին խուսափել բանկային և պարտքային ճգնաժամերից (տե՛ս գծապատկերներ 21, 24, 26 և 27): Հետևաբար կառավարությունը պետք է հաղթահարեր միայն «իրական» կապերով փոխանցված արժութային ճգնաժամի հետևանքները՝ հաշվի առնելով նախքան ճգնաժամը երկրի մակրոտնտեսական վիճակը (սկզբնական պայմաններ):

**Գծապատկեր 27. Ընթացիկ հաշվի պակասուրդը 2006-2011թթ. (մլն. ԱՄՆ-ի դոլար)**




Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարության առցանց տվյալների բազա, 2012թ.

**Գծապատկեր 28. Ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ 2006-2011թթ. (%),**




Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարության առցանց տվյալների բազա, 2012թ.

**Որպես ՀՖՃ-ի հետևանք արտաքին պետական պարտքի չափի աճը անխուսափելի էր 2008թ. նոյեմբերի դրությամբ՝ հաշվի առնելով ՀՀ ընթացիկ հաշվի և բյուջեի պակասուրդի մակարդակը:** ՀԲ-ն 2008թ. նոյեմեբերին առանձնացնում էր մակրոտնտեսական վիճակը նկարագրող երկու ցուցանիշ, որից էլ կախված էր լինելու երկրի կարողությունը հաղթահարելու ՀՖՃ-ի ազդեցությունը տնտեսության վրա: ՀԲ-ի կողմից լինելով դասակարգված որպես բարձր ընթացիկ հաշվի և բյուջեի պակասուրդ ունեցող երկիր,[62] Հայաստանը և իր նման մի շարք երկրներ «*եթե չունենային մուտք դեպի կայուն և մեծ արտաքին*

[61] «Կրկնակի» ճգնաժամ տեղի է ունենում այն դեպքում, երբ այն երկում որտեղ գրանցում է արժութային ճգնաժամ, տեղի է ունենում երկրի բանկային համակարգի ճգնաժամ: Իսկ «եռակի» ճգնաժամի դեպքում տեղի է ունենում նաև պարտքային ճգնաժամ: Առաջին անգամ որպես «կրկնակի» ճգնաժամ՝ արժութային և բանկային ճգնաժամերի գրանցվելուն անդրադերձել են Կամինսկին և Ռեյնհարթը (1999թ.), իսկ արժութային և պարտքային ճգնաժամերի միջև կապին անդրադարձել են Հերցը և Թոնգը (2008թ.):

[62] Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերությունը 3%-ը գերազանցելու դեպքում, բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերության 2%-ը գերզանցելու դեպքում: ՀԲ-ն հիմնվել է ԱՄՀ-ի կողմից հրապարակված, ՀԲ-ի տվյալների և աշխատակիցների գնահատականների վրա 2007թ. ցուցանիշների վրա:

*պետական ֆինանսավորմանը, հավանաբար ստիպված էին լինելու ճշգրտումների գնալ*[63]*»* (ՀԲ, 2008թ., էջ 5): Հետևաբար պետական արտաքին պարտքի ավելացումն էր լինելու այն աղբյուրը, ինչը հնարավորություն կտար ՀՀ կառավարությանը սոցիալական ուղղվածության ծախսերը ոչ միայն պահպանելու, այլ նաև ավելացնելու համար, երկրում ավելի մեծ աղքատության մակարդակի աճը կանխելու նպատակով՝ տնտեսական ճգնաժամով պայմանավորված հարկային եկամուտների կրճատման պարագայում:

**Գծապատկեր 29. Պետական բյուջեի դեֆիցիտ / ՀՆԱ 2006-2011թթ. (%)**




Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարության առցանց տվյալների բազա, 2012թ.

**Արժութային ճգնաժամը բնակչության իրական եկամուտների նվազման պարագայում թանկ ներմուծման ծավալների կրճատման հանգեցրեց, ինչն էլ իր հերթին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կրճատման բերեց, իսկ կառավարությունը այս իրավիճակը հաղթահարեց պետական պարտքի աճի միջոցով 2009թ.:** 2009թ. ընթացիկ հաշվի անհավասարկշռությամբ պայմանավորված արժութային ճգնաժամի պարագայում, ընթացիկ հաշվի պակասուրդը նույնիսկ նախորդ տարվա նկատմամբ նվազել էր (տե՛ս գծապատկեր 27), մինչդեռ ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ էլ ավելի էր խորացել (տե՛ս գծապատկեր 28): Ճգնաժամի տարում ապրանքների ներմուծումը նվազեց մոտ 1.1 մլրդ ԱՄՆ դոլարով[64] (տե՛ս Հավելված 3, աղյուսակ 5), իսկ ապրանքների ներմուծումը արտահանմանը գերազանցեց մոտ 4.7 անգամ (2008թ.՝ 4.2 անգամ): 2009թ. հարկային եկամուտները նվազեցին մոտ 16% նախորդ տարվա համեմատ, մինչդեռ ավելացված արժեքից հարկերը, որոնք 2008թ. պետական բյուջեի եկամուտների 41%ն էին կազմում, իսկ հարկային եկամուտների 53%-ը, ճգնաժամի տարում 20% անկում գրանցեցին (տե՛ս Հավելված 3, աղյուսակ 3): Ընդհանուր առմամբ բնակչության իրական նվազող դրամական եկամուտների պարագայում, կառավարությունը պետք է որդեգրեր ընդլայնողական քաղաքականությունը՝ պետական պարտքի ավելացման միջոցով: 2009թ. պետական բյուջեից բոլոր ծախսերն ըստ գործառական դասակարգման խմբերի աճ արձանագրեցին (տե՛ս Հավելված 3, աղյուսակ 4): Իսկ պետական բյուջեի դեֆիցիտի (2009թ. պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերությունը -7.6% էր կազմել (տե՛ս աղյուսակ 30)) ֆինանսավորման հիմնական աղբյուրներից էին պետական պարտքի ավելացումը՝ հատկապես արտաքին պետական պարտքի: 31.12.2009թ. դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ՀՀ պետական արտաքին պարտքը աճեց մոտ 1.41 մլդ ԱՄՆ դոլարով (տե՛ս գծապատկեր 30), իսկ ներքին պետական պարտքը այդ նույն ժամանակահատվածում աճեց 48.7 մլդ. ԱՄՆ դոլարով (տե՛ս գծապատկեր 31):

---
[63] Ֆիսկալ և արտաքին ճշգրտումներ (fiscal and external adjustment)
[64] Ըստ առևտրի վիճակագրության

**Պակասորդի այլ աղբյուրներից ֆինանսավորմամբ շարունակվող սոցիալական ուղղվածության ծախսերի աճը (ընդհանուր առմամբ) 2010-2011թթ. հանգեցրեց արտաքին պետական պարտքի ավելի քան կրկնապատկմանը (31.12.2011թ. դրությամբ) ճգնաժամի սկզբի համեմատ, ինչն էլ կարող է սահմանափակել կառավարության կարողությունը՝ հաղթահարել հետագա տնտեսական շոկերը, եթե դրանք տեղի ունենան 2013-2015թթ.:** Ճգնաժամից սկիզբ առած և 2010-2011թթ. շարունակվող սոցիալական ողղվածության ծախսերն ընդհանուր առմամբ աճեցին (տե՛ս Հավելված 3, աղյուսակ 4),[65] ինչպես նաև աճեց ՀՀ պետական պարտքը այդ ծախսերը ֆինանսավորելու համար: Արտաքին պետական պարտքը 1,577.1 մլն ԱՄՆ դոլարից (31.12.2008թ. դրությամբ) դարձել էր 3,568.2 մլն ԱՄՆ դոլար 31.12.2011թ. դրությամբ (կումուլյատիվ աճը՝ կազմել էր 226.2[66] կամ ավելի քան կրկնապատկվել էր): Իսկ ներքին պետական պարտքի կումուլյատիվ աճը կազմել էր 214.3 այդ նույն ժամանակահատվածում: Այս պարագայում կարևորվում է տնտեսությունը ավելի դիմադրողական (resilient) դարձնելը, կայուն տնտեսական աճի ապահովումը, հարկային եկամուտների աճով պայմանավորված՝ արտաքին և ներքին պետական պարտքերի մարումը: Եթե կառավարությանը չհաջողվի ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության իրականացումը 2013-2015թթ, ապա տնտեսական աճի տեմպերը կարող է և բարձր չլինել, ինչը հնարավարություն չի տա ավելացնել հարկային եկամուտները, որոնք կապահովեն վարկերի մարումը, և այլ սոցիալական ուղղվածության ծախսերի կատարումը: Իսկ եթե 2013-2015թթ.ՀՀ-ում արձանագրվի որևիցե ֆինանսական համարվող ճգնաժամ, ապա հաշվի առնելով պետական պարտքի ներկա մակարդակը, ՀՀ կառավարությունը կարող է ավելի վատ պայմաններով վարկեր ստանալ և ավելի շատ ֆինանսներ կպահանջվեն հաշվի առնելով ՀՀ մասնավոր ընկերությունների և տնային տնտեսությունների ներկայիս վարկերը ՀՀ առևտրային բանկերին: Այս պարագայում ՀՀ կառավարությունը «*եթե չունենան մուտք դեպի կայուն և մեծ արտաքին պետական ֆինանսավորմանը» (ՀԲ, 2008թ., էջ 5),* ապա չի կարողանա արդյունավետ կերպով իրականացնել հակաճգնաժամային միջոցառումները: Այս դեպքում աղքատության մակարդակի աճը ավելի մեծ կլինի, եթե հաշվի առնենք, որ 2011թ. աղքատության մակարդակը եղել է 35%:

**Գծապատկեր 30. ՀՀ պետական արտաքին պարտքը (մլն. ԱՄՆ դոլար)**




Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարության առցանց տվյալների բազա, 2012թ.

**Գծապատկեր 31. ՀՀ պետական ներքին պարտքը (մլրդ. ՀՀ դրամ)**




Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարության առցանց տվյալների բազա, 2012թ.

---

[65] Թեպետ գումարային սոցիալական ուղղվածության ծախսերը պետական բյուջեի աճել էին, սակայն առանձին վերցված որոշ գործառական դասակարգման խմբերի ծախսերի նավազում էր արձանագրվել 2010թ. ճգնաժամի տարվա համեմատ (տե՛ս Հավելված 3, աղյուսակ 4):

[66] 31.12.2008թ. դրությամբ պարտքի ցուցանիշը ինդեքսավորվել է և համարվել է 100 (տե՛ս Ռեյնհարթ և Ռոգոֆֆ, 2009թ.):

# ԳԼՈՒԽ 4. ՀՀ տնտեսության արտաքին շոկերից խոցելիության գնահատում

Դեպի ՀՀ իրական հատված ՀՖՃ-ի փոխանցման ուղիները, տարբեր կերպ են ազդել (տես գլուխ 2) ՀՀ տնտեսության վրա: Երկրորդ գլխում ներկայացված վերլուծության հիման վրա կարելի է ենթադրել որ տարբեր փոխանցման ուղիների ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա ճգնաժամից հետո փոխվել է, ինչպես նաև փոխվել է դրաց կարևորությունը տնտեսության համար: Հետևաբար այս գլխում փորձ է կատարվել ստուգելու հետևյալ հիպոթեզը:

***Հիպոթեզ՝*** *դեպի ՀՀ իրական հատված ՀՖՃ-ի փոխանցման ուղիները և դրանց ազդեցությունը նախքան ճգնաժամը և դրանից հետո արդյո՞ք փոխվել են, թե ո՞չ:*

Այս գլխում փորձ է կատարվել բացահայտել, թե որ փոխանցման ուղիներն են վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունեցել իրական ՀՆԱ-ի վրա նախքան ճգնաժամը և դրանից հետո, ինչպես նաև ինչպես է փոխվել այդ ոլորտների ազդեցությունը իրական ՀՆԱ-ի վրա:

## 4.1 Խոցելիության գնահատում

<u>Մոդելի սպեցիֆիկացիա</u>

Մոդելը սահմանվում է որպես՝

*Իրական ՀՆԱ = f (զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների փոխանցումներ, ներառյալ սահմանային աշխատողների, այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտներ, պատրաստի սննդի արտադրանքի արտահանում, հանքահումքային արտադրանքի արտահանում, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի արտահանում, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանում, օտարերկրյա զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ից գնված ապրանքների կամ իրենց մատուցած ծառայությունների վրա կատարված ծախսեր, ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալը)*[67]

Գնահատման ժամանակ եռամսյակային տվյալներ են օգտագործվել՝ ընդհանուր 50 դիտարկում՝ ներառելով 2000թ. առաջին եռամսյակից մինչև 2012թ. երկրորդ եռամսյակն ընկնող ժամանակահատվածը: Նույն հավասարումն գնահատվել է երկու անգամ: Առաջին ժամանակ ընտրանքի ժամանակահատվածը եղել է 2000թ. առաջին եռամսյակից մինչև 2008թ երկրորդ եռամսյակը, իսկ երկրորդ հավասարման համար ժամանակահատվածը եղել է 2000թ. առաջին եռամսյակից մինչև 2012թ. երկրորդ ժամանակահատվածը:

Հավասարումների գնահատման համար բոլոր փոփոխականների սեզոնային ճշգրտված արժեքներն են օգտագործվել, և գնահատումները կատարվել են առաջին տարբերությամբ փոփոխականների ստացիոնարությունը ապահովելու նպատակից ելնելով: Այնուհետև գնահատվել են հետևյալ էկոնոմտրիկ հավասարումները նվազագույն քառակուսիների մեթոդով (OLS), որտեղ ներառվել են միայն այն փոփոխականները, որոնք վիճակագրորեն նշանակալի փոփոխություններ են առաջացրել իրական ՀՆԱ-ի փոփոխությունում առաջին ժամանակահատվածի համար:

[67] Ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտները մեր ուսումնասիրությունից դուրս են՝ հաշվի առնելով դրանց ծավալները: Աշխատողների դրամական փոխանցումները ևս բացառվել են, քանի որ աշխատողների փոխանցումները որոշ ժամանակ հետո կարող են համարվել այլ ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ, կամ էլ զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների փոխանցումներ: Իսկ, քանի որ հետազոտության հիմնական նպատակներից է երկու խոշոր խմբերի ազդեցության գնահատումը այս խումբը չի դիտարկվում այստեղ:

$DGDPSA_t = \alpha_0 + \alpha_1 DTRSA_{t-1} + \alpha_2 DFDISA_{t-4} + \alpha_3 * DEX2SA_t + \alpha_4 DEX4SA_{t-2} + \alpha_5 * DT1SA_t + \alpha_6 * DT3SA_t + \varepsilon_t$ (1)

Որտեղ՝

*$DGDPSA^{68}_t$ – t-րդ ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով իրական ՀՆԱ-ի առաջին տարբերությունն է*

*$DTRSA^{69}_{t-1}$ - t-1 ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով օտարերկրյա զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ից գնված ապրանքների կամ իրենց մատուցած ծառայությունների վրա կատարված ծախսերի առաջին տարբերությունն է*

*$DFDISA_{t-4}$ - t-4 ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալի առաջին տարբերությունն է*

*$DEX2SA_t$ – t-րդ ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով հանքահումքային արտադրանքի արտահանման առաջին տարբերությունն է*

*$DEX4SA_{t-2}$ - t-2 ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման առաջին տարբերությունն է*

*$DT1SA_t$ - t–րդ ժամանակահատվածի զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների, փոխանցումների (ներառյալ սահմանային աշխատողների) առաջին տարբերությունն է*

*$DT3SA_t$ – t-րդ ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների առաջին տարբերությունն է*

*$\alpha_0, \alpha_1, \ldots, \alpha_6$- մոդելի անհայտ պարամետրերն են*

*$\varepsilon_t$- մոդելի պատահական սխալն է:*

Իսկ երկրորդ ժամանակահատվածի համար գնահատվել է հետևյալ էկոնոմետրիկ հավասարումը:

$DGDPSA_t = \beta_0 + \beta_1 * DFDISA_{t-7} + \beta_2 * DEX1SA_t + \beta_3 * DEX4SA_t + \beta_4 * DT1SA_t + \beta_5 * DT3SA_t + \varepsilon_t$ (2)

Որտեղ՝

*$DGDPSA_t$ - t ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով իրական ՀՆԱ-ի առաջին տարբերությունն է*

*$DFDISA_{t-7}$ - t-7 ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալի առաջին տարբերությունն է*

*$DEX1SA_t$ – t ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով պատրաստի սննդի արտադրանքի արտահանման առաջին տարբերությունն է*

*$DEX4SA_t$ - t ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման առաջին տարբերությունն է*

*$DT1SA_t$ - t ժամանակահատվածի զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների, փոխանցումների (ներառյալ սահմանային աշխատողների) առաջին տարբերությունն է*

*$DT3SA_t$ - t ժամանակահատվածի սեզոնային ճշգրտումով այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների առաջին տարբերությունն է*

*$\beta_0, \beta_1, \ldots, \beta_5$- մոդելի անհայտ պարամետրերն են*

*$\varepsilon_t$- մոդելի պատահական սխալն է:*

---

[68] Իրական ՀՆԱ ՀՀ դրամով արտահայտված (2005թ.=100): Փոփոխականի նկարագրի և աղբյուրի համար տե՛ս Հավելված 1:

[69] Բոլոր արտաքին շոկեր հանդիսացող փոփոխականների արժեքները ընթացիկ ԱՄՆ դոլարով են վերցվել: Փոփոխականների նկարագրի և աղբյուրներիի համար տե՛ս Հավելված 1:

Գնահատման արդյունքներ

*Գնահատում #1*

$$DGDPSA_t = 1.226770697e{+}10 - 1531.68 \cdot DTRSA_{t-1} + 323.51 \cdot DFDISA_{t-4} + 1706.89 \cdot DEX2SA_t$$

(4.06)*** (-4.21)*** (4.95)*** (5.65)**

$$+ 786.03 \cdot DEX4SA_{t-2} - 511.52 \cdot DT1SA_t + 408.35 \cdot DT3SA_t$$

(2.50)** (-5.38)*** (2.76)**

*Ընտրանք՝ 2001:2 2008:2 , դիտարկումներ՝ 29*
*R-քառակուսի՝ 0.86, ճշգրտված R-քառակուսի՝ 0.83; Durbin-Watson վիճակագիր՝ 2.10*
*Նշում՝ փոկագծերում t վիճակագրի արժեքներն են*
** նշանակալի է 10% մակարդակում, ** նշանակալի է 5% մակարդակում 5%, *** նշանակալի է 1% մակարդակում %.*

*Գնահատում #2*

$$DGDPSA_t = 4.90e + 2087.86 \cdot DFDISA_{t-7} + 1713.79 \cdot DEX1SA_t + 1007.98 \cdot DEX4SA_t -$$

(1.24) (3.41)*** (2.60)** (2.86)***

$$- 352.22 \cdot DT1SA_t + 649.42 \cdot DT3SA_t$$

(-4.25)*** (3.51)***

*Ընտրանք՝ 2002:1 2012:2 , դիտարկումներ՝ 42*
*R-քառակուսի՝ 0.67, ճշգրտված R-քառակուսի՝ 0.62; Durbin-Watson վիճակագիր՝ 2.32*
*Նշում՝ փոկագծերում t վիճակագրի արժեքներն են*
** նշանակալի է 10% մակարդակում, ** նշանակալի է 5% մակարդակում 5%, *** նշանակալի է 1% մակարդակում %.*

**Նախքան Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի անկումը պայմանավորված էր լինելու մի շարք շոկերով (այլ մասնավոր տրանսֆերտներ, ՕՈՒՆ, արտահանման հիմնական խմբեր (հանքահումքային և մետաղական արդյունաբերություն), իսկ ՀՀ տնտեսությունը խոցելիության աստիճանը արտաքին շոկերի հանդեպ բավականին բարձր էր:** Նախքան ճգնաժամը իրական ՀՆԱ-ի անկումը կարող էր պայմանավորված լինել այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների, ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալի, հանքահումքային արտադրանքի և ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման ծավալների աճով պայմանավորված: Իսկ զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների, փոխանցումների, ներառյալ սահմանային աշխատողների և օտարերկրյա զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ից գնված ապրանքների կամ իրենց մատուցած ծառայությունների վրա կատարված ծախսերի հետագա կրճատումը կարող էր նույնիսկ դրական ազդեցություն ունենալ իրական ՀՆԱ-ի վրա (ներմուծման ծավալների կրճատմամբ պայմանավորված): Վերը նշված փոփոխականների փոփոխությունը կարող էր բացատրել նախքան ճգնաժամը իրական ՀՆԱ-ի փոփոխության մոտ 83%-ը: Իսկ սա նշանակում է, որ ՀՀ տնտեսության խոցելիության աստիճանը արտաքին շոկերի փոխանցման մեխանիզմների նկատմամբ բավականին բարձր է եղել և ընթացիկ հաշվի փոփոխությունը արտաքին շոկով պայմանանավորված կիհանգեցներ արժութային ճգնաժամի ՀՀ-ում:

**Ճգնաժամից հետո իրական ՀՆԱ-ի անկումը կարող է բացատրվել այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի և պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների կրճատմամբ 2013-2014թթ., սակայն ընթացիկ հաշվի բաղադրիչներից բացի աճել է նաև այլ գործոնների դերը, որոնք անկման կհանգեցնեն:** Նախորդ ժամանակաշրջանի համեմատ, կարճաժամկետ հատվածում իրական ՀՆԱ-ի անկում կարելի է ակնկալել այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի և պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների կրճատմամբ, մինչդեռ միջնաժամկետ հատվածում անկումը կբացատրվի ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալի կրճատմամբ: Իրական ՀՆԱ-

ի փոփոխության մոտ 62% կարող են բացատրել գնահատման #2 ժամանակ ստացված վիճակագրորեն նշանակալի արտաքին շոկերի փոխանցման ուղիների փոփոխությունը: Հետաքրքրական է նկատել, որ նախորդ ժամանակահատվածի համեմատ այդ փոփոխությունը, կարող է փաստել այն մասին, որ թեև այս փոխանցման մեխանիզմներից խոցելիության աստիճանը բավականին բարձր է, սակայն այլ գործոնների, հիմնականում ֆինանսական հաշվի փոփոխությամբ պայմանավորված կարող է ևս իրական ՀՆԱ-ի անկման պատճառ հանդիսանալ:

**ՀՀ տնտեսության խոցելիությունը օտարերկրյա աշխատանքի շուկաների զարգացումներից ճգնաժամից հետո աճել է:** Քանի որ այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների պարագայում այլ երկրների ռեզիդենտների փոխացումներն են հաշվառվում, ապա այս դեպքում կարևորվում են այդ ռեզիդենտների եկամուտների աղբյուրների դերը՝ հատկապես աշխատանքի շուկան: Իսկ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ փոխանցումների մեծ մասը ՌԴ-ից է (տե՛ս գծապատկեր 8), ինչպես նաև ազգությամբ հայ ամենամեծ բնակչություն ունեցող երկին է ապա, այստեղ կարելի ենթադրել, որ ՌԴ աշխատանքի շուկան է դառնալու արտաքին շոկերի ՀՀ փոխանցելու հիմնական ուղին: ՌԴ աշխատանքի շուկան, իր հերթին կախված է լինելու, առնվազն միջնաժամկետ ժամանակահատվածում, երկրի տնտեսական վիճակից պայմանավորված համաշխարհային տնտեսության զարգացումներից՝ մասնավորաբար ԵՄ երկրների տնտեսական վիճակից:

**Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի և պատրաստի սննդի խմբերի արտահանման տեսանկյունից խոցելիությունը համաշխարհային տնտեսության, ինչպես նաև ՌԴ տնտեսական աճի տեմպերից մնում է որոշակիորեն բարձր:** Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի, ինչպես նաև պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների կրճատումն է որոշիչ լինելու, ընդհանուր առմամբ, իրական ՀՆԱ-ի կրճատման գործում (տե՛ս գնահատում #2), մնացած հավասար պայմանների դեպքում: Այս խմբերի արտահանման ծավալների հետագա աճը, առնվազն միջնաժամկետ ժամանակահատվածում պայմանավորված է լինելու համաշխարհային տնտեսության աճի տեմպերից, ինչպես նաև ՌԴ տնտեսությունից (հատկապես կոնյակի, ռոմի, ջինի, օղու լիկյորի ապրանքատեսակի պարագայում): Քանի որ մենք գնահատում ենք արտահանման խոշոր խմբերի ծավալների փոփոխության վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը և ոչ թե առանձին վերցված ապրանքատեսակներինը, ապա այստեղ ամբողջ խմբի արտահանման ծավալների փոփոխությունն է հաշվի առնվել էկոնոմետրիկ մոդելներում (տե՛ս բաժին 4.2): Եռամսյակային տվյալների բացակայության պատճառով [70] էկոնոմետրիկ հավասարման գնահատման ժամանակ օգտագործվել են խմբերի տվյալները, թեպետ լավ կլիներ դիտարկել արտահանվող 7 հիմնական ապրանքատեսակն էլ առանձին (հատկապես պղնձի հանքաքարի խտանյութի պարագայում), հաշվի առնելով, այն հանագմանքը, որ 2011թ. դրանք կազմել են ապրանքների արտահանման մոտ 67%-ը:

## 4.2 Շոկերի փոխանցման ուղիների դերը ճգնաժամից հետո

Զբոսաշրջություն

**2013-2014թթ. զբոսաշրջիկների ծախսերի աճը կշարունակեն վիճակագրորեն ոչ նշանակալի ազդեցություն ունենալ իրական ՀՆԱ-ի վրա, մինչդեռ 2015թ.-ից դա կախված կլինի թե ՀՀ այցելուների աճը որքանով կխթանի հիմնականում տեղական ապրանքների և ծառայությունների սպառման ավելացմանը:** Եթե նախքան ճգնաժամը, օտարերկրյա զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ից գնված ապրանքների կամ իրենց մատուցած ծառայությունների վրա կատարված ծախսերը t ժամանակահատվածում ավելանային 1մլն ԱՄՆ

[70] «HS 2002» դասակարգման քառանիշ ապրանքատեսակների տվյալները եռամսյակային կտրվածքով առցանց տարբերակով առկա են 2007թ.-ից ի վեր:

դոլարով, ապա դա միջինում կնվազեցներ հաջորդ ժամանակահատվածի իրական ՀՆԱ-ն 1.53 մլրդ ՀՀ դրամով,[71] իսկ արդեն երկրորդ գնահատման արդյունքների հիման վրա զբոսաշրջիկների աճը վիճակագրորեն նշանակալի ազդեցություն չի ունենա իրական ՀՆԱ-ի փոփոխության գործում: Առաջին ժամանակահատվածի բացասական ազդեցությունը կարելի բացատրել հետևյալ հանգամանքով՝ զբոսաշրջիկների կատարած ծախսերի աճը տվյալ ժամանակահատվածում մեծացնում էր պահանջարկը ներմուծված ապրանքների և ծառայությունների հանդեպ[72], որի հետևանքով հաջորդ ժամանակահատվածում իրական ՀՆԱ-ի ծավալի բացասական փոփոխություն կարելի էր ակնկալել, ընդհանուր առմամբ: Ինչ վերաբերում է երկրորդ գնահատման արդյունքներին, այստեղ արդյունքերը կարելի է բացատրել հետևյալով: Քանի որ մեկ զբոսաշրջիկի հաշվով կատարած միջին իրական ծախսը (ՀՀ դրամով) ապրանքների և ծառայությունների վրա 2007թ. նկատմամբ նվազման միտում է արձանագրել (տե՛ս գծապատկեր 6), ապա սա նշանակում է, որ, ընդհանուր առմամբ, ձեռքբերված ապրանքների և մատուցված ծառայությունների կտրուկ փոփոխություն չի արձանագրվել 2007-2011թթ. (տես բաժին 2.1), որի հետևանքով բոլոր զբոսաշրջիկների ծախսերի ավելացումը (հիմնականում պայմանավորված է քանակի ավելացմամբ) վիճակագրորեն նշանակալի ազդեցություն չի առաջացնում իրական ՀՆԱ-ում: Այստեղ ևս կարելի է նաև դրական միտման մասին փաստել, սպառման մեջ հավանաբար ավելացել է տեղական ապրանքների և ծառայությունների սպառումը, որի հետևանքով ևս զբոսաշրջիկների ծախսերի աճը նշանակալի ազդեցություն չի ունենում ՀՆԱ-ի վրա: Հետևաբար 2013-2014թթ. նման միտումների պահպանման պարագայում զբոսաշրջիկների թվի աճը զգալիորեն չի ավելացնի իրական սպառումը և ոչ նշանակալի ազդեցություն կունենա իրական ՀՆԱ-ի վրա: Իսկ արդեն 2015թ.-ից սկսած իրական ՀՆԱ-ի ազդեցության փոփոխությունը կախված կլինի նրանից, թե ինչպես կհաջողվի Հայաստանին ներգրավել ավելի շատ այնպիսի զբոսաշրջիկներ, որոնք հիմնականում տեղական ապրանքների և ծառայությունների սպառումը կավելացնեն:

<u>Օտարերկրյա ուղղակի ներդրումներ</u>

**2013թ. ՕՈՒՆ-ները հիմնականում կլինեն վերաներդրված շահույթի տեսքով եթե նոր և խոշոր ներդրումներ անող ընկերություններ ՀՀ մուտք չգործեն, իսկ եթե 2014թ.-ից ի վեր ՀՀ-ին հաջողվի հիմնականում ներգրավել «արդյունավետություն փնտրող» ընկերություններ, ապա դա դրական ազդեցություն կունենա իրական ՀՆԱ-ի աճի վրա:** Նախքան ճգնաժամը t-րդ ժամանակահատվածում ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալի աճը 1 մլն ԱՄՆ դոլարով 4 ժամանակահատված հետո ավելացնում էր իրական ՀՆԱ-ն 0.32 մրդ դրամով: Իսկ արդեն երկրորդ գնահատման արդյունքների հիման վրա t-րդ ժամանակահատվածում աճը իրական ՀՆԱ-ն ավելացնում է մոտ 2.1 մլրդ դրամով, սակայն միայն 7 ժամանակահատված հետո: Նման վիճակը կարելի է բացատրել հետևյալով: Քանի որ նախքան ճգնաժամը ՀՀ-ում ՕՈՒՆ-ի հոսքերի ծավալը հիմնականում կատարում էին «սպառման շուկա փնտրող» և «ռեսուրսների աղբյուր փնտրող» ընկերությունները, ապա ընդհանուր առմամբ իրենց ներդրումները պետք է հիմնականում ուղղված լինեին ՀՀ-ում գործունեությունը ծավալելու համար: Երկրորդ գնահատման արդյունքներից կարելի է ենթադրել, որ ներդրումները (վերաներդրված շահույթը) հիմնականում ուղղված էին արդյունավետությունը բարձրացնելու վրա, որի հետևանքով, ազդեցությունը իրական ՀՆԱ-ի վրա նկատվում է այդքան երկար ժամանակահատված հետո: Այս միտումը կարող է փաստել այն մասին, որ ընկերությունները տեղական շուկայում մրցակցության պայմաններում (օրինակ՝ հեռահաղորդակցություն, կացություն) ձգտում են ավելի արդյունավետ դառնալ, իսկ օրինակ արտահանողների պարագայում համաշխարհային

[71] 2005թ.=100

[72] Օրինակ՝ հյուրանոցում մատուցվող կերակրատեսակների հիմնական բաղադրամսերը/մթերքը ներմուծված ապրանքներն են եղել: Նույն հյուրանոցը ստացված գումարները ծախսել է ներմուծված ապրանքերի վրա նոր ծառայություններ մատուցելու համար:

շուկաներում ապրանքերի վաճառքի համար գործառնական արդյունավետության ապահովումն կարող էր պատճառն եղած լիներ: Երկրորդ գնատաման արդյունքներից, ինչպես բաժին 2.4-ում ներկայացված վերլուծության հիման վրա, կարելի է փաստել, որ ՀՀ-ին հիմնականում անհրաժեշտ է ՀՀ ներգրավել «արդյունավետություն փնտրող» ՕՈՒՆ, քանի որ եթե ներկա միտումները շարունակվեն, ապա ներդրումները 2013թ. կլինեն վերաներդրված շահույթի տեսքով: Եթե 2014թ.-ից ի վեր ՀՀ-ին հաջողվի հիմնականում «արդյունավետություն փնտրող» ընկերությունները ներգրավել, դրանք կարող են նոր աշխատատեղերի պատճառ դառնալ (աշխատատար ոլորտներ), ինչը անմիջապես կավելացնի տ/տ-ների վերջնական սպառմանն ուղղված ծախսերը, որն կմեծացնի իրական ՀՆԱ-ն: Այդ ընկերությունները հիմնականում կարող են լինել ցածր-տեխնոլոգիական, որի շնորհիվ ՀՀ-ն կարող է ցածր տեխնոլոգիական արդյունա-բերական զարգացումից անցում կատարել բարձր տեխնոլոգիական զարգացման, ինպես դա տեղի ունեցավ Թայվանի, Կորեայի և Իսրայելի պարագայում:

<u>Ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ և գործոնային եկամուտ</u>

**2013-2014թթ. զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների փոխանցումների ա-վելացումը հիմնականում կշարունակի նվազեցնել իրական ՀՆԱ-ի վրա բացասական ազդեցությունը (վիճակագրորեն նշանակալի) ներկա միտումների պահպանման դեպ-քում, իսկ 2015թ.-ից սկսած ազդեցության փոփոխությունը հիմնականում կախված կլինի փոխանցված գումարների դասակարգումից:** Նախքան ճգնաժամը զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների փոխանցումների աճը 1մլն. ԱՄՆ դոլարով t-րդ ժամա-նակահատվածում, ընդհանուր առմամբ, իրական ՀՆԱ-ն կնվազեցներ այդ նույն ժամանակահատվածում միջինում 0.51 մլրդ ՀՀ դրամով: Իսկ արդեն երկրորդ գնա-հատման արդյունքների հիման վրա, արդեն 1 մլն. ԱՄՆ դոլարի աճը կհանգեցնի իրա-կան ՀՆԱ-ի կրճատմանը, միջինում, 0.35 մլրդ. ՀՀ դրամի չափով (մնացած հավասար պայմանների դեպքում): Այս միտումը կարելի բացատրել հետևյալով: Հիմք ընդունելով բաժին 2.2-ում ներկայացված վերլուծությունը, կարելի ենթադրել, որ եթե նախքան ճգնաժամը, միգրանտ աշխատողների ուղարկած գումարների ավելացումը տ/տ-ների հիմնական կարիքները բավարարելուց հետո ուղղվում էր դեպի ներմուծված ապրանքների սպառումը կամ մեծամասամբ սպառում էին ներմուծված ապրանքներ, ապա արդեն ճգնաժամից հետո հիմնականում շեշտը դրվում է հիմանական կարիքների բավարման վրա՝ «նոր» համարվող միգրանտների քանակի ավելացմամբ պայմանա-վորված («հին» համարվող միգրատներին զուգահեռ աճել է «նոր» միգրանտների թվաքանակը), կամ էլ միգրանտների քանակի ոչ կտրուկ փոփոխության դեպքում և ավելի շատ գումարների պարագայում ՀՀ տ/տ-ները հիմնականում սկսել էին սպառել տեղական արտադրանքը (ճգնաժամից բացասական հետևանքների հաղթահարմամբ կամ էլ տեղական ապրանքների ավելի մրցունակ դառնալով պայմանավորված): Այդ իսկ պատճառով 2013-2014թթ. գրանցված միտումների պահպանման պարագայում զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների, փոխանցումների աճը դեռ կշա-րունակի վիճակագրորեն նշանակալի բացասական ազդեցություն ունենալ իրական ՀՆԱ-ի վրա, իսկ արդեն 2015թ.-ից ի վեր, ազդեցությունը կախված կլինի նրանից, թե միգրանտների կամ ուղարկողների փոխանցված գումարները կդասկարգվեն որպես աշխատողների դրամական փոխանցումներ թե այլ մասնավոր ընթացիկ տրանս-ֆերտներ:

**2013թ. այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների աճը վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն կունենա իրական ՀՆԱ-ի վրա այլ երկներում տեղական աշխա-տանքի շուկաների համեմատաբար կայուն լինելու պարագայում, իսկ արդեն միջնա-ժամկետ ժամանակահատվածում ազդեցության փոփոխությունը պայմանավորված կլի-նի միգրացիայի աճի տեմպերից:** ՀՖՃ-ից առաջ t-րդ ժամանակահատվածում այլ մաս-նավոր ընթացիկ տրանսֆերտների աճը 1մլն դոլարով, միջինում կհանգեցներ իրական ՀՆԱ-ի աճի 0.41 մլրդ. ՀՀ դրամով այդ նույն ժամանակահատվածում, իսկ արդեն

երկրորդ գնահատման արդյունքների հիման վրա դրական ազդեցությունը, ընդհանուր առմամբ աճեց՝ կազմելով 0.65 մլրդ դրամ: Հաշվի առնելով բաժին 2.2-ում ներկայացված վերլուծությունը, այս աճը կարելի է բացատրել հետևյալ հանգամանքով: Քանի որ, այս տրանսֆերտների գերակշիռ մասը բաժին է ընկնում սփյուռքին[73], ապա հնարավոր է որ այլ երկրների ռեզիդենտները օգնում էին իրենց ոչ անմիջական տ/տ անդամներին, իսկ տրանսֆերտները հիմնականում ուղղվում են տեղական արտադրանքի և ծառայությունների սպառման ծավալների աճին: 2013թ. եթե կայուն լինեն այս տրանսֆերտների աղբյուր համարվող օտարերկրյա աշխատանքի շուկաները, ապա վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա կպահպանվի: Իսկ արդեն միջնաժամկետ ժամանակահատվածում կախված է նրանից թե արդյոք շահառու տ/տ-ները կշարունակեն բնակվել ՀՀ-ում թե ոչ:

<u>Արտահանման հիմնական խմբեր</u>

**2013թ. պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը կշարունակի վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն ունենալ իրական ՀՆԱ-ի վրա, սակայն արդեն միջնաժամկետ ժամանակահատվածում ազդեցության չափի փոփոխությունը կախված կլինի հիմնականում ՌԴ աճի տեմպերից, եթե տեղի չունենա արտահանվող շուկաների և տեսականու ավելի լայն դիվերսիֆիկացիա:** Եթե նախքան ճգնաժամը պատրաստի սննդի արտադրանքի արատահանումը ավելանար 1 մլն ԱՄՆ դոլարով t-րդ ժամանակահատվածում, ապա փոփոխությունը վիճակագրորեն նշանակալի ազդեցություն չէր ունենա ՀՆԱ-ի ավելացման վրա, իսկ արդեն երկրորդ գնահատման արդյունքների հիման վրա, այդ ազդեցությունն, ընդանուր առմամբ, նշանակալի էր կազմելով 1.7 մլրդ. ԱՄՆ դոլար: Այս երևույթի մեկ բացատրություններից մեկը կարող է լինել այն հանգամանքը, որ արտահանման որոշակի ծավալներից սկսած է արտահանման որևէ խումբ սկսում վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունենալ իրական ՀՆԱ-ի փոփոխության վրա, ինչպես նաև գնահատման ընտրանքի չափն էր ավելացեր, կամ էլ կարող է նաև այլ պատճառ եղած լիներ: Սակայն, քանի որ այս ոլորտը երկրորդ գնահատման արդյունքներով դարձել է վիճակագրորեն նշանակալի, դա նշանակում է  որ երկրի տնտեսությունը դարձել է խոցելի այս ոլրտի տատանումներից: Մյուս կողմից, քանի որ այս խմբի առաջնային ապրանքատեսակի հիմնական սպառման շուկան ՌԴ-ն է, անհրաժեշտ է ավելի մեծ դիվերսիֆիկացիա աշխարհագրական շուկաների առումով միջնաժամկետ ժամանակահատվածում, որպեզի եթե ՌԴ-ում տնտեսական անկում լինի դա բացասաբար չանդրադառնա ՀՀ արտահանողների վրա, մինչդեռ երկարաժամկետ ժամանակահատվածում անհրաժեշտ է տեսականու և շուկաների ավելի լայն դիվերսիֆիկացիա:

**Միջնաժամկետ ժամանակահատվածում, եթե համաշխարհային տնտեսության խորը անկում չգրանցվի, ապա ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանմնան աճը կշարունակի վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն ունենալ, իսկ ազդեցության չափը կախված կլինի ծավալների փոփոխությունից:** ՀՖՃ-ից առաջ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման ավելացումը 1մլն ԱՄՆ դոլարով t-րդ ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ կավելացներ իրական ՀՆԱ-ն երկու ժամանակահատված հետո մոտ 0.58 մլրդ ԱՄՆ դոլարով: Իսկ արդեն երկրորդ գնահատման արդյունքների հիման վրա այդ փոփոխությունը կազդեր նույն ժամանակահատվածի իրական ՀՆԱ-ի վրա, միջինում, հանգեցնելով մոտ 1.1 մլրդ ՀՀ դրամի ավելացում: Այս փոփոխությունը հիմնականում պայմանավորված է եղել ֆիզիկական ծավալների փոփոխությամբ, ինչն էլ ավելացրել է իրական ՀՆԱ-ն, մնացած հավասար պայմանների դեպքում: Քանի որ այս խումբը հիմնականում կախված է գլխավորապես Համաշխարհային տնտեսության աճի տեմպերից,

[73] Նախքան 2011թ. ՀՀ ԱՎԾ-ն վճարային հաշվեկշռի տվյալների մեջ այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների մեջ առանձին տարանջատում էր սփյուռքից տրանսֆերտները, որոնք այլ մասնավոր տրանսֆերտների գերակշիռ մասն էին կազմում:

ապա այստեղ անկման չափն է լինելու վճռորոշ միջնաժամկետ ժամանակահատվածում: Եթե անկումը լինի շատ խորը, և շահավետ չլինի արտահանումը նույնիսկ ծավալների աճի պարագայում կոմպենսացնելու գների անկումը, ապա այս խմբի արտահանման փոփոխությունը իրական ՀՆԱ-ի վրա ազդեցության չափի փոփոխության կարող է հանգեցնել: Իսկ ընդհանուր առմամբ այդ խմբի խոցելիությունը ճգնաժամից հետո համաշխարհային տնտեսության զարգացումներից աճել է:

*Վիճակագրորեն ոչ նշանակալի խմբերի դերը երկարաժամկետ ժամանակահատվածում:* Երկու գնահատման արդյունքների հիման վրա, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի արտահանումը վիճակագրորեն ոչ նշանակալի ազդեցություն էր ունենում իրական ՀՆԱ-ի վրա: Քանի որ ադամանդե քարերը հիմնականում ներմուծվում են ՀՀ և այնուհետև որոշակի մշակում ստանալուց հետ արտահանվում, իրական ավելացված արժեքը այդքան էլ մեծ չէ: Մյուս կողմից ոսկու արտահանումը աճել էր, և եթե այս խմբում արտահանման ծավալների աճը հիմնականում պայմանավորված լինի այս ապրանքատեսակի աճով, ապա կարելի է եզրակացնել, որ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի արտահանումը երկարաժամկետ ժամանակահատվածում այս խումբը միգուցե վիճակագրորորեն նշանակալի ազդեցությունը սկսի ունենալ իրական ՀՆԱ-ի վրա: Հանքահումքային արտադրանքի արտահանման պարագայում իրական ՀՆԱ-ի վրա վիճակագրորեն նշանակալի ազդեցություն գրանցելը հիմնականում կարելի պարզել ավելացնելով դիտարկումների քանակը: Իսկ եթե առանձին ապրանքների համար (հատկապես պղնձի հանքաքարի խտանյութի դեպքում) ավելի երկար տարիների համար եռամսյակային տվյալներ առկա լինեն, մոդելում կարելի է ներառել և պարզել հատկապես պղնձի հանքաքարի խտանյութի ազդեցությունը իրական ՀՆԱ-ի փոփոխության վրա: Մյուս կողմից, այս խմբի երկու խոշոր ապրանքատեսակների՝ պղնձի հանքաքարի խտանյութնի և էլեկտրաէներգիայի արտահանման խոցելիության վրա տարբեր գործոններ են ազդում և տարբեր սպառման շուկաներ ունեն:

## Եզրակացություններ և տնտեսական քաղաքականությանն ուղղված առաջարկություններ

**ՀՀ տնային տնտեսությունների և մասնավոր ընկերությունների կողմից ՀՀ բանկերից վերցված վարկերի աճի պարագայում էապես կարևորվում են ՀՀ կառավարության սկզբնական պայմանները տնտեսության խոցելիությունը արտաքին շոկերից մեղմելու և ընդլայնողական քաղաքականություն իրականացնելու տեսանկյունից աղքատության մակարդակի կտրուկ աճը կանխելու նպատակով:** Առաջնային է դառնում ընթացիկ հաշվի պակասուրդը: Հիմնական շեշտադրումը պետք է լինի կրեդիտային մասով մուտքերի ավելացումը՝ դեբետային մասով մուտքերի առնվազն պահպանման կամ նվազման պարագայում: Հակառակ դեպքում ՀՀ-ն ավելի դժվար կհաղթահարի ապագա արտաքին շոկերը, քան դա տեղի ունեցավ ՀՖՃ-ի պարագայում, հաշվի առնելով ՀՀ պետական պարտքի մակարդակը, տնային տնտեսությունների և մասնավոր ընկերությունների բանկերից վերցված վարկերի ծավալները: Այս պարագայում ՀՀ կառավարությունն է լինելու տնտեսության այն սուբյեկտը (մասնակիցը), որը պետք է իր ընդլայնողական քաղաքականությամբ փորձի մեղմել բացասական շոկերի ազդեցությունը՝ աղքատության խոր անկումը կանխելու նպատակով 2013-2015թթ.:

**Տնտեսական հիմքի բազմազանության ապահովումը՝ դիվերսիֆիկացված արտահանում (ապրանքների և աշխարհագրական շուկաների առումով), որի հիմքում ցածր տեխնոլոգիական արդյունաբերական զարգացումն է, ինչպես նաև տեղական ապրանքների և ծառայությունների սպառման ծավալների աճը, կարող են նվազեցնել ՀՀ տնտեսության խոցելիությունը արտաքին շոկերի հանդեպ:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2011թ. տնային տնտեսությունների վերջնական սպառմանն ուղղված ծախսերը կազմել

են ՀՆԱ-ի 83.2%, ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմքում պետք է լինի առնվազն տ/տ-ների եկամուտների պահպանումը: Իսկ եթե հաշվի առնենք, որ 2011թ. Երևանում գործազրկության մակարդակը եղել է 30.2%, իսկ այլ քաղաքներում աղքատության մակարդակը եղել է 43.6%, ապա առաջնայնությունը պետք է տալ զբաղվածության ապահովմանը: Այս պարագայում, առաջնային պետք է դառնա ցածր տեխնոլոգիական արդյունաբերական զարգացումը միջնաժամկետ ժամանակահատվածում (ոլորտների աշխատատար լինելու տեսանկյունից), իսկ երկարաժամկետ ժամանակահատվածում հիմնական առաջնայնությունը պետք է լինի միջին տեխնոլոգիական զարգացումից անցումը դեպի բարձր տխնոլոգիական զարգացումը: Հետևաբար կառավարության կողմից իրականցվող ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական զարգացման ռազմավարության իրականացման հիմքում միջնաժամկետ ժամանակահատվածում առաջնայնությունը պետք է տալ ցածր տեխնոլոգիական ոլորտների զարգացմանը, ինչպես նաև դիվերսիֆիկացված արտահանման ապահովմանը (աշխարհագրական շուկաների և ապրանքների տեսանկյունից): Թեթև արդյունաբերությունը կարող է այսպիսի զարգացման շարժիչ ուժը դառնալ, այնպես ինչպես իրենց արդյունաբերական զարգացման հիմքը դրեցին Կորեան, Իսրայելը և Թայվանը[74]: Այս ռազմավարական ուղղությամբ շարժվելիս պետք է ձեռնարկել նաև այնպիսի միջոցառումներ, որոնք հիմնականում կխթանեն տեղական արտադրանքի սպառումը:

Հետևաբար միջնաժամկետ ժամանակահատվածում առաջնայնությունները պետք է լինեն`

1. Մետաղագործական հանքարդյունաբերությունից և արտադրությունից կախման նվազեցումը` առաջնայինը աջակցելով այլ ոլորտներին` տնտեսական հիմքի բազմազանության ապահովման միջոցով տնտեսության ճկունությունը (resilience) բարձրացնելու նպատակով:
2. Հաշվի առնել Իսրայելի, Հարավային Կորեայի և Թայվանի փորձը, ինչպես նաև այլ քաղաքների աղքատության (2011թ.` 43.6%), և Երևանում գործազրկության (2011թ.` 30.2%) բավականին բարձր մակարդակը և առաջնայնությունը տալ թեթև արդյունաբերությանը և այլ աշխատատար, ցածր-տեխնոլոգիական ոլորտների զարգացմանը մի շարք սոցիալական խնդիրներ լուծելու նպատակով:
3. Խրախուսել և իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կհանգեցնեն տեղական արտադրանքի սպառման ծավալների աճին ՀՀ տ/տ-ների, ընկերությունների, պետական հաստատությունների, ինչպես նաև ՀՀ-ում զբոսաշրջիկների կողմից`
   - պետական գնումների քաղաքականություն, որտեղ առաջնայնությունը հիմնականում տրվում է տեղական արտադրանքին և ծառայությունների մատուցմանը` տեղական/ներքին շուկայում մրցակցությունն ուժեղացնելու նպատակով :
   - Հայաստանի բրենդինգ, օտարերկրյա զբոսաշրջության համար կարևոր երկրներում ՀՀ ավելի շատ այնպիսի զբոսաշրջիկների բերել, որոնք հիմնականում կլինեն Երևանից դուրս և կսպառեն տեղական արտադրանք:
   - հարկային արտոնությունների տրամադրում իմպորտի փոխարինմամբ զբաղվող տեղական արտադրողների համար,
   - գովազդային արշավներ տ/տ-ների կողմից տեղական արտադրանքի սպառման ծավալները մեծացնելու, որը չի խաթարի մրցակցությունը տեղական շուկայում:
4. Հիմնականում նպաստել ցածր տեխնոլոգիական ոլորտներում «արդյունավետություն փնտրող» օտարերկրյա ընկերությունների ներգրավմանը:

[74] Տե՛ս Լեվի-Ֆաուր (1998թ.)

## Գրականության ցանկ


The World Bank, (2008). Weathering the Storm: Economic Policy Responses to the Financial Crisis*, mimeo,* World Bank, Washington DC: United States, 22p. http://siteresources.worldbank.org/NEWS/Resources/weatheringstorm.pdf (last accessed: August 15, 2012)

Islam, Iyanatul, (2009). *The Global Economic Crisis and Developing Countries: Transmission Channels, Fiscal and Policy Space and the Design of National Responses*, ILO Employment Working Paper No. 36, ILO, Geneva, http://www.ilo.org/wcmsp5/groups/public/@ed_emp/@emp_policy/documents/publication/wcms_113733.pdf (last accessed: August 15, 2012)

International Monetary Fund (2009a) *World Economic Outlook: Crisis and Recovery,* IMF, Washington D.C: Unites States, 228p, http://www.imf.org/external/pubs/ft/weo/2009/01/pdf/text.pdf, (last accessed: August 17, 2012)

International Monetary Fund (2009b) 'The Implications of the Global Financial Crisis for Low-Income Countries', IMF, Washington D.C: Unites States, 60p. http://www.imf.org/external/pubs/ft/books/2009/globalfin/globalfin.pdf, (last accessed: August 17, 2012)

World Bank (2009) '*The Global Economic Crisis: Assessing Vulnerability with a Poverty Lens*', February, Washington DC http://siteresources.worldbank.org/NEWS/Resources/WBGVulnerableCountriesBrief.pdf (last accessed: August 17, 2012)

Kaminsky, Graciela and Carmen Reinhart (1999). "The Twin Crises: the Causes of Banking and Balance-of-payments Problems", American Economic Review, American Ecoonomic Association, Volume 89, No 3, pp.473–500.

Herz, Bernhard and Tong, Hui, (2008). "Debt and Currency Crises—Complements or Substitutes?", *Review of International Economics*, Volume 16, No 5, pp.955–970

Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). *This Time is Different: Eight Centuries of Financial Folly*, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, 463p.

Fratzscher Marcel, (2000). "*On Currency Crises and Contagion*", Working Paper No 00-9, Peter G. Peterson Institute for International Economics, Washington, DC: United States, 36p http://www.piie.com/publications/wp/00-9.pdf (last accessed: July 26, 2012)

Freund, Caroline, (2009). "The Trade Response to Global Downturns: Historical Evidence" WB Policy Research Working Paper 5015, The World Bank, Washington DC: United States, 28p. http://www-wds.worldbank.org/servlet/WDSContentServer/WDSP/IB/2009/08/06/000158349_20090806152233/Rendered/PDF/WPS5015.pdf. (last accessed: July 26, 2012)

Canagarajah, Sudharshan (2010), "The Economic Crisis in the Low Income CIS: Fiscal Consequences and Policy Responses", Presentation prepared for International Workshop on the Economic and Social Impact of Migration, Remittances, and Diaspora, Yerevan, Armenia, June 24-25. http://siteresources.worldbank.org/INTECA/Resources/Sudharshan_Eng.pdf (last accessed: August 17, 2012)

Overseas Development Institute (2009) 'The Global Financial Crisis and Developing Countries: Synthesis of the Findings of 10 Country Case Studies', Working Paper No. 306, London, UK: Overseas Development Institute. http://www.odi.org.uk/resources/download/3413.pdf (last accessed: August 28, 2012)

UN-OHRLLS, (2009) The Impact of The Global Financial and Economic Crisis on the Least Developed Countries, United Nations Office of the High Representative for the Least Developed Countries, Landlocked Developing Countries and Small Island Developing States, New York: Unites States

http://www.unohrlls.org/UserFiles/File/Publications/LDC/UN_Financial_Crisis_011410_bw.pdf (last accessed: August 17, 2012)

UNDP. (2010), Poverty and Social Impact Analysis of the Global Economic Crisis: Synthesis Report of 18 Country Studies, New York, USA: United Nations Development Program
http://www.undp.org/content/dam/aplaws/publication/en/publications/poverty-reduction/poverty-website/psia/crisis-project/synthesis-report/1958-UNDP-PSIA-Report-LR.pdf (last accessed: August 18, 2012)

Public Forum Armenia (2008), Implications of the World's Financial Crisis for Armenia's Economy, http://www.pf-armenia.org/fileadmin/pfa_uploads/CRISIS_REPORT--FINAL.pdf (last accessed: August 18, 2012)

UN WFP VAM Food Security Analysis, (2009). Rapid Assessment of the Impact of the Global Financial Crisis in Armenia, Rome: World Food Programme, VAM Food Security Analysis http://documents.wfp.org/stellent/groups/public/documents/ena/wfp205566.pdf (last accessed: August 18, 2012)

The International Bank for Reconstruction and Development/The World Bank. (2011), The Jobs Crisis: Household and Government Responses to the Great Recession in Eastern Europe and Central Asia, Washington, DC: The World Bank. http://siteresources.worldbank.org/INTECA/Resources/257896-1293468285763/The_Jobs_Crisis_Client_Delivery.pdf (last accessed August 21, 2012)

Gardó, Sándor and Martin, Reiner, (2010). 'The Impact of the Global Economic and Financial Crisis on Central, Eastern and South-Eastern Europe: A Stock-Taking Exercise', ECB Occasional Paper Series, No 114, Frankfurt am Main: European Central Bank, 65p. www.ecb.europa.eu/pub/pdf/scpops/ecbocp114.pdf (last accessed August 21, 2012)

Milesi-Ferretti, Gian Maria, Razin, Assaf, (1996). *Current-Account Sustainability* (Princeton Studies in International Economics No 81), International Finance Section, Princeton University., 86p.
http://www.princeton.edu/~ies/IES_Studies/S81.pdf (last accessed: August 21, 2012)

The International Bank for Reconstruction and Development/The World Bank, (2012). *Global Economic Prospects: Managing Growth in a Volatile World*, Volume 5 (June 2012) World Bank, Washington DC: United States.
http://siteresources.worldbank.org/INTPROSPECTS/Resources/334934-1322593305595/8287139-1339427993716/GEPJune2012_Full_Report.pdf (last accessed: August 21, 2012)

International Monetary Fund, (2012). *World Economic Outlook: Coping with High Debt and Sluggish Growth,* October, IMF, Washington D.C: Unites States, 229p
http://www.imf.org/external/pubs/ft/weo/2012/02/pdf/text.pdf, (last accessed: October, 2012)

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, (2011թ.) «Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության բնագավառի վերլուծություն՝ 2010թ.» Երևան, 14էջ:
http://www.mineconomy.am/up/files/210_zbosashrjutyun_verlucutyun-168.pdf (վերջին այցելություն՝ 2012 թ. օգոստոսի 19)

World Travel & Tourism Organization (2012) *Travel & Tourism Trends and Economic Impact* , January 2012 Monthly Update, http://www.wttc.org/site_media/uploads/downloads/MonthlyUpdate_January_2012final.pdf (last accessed: August 26, 2012)

Ersado, Lire. (2010), "The Global Economic Crisis, Migration, and Remittance Flows to Armenia: Implications for Poverty", Presentation prepared for International Workshop on the Economic and Social Impact of Migration, Remittances, and Diaspora, Yerevan, Armenia, June 24-25.
http://siteresources.worldbank.org/INTECA/Resources/Ersado_Eng.pdf (last accessed: August 28, 2012)

Minasyan Anna, Poghosyan Alina, Hakobyan Tereza, Hancilova Blanka, (2007) LABOR MIGRATION FROM ARMENIA IN 2005-2007: A SURVEY, Yerevan: Asoghik, 64 p. http://www.ast.am/files/Labour%20Migration%202005-2007,%20Eng.pdf (last accessed: August 30, 2012)

International Labour Organization & Advanced Social Technologies, (2008). ARMENIA: MIGRATION AND DEVELOPMENT: Country Study http://www.ast.am/files/Armenia%20-%20Migration%20and%20Development.pdf (last accessed: August 30, 2012)

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն և «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ 2012թ., *Հայաստանի ազգային մրցունակության զեկույց. կառավարման պրակտիկայի բարելավման օրակարգը, 2011/2012*. Երևան, Փրինթինֆո http://www.ev.am/media/documents/ACR/2011-2012/ACR%202011-2012_arm.pdf (վերջին այցելություն՝ 2012 թ. սեպտեմբերի 8)

United Nations Conference on Trade and Development, 2012, World Investment Report 2012: Towards a New Generation of Investment Policies, United Nations Publication:Switzerland http://www.unctad-docs.org/files/UNCTAD-WIR2012-Full-en.pdf (last accessed: Septemmber 8, 2012)

Հայաստանի Հանրապետության Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությանն ուղղված ռազմավարություն, 2011թ. http://www.mineconomy.am/up/files/Razmavarutyun_ardyunaberutyun-65.pdf (վերջին այցելություն՝ 2012 թ. սեպտեմբերի 11)

The International Bank for Reconstruction and Development / The World Bank, (2011). *Doing Business 2012: Doing Business in a More Transparent World*, Washington DC: United States http://www.doingbusiness.org/~/media/FPDKM/Doing%20Business/Documents/Annual-Reports/English/DB12-FullReport.pdf (last accessed: Septemmber 12, 2012)

ADB. (2010). “Global Economic and Financial Crisis Impact on Developing Asia and Immediate Policy Implications”, prepared by the Centennial Group as discussion materials for the “Regional Forum on the Impact of Global Economic and Financial Crisis”, January 14-15 http://www2.adb.org/Documents/events/2010/Global-Economic-Financial-Crisis/report-1.pdf (last accessed: September 24, 2012)

Bain & Company, Inc. and Antwerp World Diamond Centre, (2011). *The Global Diamond Industry: Lifting the Veil of Mystery* http://www.bain.com/Images/PR_BAIN_REPORT_The_global_diamond_industry.pdf (last accessed: September 24, 2012)

ՀՌԿԿ «Կովկասյան Բարոմետր» առցանց տվյալների բազաներ 2009թ., 2010թ., 2011թ. http://www.crrc.am/index.php/lo/14/164

Porter, Michael and Ketels, Christian, (2003). *UK Competitiveness: Moving to the Next Stage*, DTI Economic Paper No 3, London, UK: UK Department of Trade and Industry. http://www.berr.gov.uk/files/file14771.pdf (last accessed: October 30, 2012)

Levi-Faur, David (1998). “The Developmental State: Israel, South Korea, and Taiwan Compared” *Studies in Comparative International Development*, Vol. 33, no. 1, pp.65-93.

# Հավելված 1

## Որոշ մակրոտնտեսական ցուցանիշների նկարագիրը և աղբյուրները

***Ընթացիկ մասնավոր տրանսֆերտներ և գործոնային եկամուտ***
Այստեղ դիտարկվում են՝

- զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների, փոխանցումներ, ներառյալ սահմանային աշխատողների (T1),
- աշխատողների դրամական փոխանցումներ (T2),
- այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտներ (որի գերակշիռ մասը բաժին է ընկնում Սփյուռքից տրանսֆերտներին) (T3):

Որպես գործոնային եկամուտ դիտարկվում են զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների, փոխանցումները, ներառյալ սահմանային աշխատողների: Որպես մասնավոր ընթացիկ տրանսֆերտների խումբ հանդես են գալիս աշխատողների դրամական փոխանցումները և այլ ընթացիկ տրանսֆերտները: Այլ ընթացիկ տրանսֆերտները կարող են ստանալ ինչպես ՀՀ-ում գրանցված ՀԿ-ները, այնպես էլ անհատները օտարերկրյա ռեզիդենտ համարվող քաղաքացիներից, ՀԿ-ներից, ինչպես նաև օտարերկրյա պետական կառույցներից (ՀԿ-ների դեպքում): Տրանսֆերտն են նաև համարվում որոշ կենցաղի համար կարևոր ապրանքներ (դեղորայք, սնունդ, հագուստ, այլուր, ցորեն, բրինձ, և այլն): Մյուս կողմից այդ ոչ ռեզիդենտները կարող են նաև կապիտալ տրանսֆերտներ ուղարկել ՀՀ: Սակայն, քանի որ ՀՀ ԱՎԾ-ն սկսել է այլ հատվածներ ուղարկվող այլ կապիտալ տրանսֆերտները հրապարակել 2004թ. սկսած իսկ միգրանտների կապիտալ տրանսֆերտները մեծ չափերի չեն հասնում այստեղ կապիտալ տրանսֆերտներ չեն դիտարկվում և չեն ներառվել էկոնոմետրիկ մոդելի մեջ: Մյուս կողմից այլ մասնավոր ընթացիկ տրանսֆերտների հիմնական աղբյուրը հանդես է գալիս սփյուռքի ռեզիդենտները (անհատները), որոնք ՀՀ ռեզիդենտներին (հիմնականում անհատներին) ուղարկում են գումար, հագուստ, կոշիկ, դեղորայք պարենային ապրանքներ, այդ իսկ պատճառով զեկույցում հիմնական ուշադրությունը անհատներից տրանսֆերտներն են: Բոլոր արժեքները ԱՄՆ դոլարով են արտահայտված:
*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի առցանց բազա*

***Արտահանման 4 խումբ***
Որպես արտահանման 4 խումբ դիտարկվում են՝

- պատրաստի սննդի արտադրանքը (EXP1),
- հանքահումքային արտադրանքը (EXP2),
- թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրերը (EXP3),
- ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրերը (EXP4):

Այս խմբերի ընտրությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ դրանք նախքան ճգնաժամը և դրանից հետո կազմել են արտահանման մոտ 80%-ը, իսկ 2011թ.՝ մոտ 75%, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2 խումբը՝ հանքահումքային արտադրանքը և ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրերի արտահանման ծավալները էապես կախված էին լինելու համաշխարհային գների տատանումներից: Արժեքները արտահայտված են ԱՄՆ դոլարով:
*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ արտաքին առևտրի տվյալների առցանց բազա և Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի տարբեր տարիների տարբեր ամիսների հրապարակումներ*

***Զբոսաշրջություն (Tourism recipets (TR))***
Օտարերկրյա զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ից գնված ապրանքների կամ իրենց մատուցած ծառայությունների վրա կատարվող ծախսերը ԱՄՆ դոլարով արտահայտված:
*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի առցանց բազա*

*Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (FDI)*
ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալը ԱՄՆ դոլարով արտահայտված:
*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի տարբեր տարիների տարբեր ամիսների հրապարակումներ*

*Համախառն ներքին արդյունք (GDP)*
ՀՀ դրամով արտահայտված իրական ՀՆԱ: Բազիսային տարին 2005թ. է:
*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ Հայաստանի Հանրապետության «Ազգային հաշիվների» վիճակագրական ժողովածուներ: 2005-2011թթ. իրական արժեքները վերցվել են այդ ժողովածուներից, իսկ մնացած եռամսյակների իրական արժեքները, հաշվարկվել են հեղինակի կողմից:*

*Տնային տնտեսությունների վարկեր*
ՀՀ առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրված վարկերը ՀՀ դրամով արտահայտված: Յուրաքանչյուր եռամսյակի փոփոխությունը՝ տվյալ եռամսյակի վերջում գրանցված արժեքից հանած նախորդ եռամսյակի վերջում գրանցած արժեքը հանդես է եկել տվյալ եռամսյակի արժեք:
*Աղբյուր՝ ՀՀ ԿԲ առցանց տվյալների բազա, հեղինակի սեփական հաշվարկ:*

*Մասնավոր ընկերությունների վարկեր*
ՀՀ առևտրային բանկերի կողմից մասնավոր ընկերություններին տրված վարկերը ՀՀ դրամով արտահայտված (դրամով և արտարժույթով տրված վարկերի հանրագումար): Յուրաքանչյուր եռամսյակի փոփոխությունը տվյալ եռամսյակի վերջում գրանցված արժեքից հանած նախորդ եռամսյակի վերջում գրանցած արժեքը հանդես է եկել տվյալ եռամսյակի արժեք:
*Աղբյուր՝ ՀՀ ԿԲ առցանց տվյալների բազա, հեղինակի սեփական հաշվարկ:*

*Ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտներ (CGT)*
Այստեղ դիտարկում են ընթացիկ պետական կառավարման տրանսֆերտները, որի մեջ մտնում են՝ տեխնիկական օգնությունը, ֆինանսական օգնությունը և հումանիտար օգնությունը (դեղորայք, սնունդ, հագուստ, ալյուր, ցորեն, բրինձ, և այլն): Հումանիտար օգնության դիտարկումը պայմանավորված է նրանով, որ դա հնարավորություն է տալիս կառավարությանը մի շարք սոցիալական խնդիրներ լուծել (գումարը 2007-2008թթ. գերազանցել է 60 մլն ԱՄՆ դոլարը): Մյուս կողմից տրանսպորտային միջոցը որպես հումանիտար օգնություն համարվում է պետական կառավարման այլ կապիտալ տրանսֆերտներ: Որպես այլ կապիտալ տրանսֆերտներ նաև համարվում են շենքերը, շինարարությունը: Այս դեպքում հստակ հնարավոր չէ տարանջատել (եռամսյակային կտրվածքով) վճարային հաշվեկշռի պետական կառավարման կապիտալ տրանսֆերտների որ մասն է բաժին ընկնում հումանիտար օգնությանը, իսկ որը ոչ: Մյուս կողմից կապիտալ տրանսֆերտները ունեցել են պիկ՝ 2002-2003թթ., այնուհետև կրճատում և որոշակիորեն կայուն մակարդակ, կտրուկ աճ 2007-2008թթ, և այնուհետ՝ կրճատվելուց հետո աճ 2011թ.: Այդ իսկ պատճառով էկոնոմետրիկ մոդելում և զեկույցում պետական կառավարման այլ կապիտալ տրանսֆերտները չեն ներառված և չեն դիտարկվում: Արժեքները ԱՄՆ դոլարով են արտահայտված:
*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի առցանց բազա*

## Հավելված 2

***Տրանսֆերտների աղբյուր հանդիսացող և այլ երկրների տնտեսական աճի կանխատեսումները***

*Աղյուսակ 1. Կանխատեսվող իրական ՀՆԱ-ի աճի տեմպերը, 2012-2013թթ. (%)*

| Երկիր | 2012 | 2013 |
|---|---|---|
| **ԵՄ** | | |
| Բելգիա | 0 | 0.3 |
| Գերմանիա | 0.9 | 0.9 |
| Նիդերլանդներ | -0.5 | 0.4 |
| Ֆրանսիա | 0.1 | 0.4 |
| Դանիա | 0.5 | 1.2 |
| Մեծ Բրիտանիա | -0.4 | 1.1 |
| Իռլանդիա | 0.4 | 1.4 |
| Հունաստան | -6 | -4.0 |
| Պորտուգալիա | -3.0 | -1.0 |
| Իսպանիա | -1.5 | -1.3 |
| Ավստրիա | 0.9 | 1.1 |
| Ֆինլանդիա | 0.2 | 1.3 |
| Շվեդիա | 1.2 | 2.2 |
| Հունգարիա | -1.0 | 0.8 |
| Կիպրոս | -2.3 | -1.0 |
| Լատվիա | 4.5 | 3.5 |
| Էստոնիա | 2.4 | 3.5 |
| Մալթա | 1.2 | 2 |
| Լեհաստան | 2.4 | 2.1 |
| Սլովակիա | 2.6 | 2.8 |
| Սլովենիա | -2.2 | -0.4 |
| Չեխիա | -1.0 | 0.8 |
| Բուլղարիա | 1 | 1.5 |
| Ռումինիա | 0.9 | 2.5 |
| Խորվաթիա | -1.1 | 1 |
| Նորվեգիա | 3.1 | 2.3 |
| Լիտվա | 2.7 | 3 |
| Շվեցարիա | 0.8 | 1.4 |
| **ԱՊՀ** | | |
| ՌԴ | 3.7 | 3.8 |
| Ուկրաինա | 3 | 3.5 |
| Բելառուս | 4.3 | 3.4 |
| Մոլդովա | 3 | 5 |
| Վրաստան | 6.5 | 5.5 |
| Թուրքմենստան | 8 | 7.7 |
| Ղազախստան | 5.5 | 5.7 |
| Ղրղզստան | 1 | 8.5 |
| Ուզբեկստան | 7.4 | 6.5 |
| Տաջիկստան | 6.8 | 6 |
| **Այլ երկրներ** | | |
| ԱՄՆ | 2.2 | 2.1 |
| Կանադա | 1.9 | 2 |
| Ճապոնիա | 2.2 | 1.2 |
| Չինաստան | 7.8 | 8.2 |
| Ավտրալիա | 3.3 | 3 |
| Արգենտինա | 2.6 | 3.1 |
| Բրազիլիա | 1.5 | 4 |
| Հնդկաստան | 4.9 | 6 |
| Հարավաֆրիկյան հանրապետություն | 2.6 | 3 |
| Հարավային Կորեա | 2.7 | 3.6 |

*Աղբյուր՝ ԱՄՀ, 2012թ.*

## Հավելված 3

*Վիճակագրական հավելված*

Աղյուսակ 1. Տնային տնտեսությունների իրական եկամուտների տեսակները, 2007-2011թթ.

| | Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, միջին ամսական | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 |
| Դրամական եկամուտներ | *20751* | *22962* | *23172* | *24105* | *24260* |
| *այդ թվում՝* | | | | | |
| վարձու աշխատանքից | 11391 | 12385 | 12668 | 12787 | 12862 |
| ինքնազբաղվածությունից | 2134 | 2038 | 1268 | 1675 | 1649 |
| գյուղմթերքի և անասունի վաճառքից | 1510 | 1514 | 1378 | 902 | 1228 |
| Սեփականությունից (վարձակալության վճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ) | 35 | 30 | 21 | 23 | 100 |
| պետական թոշակներից և նպաստներից | 2857 | 4162 | 4640 | 4498 | 4611 |
| տրանսֆերտներից | 2210 | 2301 | 2206 | 3000 | 2927 |
| այլ եկամուտներից | 614 | 532 | 992 | 1219 | 883 |

Աղբյուր՝ ՏՏԿԱՀ 2007-2011թթ., հեղինակի սեփական հաշվարկ, 2005=100

Աղյուսակ 2. ՀՆԱ-ի սպառման կառուցվածքը (ըստ հիմնական ծախսային բաղադրիչների) (տոկոս ընդամենի նկատմամբ) և աճի տեմպերը (%), 2007-2011թթ.,

| | 2007 | | 2008 | | 2009 | | 2010 | | 2011 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | % ՀՆԱ-ի նկատ. | աճի տեմպ | % ՀՆԱ-ի նկատ. | աճի տեմպ | % ՀՆԱ-ի նկատ. | աճի տեմպ | % ՀՆԱ-ի նկատ. | աճի տեմպ | % ՀՆԱ-ի նկատ. | աճի տեմպ |
| **Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)** | 100.0 | 113.7 | 100.0 | 106.9 | 100.0 | 85.9 | 100.0 | 102.2 | 100.0 | 104.7 |
| **Վերջնական սպառման ծախսեր** | 81.8 | 112.3 | 81.8 | 104.5 | 93.7 | 96.0 | 95.1 | 103.9 | 96.6 | 102.6 |
| Տնային տնտեսությունների | 71.5 | 113.2 | 71.4 | 105.4 | 80.2 | 95.5 | 81.8 | 103.8 | 83.2 | 102.4 |
| Տնային տնտես. սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների | 0.1 | 126.2 | 0.1 | 115.2 | 0.2 | 127.7 | 0.2 | 121.1 | 0.4 | 195.7 |
| Պետական հիմնարկների, որոնք բավարարում են | 10.2 | 105.2 | 10.2 | 98.1 | 13.3 | 98.8 | 13.1 | 103.9 | 12.9 | 101.9 |
| բնակչության անհատական պահանջմունքները | 4.3 | 111.1 | 3.9 | 93.4 | 5.3 | 101.2 | 5.2 | 109.3 | 5.2 | 101.9 |
| կոլեկտիվ պահանջմունքները | 5.9 | 101.6 | 6.4 | 101.6 | 8.0 | 97.3 | 7.8 | 100.3 | 7.8 | 101.9 |
| **Համախառն կուտակում** | 37.8 | 119.7 | 40.9 | 112.6 | 34.7 | 69.1 | 32.9 | 100.5 | 27.3 | 94.8 |
| հիմնական միջոցների համախառն կուտակում | 36.9 | 118.2 | 39.8 | 111.9 | 36.4 | 74.6 | 33.4 | 97.1 | 26.1 | 88.3 |
| նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխում | 0.8 | - | 1.1 | - | -1.7 | - | -0.6 | - | 1.2 | - |
| **Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սալդո** | -20.0 | 137.3 | -25.6 | 126.8 | -27.5 | 75.7 | -24.5 | 105.1 | -23.6 | 84.9 |
| արտահանում | 19.2 | 96.5 | 15.0 | 86.9 | 15.5 | 89.6 | 20.8 | 126.5 | 23.8 | 114.7 |
| ներմուծում | 39.2 | 113.0 | 40.7 | 107.3 | 43.0 | 80.8 | 45.3 | 112.8 | 47.4 | 98.6 |
| **Վիճակագրական շեղում** | 0.4 | - | 2.9 | - | -0.8 | - | -3.5 | - | -0.3 | - |

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2012թ.

Աղյուսակ 3. ՀՀ պետական բյուջեի եկամուտները, 2008-2011թթ. (մլն. ՀՀ դրամ)

| *ՀՀ պետական բյուջեի եկամուտներ* | 2008 | | 2009 | | 2010 | | 2011 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | եկամուտ | ՀՆԱ% | եկամուտ | ՀՆԱ% | եկամուտ | ՀՆԱ% | եկամուտ | ՀՆԱ% |
| **Ընդամենը պետական բյուջեի եկամուտներ** | **785355** | **22** | **689995.1** | **22** | **780439.4** | **22.6** | **880851** | **23.3** |
| 1.Հարկեր,տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ | 726095.1 | 20.3 | 625263.1 | 19.9 | 699434.9 | 20.2 | 777409.7 | 20.6 |
| 1.1Հարկեր և տուրքեր | 621093.7 | 17.4 | 522360.0 | 16.6 | 594099.0 | 17.2 | 653960.1 | 17.3 |
| 1.1.1Հարկային եկամուտներ | 598794.3 | 16.8 | 503326.5 | 16 | 574064.4 | 16.6 | 631593.1 | 16.7 |
| *Այդ թվում՝* | | | | | | | | |
| Ավելացված արժեքի հարկ | 318313.0 | 8.9 | 254158.1 | 8.1 | 301724.5 | 8.7 | 328482.8 | 8.7 |
| շահութահարկ | 86212.2 | 2.4 | 80800.5 | 2.6 | 77813.8 | 2.2 | 97842.3 | 2.6 |
| եկամտահարկ | 53748.6 | 1.5 | 60204.7 | 1.9 | 73939.8 | 2.1 | 81210.6 | 2.2 |
| Ակցիզային հարկ | 45878.5 | 1.3 | 42767.1 | 1.4 | 48140.5 | 1.4 | 39404.5 | 1 |
| գույքահարկ | 2.8 | 0 | 1.7 | 0 | 1.4 | 0 | 0.3 | 0 |
| հողի հարկ | 15.6 | 0 | 19.5 | 0 | 10.9 | 0 | 8.2 | 0 |
| մաքսատուրք | 37289.9 | 1 | 25111.3 | 0.8 | 29366.7 | 0.8 | 36289.4 | 1 |
| հաստատագրված վճարներ | 20341.2 | 0.6 | 23815.6 | 0.8 | 21976.4 | 0.6 | 20741.8 | 0.5 |
| բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարներ | 9966.3 | 0.3 | 6120.5 | 0.2 | 9102.5 | 0.3 | 12199.7 | 0.3 |
| պարզեցված հարկ | 6724.1 | 0.2 | 330.4 | 0 | -50.4 | 0 | -50 | 0 |
| այլ հարկային եկամուտներ | 20302.1 | 0.6 | 9997.2 | 0.3 | 12038.3 | 0.3 | 15463.5 | 0.4 |
| 1.1.2. Պետական տուրք | 22299.4 | 0.6 | 19033.5 | 0.6 | 20034.6 | 0.6 | 22367.0 | 0.6 |
| 1.2. Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ | 105001.4 | 2.9 | 102903.1 | 3.3 | 105335.9 | 3 | 123449.6 | 3.3 |
| 2. Պաշտոնական դրամաշնորհներ | 14975.9 | 0.4 | 21699.6 | 0.7 | 30588.8 | 0.9 | 59416.0 | 1.6 |
| 3.Այլ եկամուտներ | 44284.1 | 1.2 | 43032.4 | 1.4 | 50415.7 | 1.5 | 44025.3 | 1.2 |

*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն», 2012թ.*

Աղյուսակ 4. ՀՀ պետական բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման խմբերի, 2008-2011թթ. (մլն. ՀՀ դրամ)

| *ՀՀ պետական բյուջեի ծախսեր* | 2008 | | 2009 | | 2010 | | 2011 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծախս | ՀՆԱ % | Ծախս | ՀՆԱ % | Ծախս | ՀՆԱ % | Ծախս | ՀՆԱ % |
| **Ընդամենը ծախսեր** | **810574.5** | **22.7** | **929108.6** | **29.6** | **954316.5** | **27.6** | **986509.2** | **26.1** |
| *այդ թվում՝* | | | | | | | | |
| 01 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 104832.6 | 2.9 | 113006.6 | 3.6 | 143280.5 | 4.1 | 154107.9 | 4.1 |
| 02 Պաշտպանություն | 121159.6 | 3.4 | 130211.5 | 4.1 | 147555.9 | 4.3 | 145491 | 3.9 |
| 03 Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 61706.5 | 1.7 | 69463.8 | 2.2 | 67443.1 | 1.9 | 72517.1 | 1.9 |
| 04 Տնտեսական հարաբերություններ | 89445.6 | 2.5 | 133835.1 | 4.3 | 112451.7 | 3.2 | 83955.7 | 2.2 |
| 05 Շրջակա միջավայրի պաշտպանություն | 3011.5 | 0.1 | 3913.3 | 0.1 | 4926.1 | 0.1 | 6630.4 | 0.2 |
| 06 Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ | 14039.4 | 0.4 | 21105.9 | 0.7 | 42817.9 | 1.2 | 43848.5 | 1.2 |
| 07 Առողջապահություն | 49972.5 | 1.4 | 56168.8 | 1.8 | 56130.8 | 1.6 | 63312.4 | 1.7 |
| 08 Հանգիստ, մշակույթ և կրոն | 16021.9 | 0.4 | 16297.7 | 0.5 | 16102.6 | 0.5 | 17581.4 | 0.5 |
| 09 Կրթություն | 103530.8 | 2.9 | 107529 | 3.4 | 97790.1 | 2.8 | 106085 | 2.8 |
| 10 Սոցիալական պաշտպանություն | 212559.1 | 6 | 243634.1 | 7.8 | 244168.5 | 7.1 | 256176.3 | 6.8 |
| 11 Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 34295.1 | 1 | 33943 | 1.1 | 21649.4 | 0.6 | 36803.5 | 1 |

*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն», 2012թ.*

**Աղյուսակ 5.** ՀՀ արտաքին առևտուրն ըստ ապրանքային խմբերի 2008-2011 թթ. (հազ. ԱՄՆ դոլար)

| Խումբ | ԱՐՏԱՀԱՆՈՒՄ | | | | ՆԵՐՄՈՒԾՈՒՄ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2008 | 2009 | 2010 | 2011 |
| Ընդամենը | 1057161.4 | 710157.5 | 1041056.6 | 1334338.8 | 4426129.3 | 3321133.9 | 3748953.5 | 4145332.0 |
| Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 9338.0 | 15298.0 | 23552.1 | 30037.5 | 125711.5 | 97487.1 | 101448.5 | 133285.6 |
| Բուսական ծագման արտադրանք | 22335.5 | 19895.4 | 15845.0 | 23206.6 | 233276.9 | 198026.7 | 214070.2 | 242047.4 |
| Յուղեր և ճարպեր | 47.9 | 2.9 | 29.1 | 25.3 | 52825.6 | 51777.2 | 49217.1 | 57947.2 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 167911.7 | 99570.2 | 131065.6 | 183830.9 | 348737.9 | 264659.0 | 308810.4 | 347947.1 |
| Հանքահումքային մթերք | 172516.0 | 145624.8 | 306752.7 | 404126.3 | 664546.9 | 540570.9 | 666021.6 | 821555.9 |
| Քիմիական արտադրության ապրանքներ | 16305.7 | 6409.4 | 9137.8 | 11140.0 | 270356.5 | 252864.1 | 273514.6 | 302830.9 |
| Պլաստմասսա, կաուչուկ, ռետին | 19161.7 | 10179.5 | 15484.5 | 8685.2 | 186569.0 | 130050.8 | 148135.8 | 172818.0 |
| Կաշի և դրանից իրեր | 3171.8 | 1802.0 | 2242.5 | 3446.8 | 9482.5 | 7829.6 | 9168.2 | 12069.8 |
| Փայտ և փայտյա իրեր | 817.7 | 360.3 | 710.8 | 634.6 | 68902.7 | 50962.4 | 56545.5 | 68439.9 |
| Թուղթ և թղթյա իրեր | 2527.6 | 1251.3 | 706.5 | 729.3 | 80548.4 | 67266.4 | 68348.7 | 80087.3 |
| Մանածագործական իրեր | 40185.6 | 14825.7 | 6751.2 | 8347.3 | 152709.4 | 92317.2 | 122558.5 | 160318.6 |
| Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկ | 1371.7 | 907.2 | 1423.4 | 1470.7 | 30113.4 | 21848.9 | 31994.2 | 33609.4 |
| Իրեր քարից, գիպսից, ցեմենտից | 14269.4 | 13523.2 | 16108.3 | 16890.8 | 114589.2 | 74511.7 | 82482.9 | 86857.0 |
| Թանկարժեք քարեր և մետաղներ | 173088.3 | 105075.1 | 134049.4 | 196441.4 | 304641.8 | 107341.5 | 158867.6 | 214869.6 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից | 346792.7 | 231152.0 | 332428.9 | 364728.5 | 418644.5 | 375577.2 | 368197.7 | 326172.6 |
| Մեքենաներ և սարքավորումներ | 40344.5 | 21011.0 | 30078.2 | 33469.9 | 644965.3 | 628683.6 | 651810.4 | 566524.1 |
| Տրանսպորտային միջոցներ | 6482.5 | 13075.8 | 4999.2 | 30078.1 | 574421.9 | 241565.9 | 297132.6 | 370252.8 |
| Սարքեր և ապարատներ | 17674.3 | 7888.3 | 7344.5 | 14840.7 | 58128.9 | 54565.6 | 69638.8 | 58892.0 |
| Ընդամենը տարբեր արդյու-նաբերական ապրանքներ | 1479.6 | 1419.3 | 1623.0 | 1368.9 | 85081.4 | 62300.6 | 69542.2 | 87748.5 |
| Արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր | 1339.1 | 886.1 | 723.8 | 840.2 | 1875.6 | 927.4 | 1448.2 | 1058.3 |

*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման)», 2012թ.*

## Զեկույցում օգտագործված հապավումներ

| | |
|---|---|
| ՀՆԱ | Համախառն ներքին արդյունք |
| ՀՖՃ | Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ |
| ՕՈՒՆ | Օտարերկրյա ուղղակի ներդրումներ |
| ՀՊՃ | Համաշխարհային պարենային ճգնաժամ |
| ՍԳԻ | Սպառողական գների ինդեքս |
| ՈՒՎԿ | Ունիվերսալ վարկային կազմակերպություն |
| UNWFP (ՄԱԿՀՊԾ) | ՄԱԿ-ի Համաշխարհային պարենի ծրագիր |
| ՄԱԿ | Միացյալ Ազգերի Կազմակերպություն |
| ՀԲ | Համաշխարհային Բանկ |
| ՀՀԿԲ | ՀՀ կենտրոնական բանկ |
| ԱՄՀ | Արժույթի միջազգային հիմնադրամ |
| տ/տ | Տնային տնտեսություն |
| ՓՄՁ | Փոքր և միջին ձեռնարկություն |
| Ա/Ձ | Անհատ ձեռներեց |
| ՀՀԱՎԾ | ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն |
| VTCA | Vulnerability-to-crisis attributes |
| ODA | Official Development Assistance |
| UN-OHRLLS | Office of the High Representative for the Least Developed Countries Landlocked Developing Countries and Small Island Developing States |
| ODI | Overseas Development Institute |
| WTTC | World Travel&Tourism Council |
| B&B | Bread&breakfast |
| ԱUS | «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ |
| ԱՄԿ | Աշխատանքի միջազգային կազմակերպություն |
| ՀՊՃ | Համաշխարհային պարենային ճգնաժամ |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| UNCTAD | United Nations Conference on Trade and Development |
| ԱԱԿ | Անդրազգային կորպորացիա |
| ԱԶԲ | Ասիական զարգացման բանկ |
| AWDC | Antwerp World Diamond Centre private foundation |
| OLS | Ordinary Least Squares |